

575.4

F-19

Թիֆլիսի Հայոց Հրատ. Ընկերութիւն:

№ 80

5674

ԱՐՄԵՆԻԱ ԲՈԼԵՎԵԱՆ

ԳԱՐՎԻԿԻՆԻ ԶՄ

(Ն կ ա բ ն ե ր ո վ)



ԹԻՖԼԻՍ

Տպ. Ա. Շարամեհ || Տպ. Մ. Շարադզե

1894

Հնկերութեան հետեւեալ հրատարակութիւնները վաճառում են բնկերութեան գրասենեակոմ եւ Կենդրոնական գրավաճառանցում:

- | | | | |
|----|---|---|------------------------|
| 1 | Թաւամազ մեղու | { | թ. օր. Ն. (սպառ.) — 40 |
| 2 | Կարմիր լապտեր | { | Տէր-Մարկոսեան . — 30 |
| 3 | Մանկական երգեր, Գամառ-Քաթիսա | . | — 15 |
| 4 | Թովմաս եղբօր տնակը, թարգ. յօր. Ն. Տէր — 45 | . | Մարկոսեան — 60 |
| 5 | Մորեխ և նրա ջնջելու հնարները. | . | — 10 |
| 6 | Նեղ և խոնաւ բնակարանների մասին | . | — 10 |
| 7 | Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց | . | — 80 |
| 8 | Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսութեան, Մօրիս Բօքի | . | — 50 |
| 9 | Գամառ-Քաթիպայի բանաստ. (սպառ.) | . | — 50 |
| 10 | Ռոբինզոնի պատմութիւն | . | — 60 |
| 11 | Ուխտաւորք, գործ Վիլէլմ Հառուֆի | . | — 75 |
| 12 | Գառնուկ և Լուսատափկ, Նմիգտի | . | — 25 |
| 13 | Սայեաթ-Նովա, ազգային երգիչ | . | — 5 |
| 14 | Ծննդեան պատմութիւնը | . | — 10 |
| 15 | Ազաթանգեղեայ պատմութիւն, | . | — 1 — |
| 16 | Գլուղկան խալիքայ, Ա. Արարատեան | . | — 50 |
| 17 | Վանայ Սազ, Դ. Ենքենցի | . | — 75 |
| 18 | Փնջիկ, գրեց Աղէքս. Արարատեան | . | — 20 |
| 19 | Նամուս, վէպ, գրեց Ենքվանզադէ | . | — 1 — |
| 20 | Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմ. տիեզերական, 8-րդ տպագ. | . | — 2 — |
| 21 | Թիֆլիսեցւոյ մտաւոր | { | գ. Տէր Աղէք. 1 50 |
| | կեանքը . | . | |
| | Նոյնը բնտիր թղթի վրայ | { | սանդրեան 2 — |
| 22 | Ղենդ պատմագիր | . | — 2 — |
| 23 | Սրբական պատմութիւն հին ուխտի, Սահականայ Սահակեանի-(սպառ.) | . | — |

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

№ 80

ԱՐՄԱՆԻ ԲԱԼՈՂԵԱՆ

392/սաօթ
378/2

Համրամատ քիմիական դրաստիճան

(Նկարներով)

2010

ԹԻՖԼԻՍ

Տպարան Ա. Շարաձէի || Տիպոգր. Մ. Շարաձե

1894



2002

0000000000000000

Дозволено цензурою 28-го Іюля 1894 года, г. Тифлісъ

5005

፭፻፷፯

Առաջարկն : 5

I Դարվինի կեանքը. 9

Տաղանդն ընդունակ է ժառանգաբար փոխտելք։ Դարվինի պապը եւ հայրը։ Դարվինի ծննդը։ Նրա ուսումնաբան մտնելը։ Դարվինն ամենավատ աշակերտներից մէկն էր։ Նրա սէրը դէպի բնութիւն։ Դարվինը գնում է Ելինբորդը բժշկականութիւն ուսումնասիրելու համար։ Կեմբրիջի համալսարանը։ Դարվինի ճանապարհորդութիւնը մեծ նշանակութիւն ունեցաւ։ Դարվինի ամուսնանալը։ Դարվինի առաջի գիտութը։ Ի՞նչ էր ամենից շատ հետաքրքրում նրան։ «Տեսակների ծագումը» մեծ ազդուկ բարձրացրեց Աւրոպայում։ Նրա միւս նշանաւոր գրուածքները։ Դարվինը մեծ էր ոչ միայն խելքով, այլ եւ բարոյականութեամբ։ Դարվինի հիւանդութիւնը եւ մահը։ Դաստին եւ Դիետոն։ Դարվինի թարումը։

II Տեսակների փոփոխականութիւնը. 41

Կենդանիների եւ բոյսերի զասակարգութիւնը:
Տեսակների ծագումը: Տեսակների անփոփխականութեան թէրիան—Լյննչ եւ Փօրժ Վիւլիէն: Տեսակների փոփխականութեան թէրիան—Բիւֆֆօն, Փօֆֆրուա Սենտ Իլէր, Էքրազմ Դարվին եւ Լամարկ:

Զարլզ Դարվինը վերջնականապէս ապացուցեց տեսակների փոփոխականութիւնը: Ամեն մի մեծ գիտա արդիւնք չէ միմիայն մի զիտնականի աշխատանքների:	
III Արուեստական ընտրութիւն	64
Ի՞նչ է առաջադիմութեան պատմաբ: Եր. Դարվինի եւ Լամարկի կարծիքը: Անհատական փոփոխականութիւնը: Արուեստական ընտրութիւնը: Ժառանգականութիւնը: Անփոփումը:	
IV Բնական ընտրութիւն	79
Սայլթուար Թէորիան: Գոյութեան կոր: Բնական ընտրութիւն:	
V Բնական ընտրութեան հետեւանք-ները	93
Նոր, կատարելազորդուած տեսակների ծագումը: Հին տեսակների ոչչանալը: Օրգանիզմների յարմարացումը շրջապատող պայմաններին: Միմիտիզմ:	
VI Սեռային ընտրութիւն	112
Որձերի եւ էգերի թիւը: Բազմականութիւն: Որձերի մրցումը կաթնասունների շրջանում: Նոյնը թուզունների շրջանում: Սեռային ընտրութիւնը կատարելազործում է զվարապէս մի սեռի անհատներին	
VII Նոր փաստեր	122
Երկրաբանական փաստեր: Անառոմիական փաստեր: „Անպէտք“ օրգաններ:	
VIII Ամիրոփումը: Վերջարան	134

ԱՌԱՋԱՐԱԿԱՆ

Ով չի լսել Զարլզ Դարվինի անունը: Կարծեւ չափազանցութիւն չի լինել, եթէ ասեմ, որ Դարվինը յայտնի է ոչ միայն մասնագէտ-ընագէտներին, այլ եւ ամեն մի քիչ թէ շատ զարգացած հասարակութեան բոլոր խաւերին: Դժուար է գտնել մի ուրիշ գիտնական, որը լինէր այնքան հանրածանօթ, որքան Դարվինը: Նրա մասին սիրում են խօսել հասարակութեան ամենակըթուած անդամներից սկսած մինչեւ ամենալեռջին թերուաը:

Սակայն հարկաւոր է ամելացնել, որ ինչքան շատ է հոշակուած Դարվինի անունը, այնքան տարաբաղդաբար քիչ են հակացուած նրա մնոքերը: Իրաւ, ոչ միայն տգէտները, այլ նոյն իսկ շատ ինտելիգենտներ, ունեն իսկապէս ողորմելի զաղափար Դարվինի արած գործի մասին: Եւ դա ցաւիլ է, որովհետեւ Դարվինը պատկանում

Է այն գիտնականների թուին, որոնց գործերն արժանի են խորին ուշադրութեան ամեն մի փոքր ՚ի շատ է զարգացած անհատի կողմից:

Դարվինի քարոզած մոքերը դառել են նորագոյն բնագիտութեան հոգին: Խլեցէք բնագիտութիւնից դարվինիզմը եւ բնագիտութիւնն իսկոյն կը դառնայ մի կոյտ չոր ու ցամաք փաստերի՝ առանց ներքին կապի, առանց հոգու . . .

Դրանով դեռ չի սպառում Դարվինի գործունէութեան նշանակութիւնը: Նքա քարոզած մոքերը չեն սահմանափակում բնագիտութեան շրջանով, այլ տարածում են իրանց ազդեցութիւնը նաեւ ուրիշ գիտութիւնների վերայ՝ ամեն տեղ լայն հորիզոններ բանալով կամ նոր լրյա սփոելով . . . Մի խօսքով Դարվինը պատկանում է այն եզակի մարդկանց թուին, որոնց գործերը չեն բաւականանում որեւէ նեղ շրջանում փոփոխութիւն մոցնելով, այլ հիմնովին վերափոխում են մարդկանց աշխարհահայեցողութիւնը:

Իմ նպատակներից դուրս է եղել այս գրուածքում Դարվինի գործունէութեան լիակատար պատկերը տալու. ոքա համար շատ

հատոքներ են հարկաւոր: Իմ ցանկութիւնն եղել է ծանօթացնել ընթերցողին Դարվինի կեանքի եւ հայեացքների միայն ամենազլիաւոր կէտերի հետ:

ՀԵՂԻՆԱԿ

ԴԱՐՎԻՆԻ ԿԵԱՆՔԸ

Տաղանդը ընդունակ է ժառանգաբար փոխուելու։ Դարվինի պատը եւ հայրը։ Դարվինի ծնունդը։ Նրա ուսումնարան մտնելը։ Դարվինը ամենավատ աշակերտներից մէկն էր։ Նրա սէրը դէպի բնութիւն։ Դարվինը գնում է կեղինքուրդ բժշկականութիւն ուսումնասիրելու համար։ Կեմբրիջի համալսարանը։ Դարվինի ճանապարհորդութիւնը մեծ նշանակութիւն ունեցաւ՝ պատրաստելով նրան փայլուն գործունէութեան համար։ Դարվինի ամուսնանալը եւ Գուն փոխուելը բնակութեան համար։ Դարվինի առաջին գիւտերը։ Ի՞նչ էր ամենից շատ հետաքրքրում նրան։ «Տեսակների ծագումը» մեծ աղմուկ բարձրացրեց Եւրոպայում։ Նրա միւս նշանաւոր գրուածքները։ Դարվինը մեծ էր ոչ միայն խելքով, այլ եւ բարյականութեամբ։ Դարվինի հիւանդութիւնը եւ մահը։ Դարվին եւ Նիւտոն։ Դարվինի թաղումը։

Վերջին ժամանակներս մի քանի գիտնականների գլխում լղացաւ մի հետաքրքիր միտք—ուսումնասիրել այն հարցը, թէ ինչ պիսի նախահայրեր են ունեցել հանճարեղ

մարդիկ։ Այդ հարցով մանաւանդ շատ զբացուեց անգլիական գիտնական Ֆ. Գալտօնը։

Ո՞րպիսի ազգեր*) են տալիս ամենից շատ տաղանդներ. նրանք, որոնք շատ տարիների ընթացքում չեն արտադրել նշանաւոր, իրանց խելքով աչքի ընկնող անհատներ, թէ ընդհակառակը հանճարաւոր մարդիկ ծնւում են այնպիսի ընտանիքներից, որոնք արդէն արտադրել են մի շարք քիչ թէ շատ տաղանդաւոր մարդկանց։

Ահա այն հարցը, որով զբազուեց Գալտօնը։ Նա ձեռք բերեց բազմաթիւ հանճարաւոր մարդկանց ազգակցական ցուցակները և ծանօթացաւ նրանց նախահայրերի կեանքի և գործունէութեան հետ։

Հարցը հիմնովին ուսումնասիրելուց յետու Գալտօնը եկաւ այն եզրակացութեան, որ հանճարաւոր մարդիկ ծնւում են տաղանդաւոր ընտանիքներից, տաղանդաւոր ազգերից, այսինքն այնպիսի ընտանիքներից, որոնք արդէն արտադրել են մի շարք տաղանդաւոր մարդկանց։

Օրինակ հռչակաւոր երաժիշտ Փելիքս

*) „Ազգ“ այսաեղ գործ է ածւում „родъ“ կամ „ֆамилія“ խոսքերի նշանակութեամբ։

Մենդելսօնի ընտանիքը յալտնի է մի քանի տաղանդաւոր ներկայացուցիչներով, որոնցից ամենանշանաւորը՝ Ֆելիքսից յետոյ՝ Մովսէս Մենդելսօնն էր։ Այդ վերջինը հանճարեղ Ֆելիքս Մենդելսօնի պապն էր և յայտնի էր իրեւ նշանաւոր փելիսոփայ։

Բերնուլին, որը հանճարեղ մաթեմատիկոս էր, ունէր մի շարք նշանաւոր նախահայրեր, որոնք նոյնպէս յայտնի մաթեմատիկոսներ էին։

Յայտնի Բախի ընտանիքը տուեց մի շարք շատ տաղանդաւոր երաժիշտներ...

Ալդամսով պարզ է, որ տաղանդը ընդունակ է ժառանգաբար փոխուելու այնպէս, ինչպէս փոխում են ժառանգաբար երեսի գծերը, զանազան հիւանդութիւնները և այլն։ Յայտնի է, որ յաճախ մի որ և է յատկութիւն ժառանգաբար փոխում է ոչ թէ ուղղակի հայրերից որդիներին, այլ հայրերից—թոռներին, ծոռներին։ Օրինակ շատ մարդիկ իրանց երեսի գծերով կամ թէ բնաւորութեամբ նման են լինում ոչ թէ իրանց հայրերին կամ մայրերին, այլ իրանց պապերին, քեռիներին կամ էլի աւելի հեռաւոր բարեկամներին։

Նոյնը նկատում է և տաղանդի վերաբերմամբ. յաճախ տաղանդաւոր մարդը ու-

Նենում է շատ հասարակ որդիք, իսկ վերջինները տալիս են տաղանդաւոր սերունդներ։ Ուրեմն տաղանդը մի որ և է ազգումընտանիքում անհետանում է ու նորից երեւում. մի շարք տաղանդաւոր անհատներին հետեւում են անտաղանդ սերունդներ, որոնցից նորից ծնւում են տաղանդաւոր մարդիկ և այլն։

Դարվինի ընտանիքը պարզ ապացուց է այդ դատողութիւնների։ Մինչև Զարլզ Դարվինի երեսն գալը Դարվինների ազգը արդէն լայտնի էր հասարակութեան մէջ շնորհիւ իր տաղանդաւոր ներկայացուցիչների, որոնցից ամենաերեսելին Երազմ Դարվինն էր։ Խօսելով Երազմ Դարվինի մասին՝ երեսելի գիտնական Գրանտ Սլենը աւելացնում է. «նա (Երազմը) խորին զգուանքով էր վերաբերւում գէպի ամեն տեսակ նախապաշարմունքներն ու թուլութիւնները և անհամեմատ աւելի բարձր էր իր դարու մարդկանցից՝ թէ իր հայեացքների լայնութեամբ և թէ մտքերի ինքնուրոյնութեամբ։ Վախկոտ և ինքնահաւան XNIII-րդ դարը՝ թէե ընդունում էր, որ նա շատ տաղանդաւոր մարդ է, բայց միևնույն ժամանակ համարում էր նրան վտանգաւոր նրա դաղափարների համար»։

Զարմանալի է, որ Երազմ Դարվինը իր գրուածքներում սիրում էր խօսել նոյն հարցերի մասին, որոնց յետոյ փալուն կերպով վճռեց նրա հոչակաւոր թոռը—Զարլզ Դարվինը։ Երազմ Դարվինի գրուածքների մէջ ամենագլխաւորը «Զօօնոմիան» է, որը պարունակում է իւր մէջ շատ ճիշտողութիւններ և սուր նկատողութիւններ՝ վերաբերեալ կենդանիների կեանքի երեսութներին։ Սակայն պէտք է աւելացնեմ, որ նրա ճիշտ և փալուն նկատողութիւնները համեմուած են սրխալ և ֆանտաստիկական բացատրութիւններով, որոնք սաստիկ նսեմացնում են նրա գրուածքների արժէքը։

Մի թոյլ կողմ էլ ունէր Երազմ Դարվինը. նա սիրում էր յաճախ իր մտքերը յայտնել փքուն և անճաշակ ոտանաւորների ձեռվ։ Նրա մտքերի մասին գաղափար տալու համար բերեմ նրա մի ոտանաւորի թարգմանութիւնը։ Ահա ինչպէս բանաստեղծօրէն է նկարագրում Երազմ Դարվինը կենդանի արարածների ծագումը երկրագնտի վերայ։

«Օրգանական կեանքը ծագել է անհունալիքների տակ և զարգացել օվկիանոսի (մէջ գտնուող) ալլերում (պեղերա)։ Մանր՝ հազիւնկատելի՝ սկզբնական էակները սողում էին

ցեխի մէջ կամ լողում ջրերի փրփուրներում։ Առաջացան շատ ու շատ սերունդներ, առաջացան նոր ընդունակութիւններ և աւելի զօրեղ անդամներ։ Նրանցից գոյացան բոլորի անթիւ տեսակները և բոլոր կենդանիներուն...»*);

Փայլուն, երևելի մտքեր! գիտէր արդեօք
Երազմ Դարվինը, որ այդ մտքերը ժամանա-
կով հիմք պէտք է դառնալին բնագէտների
աշխարհահայեցաղութեանը։ Դոցանից ծնուեց
ամենաերեսելի վարդապետութիւններից մէկը
— Դարվինիզմը։ Այդ է պատճառը, որ Դրանտ
Սլենը Երազմ Դարվինի վերոլիշեալ մտքերն
անուանում է «սաղմ» Դարվինիզմի։

Երազմ Դարվինը իր ընդունակութիւն-
ներով սաստիկ գերազանցում էր իր որդուն
— Ուոբերտ Ուօրինգ Դարվինին, որը Զարլզ
Դարվինի հայրն էր: Դա մի համեստ և բարի
քժիշկ էր Նրիւսբիւրիում, որի ժողովուրդը
սաստիկ սիրում ու յարգում էր նրան: Ուո-
բերտ Ուօրինգ Դարվինը ամուսնացաւ բաղ-
դաւորապէս Սուսան Վեջվուդի հետ: Ասում
եմ «բաղդաւորապէս», որովհետև Վեջվուդնե-
րը նոյնպէս կազմում էին մի վերին աստի-
ճանի տաղանդաւոր ընտանիք: Քանի քանի

^{*)} **Stu** Грантъ Алленъ—Чарльзъ Дарвинъ,
59 31:

ნგანათირ მარტბეჭი ჩენ აռაღაցელ აიტ ხელ-
ცელს ენთანისტებენ: იყ დასტ, დოკეტ მოქმედო
მოქმედებულ და განისაზღვრებოდა ასახული, იმ-
აქციაში ჩერ ვარედი, ხელს ნა ამისასანავარ მა-
რტბეჭი ს ანგანა ენთანისტებები აღდეს ჩემ:

Զարլզ Դարվինը ծնուեց Նիւևբրիում
1809 թուին, 12-ին փետրուարի: Նիւևբրիում
մի լեռ ընկած գաւառական քաղաք էր: Ահա
այդ քաղաքումն անց կացըեց Զարլզ Դարվի-
նը իր կեանքի սկզբի տարիները:

Երբ նա մի փոքր հասակն առաւ, հալը
տուեց նրան ինութերի ուսումնարանը։ Սա-
կայն ահա մի վերին աստիճան զարմանալի
երևոյթ։ Այն երեխան, որին վիճակուած էր
ապագայում ահագին յեղափոխութիւն մտցնել
բնագիտութեան մէջ, ոչ միայն չը կարողա-
ցաւ առաջնակարգ տեղը բռնել ուսումնարա-
նում, այլ և հազիւ հազ կարողանում էր
քաշշառուել իր ընկերների ետևից։ Զարդ Դար-
վինը ուսումնարանի ամենավատ աշակերտ-
ներից մէկն էր!...

Այդ գեպքը միշեցնում է մեզ Ա. Հովհաննեսին, կոմս Լ. Տօլստոյին, Պուշկինին, ու բոնք կարգալու ժամանակ նոյնպէս համար-

ւում էին ամենաթույլ աշակերտների շարքում:

Միւս կղմից Դարվինը սաստիկ սիրում
էր թափառել ուսումնարանից գուրս, որին
ատելով ատում էր: Նա ուսում էր ձուկը,
թռչուններ, հաւաքում էր միջատներ, բոյ-
սեր, հանքեր և նրանցից ժողովածուներ կազ-
մում:

Թափառելու սէրը մի կողմից, ուսումնաբանականութեած ստացած վատ թուանշանները միւս կողմից սաստիկ զարագնում էին նույ Հօռու:

—«Ուսորդութիւնից, շների հետ քաշ-
քըշուելուց ու մկներ բռնելուց զատ՝ քեզ ոչ
մի բան չի հետաքրքրում.—դու կը խայտա-
ռակես թէ քեզ և թէ քո ամբողջ ընտանիքը»
—ասեց մի անգամ Ուռեւերտ Ուօրինգ Դար-
վինը իր որդուն:


Ի՞նչ ասել կուզէ, որ նրա մարգարէութիւնը չիրագործուեց. Զարլզը ոչ միայն չը խայտառակեց իր ընտանիքի անունը, այլ և ամբողջ Անգլիայի փառք ու պարծանքը դառաւ: Սակայն դրա մասին յետու է լինելու խօսքը:

Զարլզ Թարվինի անաջողութիւնը ուսումնարանում նրանով է բացատրվում, որ Բեօտէրի ուսումնարանում ամենագլխաւոր տեղը

բոնում էր հին լեզուների՝ լատիներէնի և յունարէնի դասատութիւնը, իսկ Դարվինը տանել չէր կարող այդ լեզուները։ Նրան հետաքրքրում էին բազմատեսակ թուչունները իրանց սովորութիւններով, գետերը իրանց ըլնակիչներով, բոյսերը. — մի խօսքով նրան ձգում էր դէպի իրան միշտ եռող, միշտ կենդանի բնութիւնը իր հրաշալիքներով, իսկ ուսումնաբանում նրանից պահանջում էին լատիներէնի քերականութեան նրբութիւնները!..

Տասնութեց տարեկան հասակումն էր Զարլ-
զը, երբ նրա հալրը վճռեց ուղարկել նրան
Եղինըուրգի Համալսարանը բժշկականութիւն
ուսումնասիրելու համար։ Սակայն այդտեղ էլ
մեծ առաջադիմութիւն չարեց նա. Եղին-
քուրգի Համալսարանի պրօֆեսօրներին և նը-
րանց դասախոսութիւնները նա գտնում էր
չափազանց անհետաքրքիր և ձանձրալի։

Եղինբուրգում նա ծանօթացաւ մի քա-
նի նշանաւոր բնագէտների հետ, որոնք ազ-
դեցութիւն ունեցան նրա վերայ: Բացի գրա-
նից նա սկսեց հետաքրքրուել Եղինբուրգի
գիտնական ընկերութիւններով, որոնց նիստե-
րը նա ուրախութեամբ յաճախում էր: Սա-
կայն ամենից շատ ժամանակ Եղինբուրգում
նա գործ էր ոնքում էլի նոյն պարապմունք-



ների համար, որոնք սաստիկ զայրացնում էին նրա հօրը Շրիւբիւրիում. նա ժամերով շըր- ջում էր ծովի ափերում, բոնում էր ծովալին կենդանիներին և ուսումնասիրում նրանց:

Տեսնելով, որ իր որդու բժշկական պա- րապմունքներից ոչինչ չի դուրս գալիս՝ Ռո- բերտ Ուօրինգը դուրս բերեց նրան Եղինքուր- գի համալսարանից և ուղարկեց Կեմբրիջի հա- մալսարանը, որպէս զի այնտեղ պատրաստուի ու յետոյ հոգեւորական դառնալ...

Մի խօսքով Զարլզ Դարվինը իր խեղճ հօր գլխին ուղիղ պատուհաս էր գառել!

Հարկաւոր է արդէօք աւելացնել, որ այս անգամ էլ Զարլզը չիրականացրեց հօր յուսե- րը: Զը պէտք է կարծել, որ Զարլզ Դարվինի հայրը մի որ և է անմիտ բռնակալ էր: Ոչ, նա բարի և նոյն իսկ խելօք մարդ էր, բայց ցաւը նրանում էր, որ նա չը կարողացաւ հաս- կանալ իր որդու ձգտումներն այնպէս, ինչ- պէս և շատ ծնողներ չեն կարողանում իր ժամանակին որոշել, հասկանալ իրանց երե- խաների բնաւորութեան հիմնական գծերը:

Կեմբրիջում Զարլզ Դարվինը բազդի բեր- մամբ ծանօթացաւ պրօֆեսօր Գենալօ՛ի հետ, որը ունէր նշանաւոր բուսաբանի հոչակ: Նա մեծ ազդեցութիւն ունէր իւր աշակերտների

վերայ. այդ ազդեցութեանը շուտով ենթալ- կուեց նաև Զարլզ Դարվինը, որը միշտ խոս- տովանում էր այդ բանում: Յետակայ ժամա- նակներում Դարվինը ասում էր, որ նրա ա- մենագլխաւոր ուսուցիչն եղել է Գենսլօն:

Այդ վերջինը յաճախ գիտնական զբոսանք- ներ էր կայացնում իր աշակերտների հետ կամ թէ ժողովներ էր նշանակում իր մօտ: Զարլզ Դարվինը շատ բնագէտների հետ միասին յա- ճախում էր այդ ժողովները, որոնց յետոյ միշտ հիացմունքով էր մտաբերում:

Ինչպէս երեւում էր, պրօֆեսօր Գենս- լօն նկատել էր, որ Զարլզ Դարվինը հասա- րակ ունկնդիրներից չէր, այդ պատճառով էլ նա առանձին ուշագրութիւն էր դարձնում Դարվինի վերալ: Վերջ ՚ի վերջոյ Դարվինը և Գենսլօն սաստիկ բարեկամացան իրար հետ:

Քան երկու տարեկան հասակում Զ- Դարվինը աւարտեց ուսման դասընթացքը Կեմբրիջի համալսարանում և՝ համաձայն իր հօր որոշման՝ պէտք է հոգեւորական դառնար, բայց մի հանգամանք յանկարծ բոլորովին քան- դեց այդ որոշումը...

1831 թուի աշնանը անգլիական կառավարութիւնը պատրաստուել էր ուղարկել մի նաւ հարաւային Ամերիկայի մօտերքը բուն գիտնական նպատակով։ Որոշուած էր ուղարկել «Բիգլ» անունով շոգենաւը նաւապետ Ֆիցրոյի ղեկավարութեամբ։ Ֆիցրոյը, որը մի շատ խելօք ու լուսաւորուած մարդ էր, ցանկացաւ, որ գիտնական արշաւանքին մասնակցէ նաև մի բնագէտ կենդանիների և բոլսերի ժողովածուներ կազմելու համար։

Երբ այդ բանը իմացաւ պրօֆ. Գենսլօն, նա խոկոյն Ֆիցրոյին խորհուրդ տուեց վերցնել իր հետ նորաւարտ Զարլզ Դարվինին։ Ֆիցրոյը այդպէս էլ արեց և «Բիգլ» ճանապարհ ընկաւ...

Ճանապարհորդութիւնը տևեց ամբողջ հինգ տարի և ահագին նշանակութիւն ունեցաւ Դարվինի համար, որը իր աչքերով տեսաւ և ուսումնասիրեց աշխարհիս ամենաշքեղ ֆիօրա ու ֆառւնա*) ունեցող երկիրները՝ այն էլ արևադարձային (тропичесکیй) երկիրները։ Այդ վերջինները՝ գտնուելով հասարակածի շուրջը՝ ունեն վերին աստիճան տաք և խո-

*) «Ֆլորա» կոչում է երկրի բուսականութիւնը, իսկ «ֆառւնա» կենդանիները։

նաւ կլիմայ։ Յայտնի է, որ երկրագնտիս ոչ մի մասը չունի այնպիսի բարձր ջերմութիւն, որպէս հասարակածի շուրջը գտնուող երկիրները։

Եթէ մտաբերենք, որ այդ երկիրներում սարսափելի ջերմութեան հետ միասին լինում է և ահագին խոնաւութիւն, այն ժամանակ մեզ համար հասկանալի կը լինի, թէ ինչ է պատճառը, որ այդ տեղերի բուսականութիւնը ունի արտակարգ շքեղութիւն։

Ճանապարհորդների պատմելով՝ ոչ մի բան իր վսեմութեամբ ու սքանչելիութեամբ չի կարող հաւասարուել արևադարձային անտառի հետ։ Նախ այդ տեղ ալցելուին զարմացնում է բոլսերի մեծութիւնը և բազմատեսակութիւնը։ Հսկայ բոյսերը՝ բուսած իրարից զարմանալի մօտիկ՝ ճնշում են իրար տեղի նեղութեան պատճառով։ Այդ հսկաների վերայ վաթաթուելով բարձրանում են լիան կոչուած «լորուող» (Վայովայօն) բոյսերը և հասնելով նըրանց գագաթին անցնում են հարևան ծառերի վերայ, կազմելով նրանց մէջ տերևներից և ճիւղերից սքանչելի կամարներ և կամուրջներ։ Աւելացրէք դրան գոյնզգոյն ծաղիկների, պըտուղների և տերևների ամբողջ մի ծով—և գագաթային անտառի շքեղութեան մասին։

Լիանները՝ անցնելով մի բոյսից միւսերին՝ թոկերի նման կապկապում են նրանց և այն աստիճան ամուր սեղմում, որ գըժուար է լինում որոշել, թէ այս կամ այն ճիւղը ո՞ր ծառին է պատկանում. այնպէս որ՝ իրար հետ խառնուած և սեղմուած՝ բոյսերի ճիւղերն ու տերեւները կազմում են մի անընդհատ կանաչ կեղեւ, որը այնքան խիտ է, որ արեգակի ոչ մի ճառագայթ չի կարող անցնել նրա միջով ու լուսաւորել գետնի խոնաւ մակերեւոյթը:

Այդ հրաշալի բուսականութիւնը աւելի ևս կենդանութիւնն է ստանում շնորհիւ անթիւ ու բազմատեսակ կենդանիների համերգին: Թուչունների ամենագեղեցիկ ներկայացուցիչները—սիրամարդներն ու թութակներն ապրում են արեւադարձալին անտառներում: Նրանց հետ միասին թռչկոտում են ծառից ծառ բազմատեսակ կապկիների խմբերը: Ծառերի ճիւղերից կախուած վիթխարի օձերը օրորուում են՝ չորս կողմը յառելով իրանց անտառնելի աչքերը: Իսկ արեւադարձալին անտառներում ապրող թիթեռներին ու բգեզներին ոչ թիւ կայ ոչ համար:

Բոյսերի և կենդանիների այս ծալրակեղ ճոխութիւնն է, որ ձգում է գէպի արեւա-

դարձալին երկիրները ոչ միայն նատուրալիստներին, այլ և նրանց, որոնք փոքր ՚ի շատ է սիրում են բնութիւննը:

Սակայն անցնենք Դարվինի ճանապարհորդութեանը:

Գիտնական արշաւանքը, որին մասնակցում էր Զ. Դարվինը, նախ կանգ առաւ Ատլանտեան օվկեանոսի կղզիների վերայ, որոնց ուսումնասիրելուց յետոյ, անցաւ Կօրդիլիէրին, Անդին, Աւստրալիային: ...

Ամեն տեղ Դարվինը խորին ուշադրութեամբ դիտում էր, ուսումնասիրում և ժողովածուներ էր կազմում: Նա նման էր մարդու, որի առաջ յանկարծ բացուել է ահագին գանձ անթիւ թանկագին առարկաներով:

«Հրճուանք խօսքը չափազանց թոյլ է, որպէս զի կարողանալ արտավայտել այն բնագէտի զգացմունքը, որը առաջի անգամ թափառում է Բրազիլիայի անտառում»—ասում է Դարվինը իր իմշատակարանում: Ճանապարհորդութեան ժամանակ իր դիտողութիւնների և տպաւորութիւնների մասին նա բազմաթիւ նըկատողութիւններ էր անում, որոնցից և կազ-

մուեց նրա ճանապարհորդութեան լիշտակարանը:

Այդ վերջինից երեսում է, որ ճանապարհին նկատած ու գիտած երեսութներն արդէն լարուցել էին նրա գլխում այնպիսի մտքեր, որոնք շատ կարեղը էին նրա ապագայ գիւտերի համար: Առհասարակ գիտութեան մէջ ընդհանուր կարծիք է տիրում, որ «Բիգլի» վերայ կատարած ճանապարհորդութիւնը պատրաստեց Դարվինին նրա փայլուն գործունէութեան համար:

«Ճանապարհորդութիւնից յետոյ նրա ձեռքում գտնուում էին այն փաստերը, որոնք անհրաժեշտ էին մեծ բիօլոգիական^{*)} խընդիրներ վճռելու համար, մնում էր միայն նստել իր կարինետում և զբաղուել նրանց մշակումով»—ասում է Գրանտ Ալլենը:

«Մենք համարձակ կարող ենք ասել, աւելացնում է նոյն հեղինակը, որ «Բիգլ» վե-

^{*)} «Բիօլոգիա» խօսքը կազմուած է «բիօս» և «լոգօս» խօսքերից և նշանակում է՝ կենքին վերաբերող գիտութիւն: Բիօլոգիան պարունակում է իւր մէջ կենդանաբանութիւնը, բուսաբանութիւնը, մարդկագութիւնը, ֆիլոլոգիան և բուրր միւս գիտութիւններն, որոնց ուսումնասիրութեան նիւթը կազմում է բոյսերի և կենդանիների կենաքը:

րայ կատարած ճանապարհորդութիւնը վերջինիցով մեզ տուեց «Տեսակների ծագումը» և նրա երեսելի շարունակութիւնը—«Մարդու ծագումը»:^{*)}

1836 թուին Գարվինը «Բիգլի» վերայ վերադարձաւ Անգլիա, բերելով իր հետ կենդանիների և բոյսերի ահագին ժողովածուներ: Այդ վերջիններն այնքան հարուստ և բազմակողմանի էին, որ նրանց դասաւորելու և առհասարակ կարգի բերելու համար Գարվինը հրաւիրեց մի ամբողջ մասնաժողով, կազմուած հոչակաւոր գիտնականներից—Բելլեց, Օուէնից, Գուլդից և միւսներից: Դրանցից ամեն մէկը յանձն էր առել դասաւորելու իրան մասնագիտութեանը վերաբերող մասը. օրինակ Գուլդը դասաւորում էր թուչուններին, Բելլը սողուններին և այլն:

Մի քանի ժամանակից յետոյ Գարվինը հրատարակեց իր երեսելի երկրաբանական (գէօլոգիական) հետազոտութիւնները, որոնք նոյնպէս արդիւնք էին նրա ճանապարհորդութեան ժամանակ արած գիտողութիւնների: Այդ հետամանակ արած գիտողութիւնների:

^{*)} «Տեսակների ծագումը» և ամարդու ծագումը, Գարվինի ամենաերեսելի գրուածքներն են, նրանց մէջ է Գարվինը մեկնել իր հոչակաւոր վարդապետութիւնը:

տազօտութիւններն այնքան նշանաւոր էին, որ իսկոյն գըաւեցին գիտնականների ուշադրութիւնը Դարվինի վերայ: Նոյն իսկ «Երկրաբանութեան հարը»—Զարլզ Լեաելը հիացել էր նրա հետազօտութիւններից, որոնց շնորհիւ Դարվինը շուտով ընթրուեց քարտուղար երկրաբանական ընկերութեան:

1839 թուին Դարվինը ամուսնացաւ էմմա Վեջվուդի հետ, իսկ 1842 թուին թողեց Լօնդոնը և տեղափոխուեց Լօնդոնից ոչ հեռու գտնուող Թօունը, ուր և ապրեց մինչև իր կեանքի վերջը: Հարկաւոր է նկատել, որ Զարլզ Դարվինը բաւական խոշոր ժառանգութիւն էր ստացել իր հօրից, այդ պատճառով ազատ էր բազդաւորապէս «օրվալ հաց» հայթհայթելու ձնշող մտքերից:

Թօունում նրա կեանքը իր միակերպութեամբ և կանոնաւորութեամբ նման էր մեքենայի: Դարվինը այնպէս էր գասաւորել իր ժամերը, որ ոչ մի րոպէ անօգուտ չը կորչի. Նա կամ զբաղւում էր իր հետազօտութիւնները մշակելով կամ շարունակում ձեռնարկած անթիւ փորձերը:

Իր կեանքում Դարվինը հսկայական գործեր կատարեց ոչ միայն այն պատճառով, որ արտակարգ ընդունակութիւններ ունէր, այլ

և շնորհիւ իր զարմանալի աշխատասիրութեանը: Նրա տոկունութեանը, համբերութեանը և աշխատասիրութեանը չափ ու սահման չը կար. օրինակ Թօունում ձեռնարկած փորձերից մէկը շարունակում էր 30 տարի!..

Զարլզ Դարվինը երբէք չէր սիրում մի որ և է միտք յալտնել առանց հիմնաւոր կերպով ուսումնասիրելու հետաքրքրող հարցը: Առաջ երկար տարիների ընթացքում նա դիտում էր, փորձում էր, բազմաթիւ փաստեր էր հաւաքում, յետոյ մի քանի տարի մտածում էր այդ փաստերի մասին, ծանր ու բարակ կշռում էր նրանց, ու յետոյ վերջապէս 'ի լոյս ընծայում իր մտքերը:

'Ի դէպ է այստեղ մատնացոյց անել այն սխալ կարծիքի վերայ, որը յաճախ պտտում է հասարակութեան մէջ. շատերը համոզուած են, որ իբր հանճարեղ մարդիկ մեծ գործեր են կատարում միմեայն շնորհիւ իրանց հանճարի, իրանց տաղանդի: Սակայն փաստերը ցոյց են տալիս, որ այդ կարծիքը մասսամբ սխալ է: Ամենաերևելի գիտնականները ըստ մեծի մասին եղել են միւնոյն ժամանակ և զարմանալի գործունեալ, զարմանալի աշխատասիր: Եւ ճշմարիտ ի՞նչ կարող էր անել Զարլզ Դարվինը իր ահազին ընդունակութիւն-

ներով, եթէ նա լինէր աշխատանք չը սիրող մարդ։ Շատ քիչ բան! Նոյնը կարելի է ասել նաև Փօրժ Կիւփիէի, Բօկլի, Լավուազիէի, Լուի Պաստեօրի և միւս երևելի գիտնականների մասին։ Երբ մարդ կարդում է, օրինակ Փօրժ Կիւփիէի գործունէութեան պատմութիւնը, մնում է ապշած ոչ միայն նրա հաճախարեղ մտքերից, այլ և նրա աննկարագրելի մեծ աշխատասիրութիւնից։ Ալդքան էլ աշխատասիրութիւն! ալդքան էլ գործունէութիւն!...

Վերոլիշեալ երկրաբանական հետազօտութիւններից յետոյ Դարվինը հրատարակեց մի քանի գրուածքներ, որոնց մէջ նա հիանալի կերպով պարզում էր երկրաբանութեանը կամ կենդանաբանութեանը վերաբերող այս կամ այն մասնաւոր հարցը։ Սակայն մասնաւոր հարցերի ուսումնասիրութիւնը՝ ինչքան էլ որ հետաքրքիր լինէր՝ չէր կլանում Դարվինի բոլոր ուշադրութիւնը։ Ընդհակառակը Դարվինը կարծես կատարում էր այդ ուսումնասիրութիւնը՝ ի միջի ալլոց։ Նրա մտքերը պտտում էին գլխաւորապէս մի ուրիշ հարցի շուրջը։ Ի՞նչտեղից եւ ի՞նչպէս են գոյացել աշ-

խարհիս ըոլոր ըոյսերը եւ կենդանիները— ահա այն հարցը, որը կաշկանդել էր Դարվինին՝ սկսած դեռ այն ժամանակից, երբ լողում էր «Բիգլ» վերայ օվկիանոսում և թափառում Բրազիլիայի կամ Աւստրալիայի անտառներում։ Արդէն ճանապարհորդութեան ժամանակ նա հաւաքել էր մի քանի թանկագին փաստեր վերաբերեալ իրան հետաքրքրող հարցին։ բայց գոքա բաւական չէին, դեռ հարկաւոր էր ժողովել բազմաթիւ փաստեր և կատարել բազմաթիւ դիտողութիւններ։

Դարվինը ալդպէս էլ արեց։ 1837 թուից՝ այսինքն 28 տարեկան հասակում՝ նա սկսեց պատրաստուել, որպէս զի կարողանայ պարզել կենդանիների և բոյսերի ծագման ու զարգացման գաղտնիքը։ Երեք-չորս տարի աշխատելուց յետոյ Դարվինը վերջապէս հասաւ իր մեծ նպատակին։ 1840 թուին նրա համար արդէն վճռուած էր բիօլոգիայի ամենամեծ հարցը։ Եթէ Դարվինի տեղ մի ուրիշ մարդ լինէր, շատ հաւանական է, որ իսկոյն և եթյալտարարէր երևելի գիւտի մասին, բայց Դարվինը չէր շտապում։ Լաւ հասկանալով, որ հարցը վերին աստիճան ծանրակշիռ է, նա մտքում գրել էր միայն այն ժամանակ լոյս ընծայել իր վարդապետութիւնը՝ վերաբերեալ

օրգանիզմների ծագմանը ու զարգացմանը, երբ
կունենար բազմաթիւ ապացուցներ:

Իր թէորիալի մշակման համար Դարվինը
գործ դրեց տասնուիննը տարի, այնպէս որ
միայն 1859 թուին վերջապէս մամուլի տա-
կից դուրս եկաւ «Տեսակների ծագումը»: Թէ
ինչումն էր կայանում այդ գրուածքում մեկ-
նած ուսմունքը—ես կաշխատեմ ցոյց տալ ա-
ւելի ուշ, իսկ այստեղ միայն կը նկատեմ, որ
«Տեսակների ծագումը» գրուածքի լոյս տես-
նալու օրից բնագիտութեան համար սկսուեց
նոր դարեշրջան:

«Տեսակների ծագումը» 1859 թուին, ա-
սում էր պրօֆեսոր Հեօքսլին, ներգործեց մեզ
վերայ, ինչպէս փալուն լոյս, ցոյց տալով ճա-
նապարհը մեզ, որ գտնում էինք խորին մը-
թութեան մէջ... Այդ ուղիղ հէնց այն բանն
էր, որը մենք որոնում էինք, բայց չէինք
գտնում:»

1867 թուին Զ. Դարվինը հրատարակեց
իր «Ընտանիացրած կենդանիները և մշակուած
բոլութը» երկու հատորով: Դա մի ընդարձակ
գրուածք է՝ լցուած ընտանի կենդանիների և
մշակուած բոլութի կեանքից վերցրած փաս-
տերով, որոնցով Դարվինը աշխատում էր ա-
ւելի ևս պարզաբանել իր թէորիան, թէև այդ

վերջինն առանց դրան էլ հիանալի կերպով
պարզած ու բազմաթիւ փաստերի վերայ հիմ-
նուած էր «Տեսակների ծագումը» գրուած-
քում:

1871 թուին լոյս տեսաւ Դարվինի միւս
հանճարեղ գրուածքը—«Մարդու ծագումը»,
որը համարւում է շարունակութիւն «Տեսակ-
ների ծագումը» գրուածքի:

Դժուար է երեւակայել այն սարսափելի
աղմուկը, որը բարձրացաւ Եւրոպայում շնոր-
հիւ «տեսակների ծագման» և «մարդու ծագ-
ման»: Գիտնականները բաժանուել էին երկու
բանակի, որոնցից մէկը Դարվինին մինչև եր-
կինք էր բարձրացնում նրա թէորիալի հա-
մար, միւսը ընդհակառակը աշխատում էր ա-
պացուցանել, որ Դարվինը անմիտ է, իսկ նրա
վարդապետութիւնը—ցնդաբանութիւն:

Էլ նախատինք, էլ հայուանք չը մնաց,
որ չը թափէին Դարվինի գլխին: Հակառա-
կորդների շարքում կային նաև հոչակ ունե-
ցող բազմաթիւ գիտնականներ, ինչպէս օրի-
նակ Ագասիսը, Ֆլուրանսը... Երբ «տեսակնե-
նակ ծագումը» գրուածքի Փրանսերէն թարգ-
րի ծագումը» գրուածքի Փրանսերէն թարգ-
րի ծագումը» գրուածքի Փրանսերէն թարգ-

նեց նրան բացարձակ ծիծաղով ու հեգնութեամբ, անուանելով Դարվինի գրուածքը «անըովանդակ», իսկ նրա մտքերը—«սխալ» և «տղալական»:

ՀայՀոլոդներին միացել էր նաև անգլիական հոգևորականութիւնը, որը՝ անընդունակ լինելով լաւ ըմբռնել Դարվինի ուսմունքի էութիւնը՝ անուանում էր Դարվինին «անստուած», «հաւատ քանդող» և այլն:

Իսկ ինչ վերաբերում է Դարվինին, նա ամենքից քիչ էր մասնակցում վիճաբանութիւններին. մինչդեռ ամբողջ Եւրոպան ալեկոծում էր շնորհիւ նրա մտքերի, նա նոյն ժամանակը՝ սուս ու փուս նստած իր Գուռնում և շրջապատուած իր բոյսերով և աղաւնիներով՝ շարունակում էր բնութեան ուսումնասիրութիւնը... Շնորհիւ իր համեստ և խաղաղ բնաւորութեանը Դարվինը խուսափում էր բանակութիւ մէջ մտնելուց. և այս հանդամանքը կարող էր անկասկած վատ ազդել նրա վարդապետութեան տարածման վերայ, եթէ նա չունենար զօրեղ պաշտպանողներ:

Երեք երեւելի գիտականներ՝ Հեօքսլին Անգլիայում, Ազա Գրէլլ Ամերիկայում և Էրնստ Հեկելլ Գերմանիայում, տեսնելով Դարվինի թուլութիւնը, իրանց վերայ էին

վերցրել նրա մտքերը պաշտպանելու և քարոզելու ծանր գործը: Նրանք յօդուածներ էին գրում, դասախոսութիւններ էին կարգում կամ բանակութիւններ էին սկսում Դարվինի հակառակորդների հետ, աշխատելով ապացուցանել Դարվինի մտքերի ճշմարտութիւնը: Այդ տեսակէտից մանաւանդ նշանաւոր էր Էրնստ Հեկելլի գործունելութիւնը: Շնորհիւ իր սեպհական դիտողութիւններին և փորձերին Հեկելլը շատ շուտ համոզուեց, որ Դարվինի մըտքերը ճիշտ են և որ նրանց չընդունել անկարելի է: Այդ համոզմունքը կազմելուց յետով նա սկսեց մի այնպիսի կատաղի կոիւ Դարվինի հակառակորդների հետ, որ կարծեսթէ այդ մտքերի հեղինակը ինքը լինէր:

Անցան էլի մի քանի տարիներ, մարդիկ աւելի ուշադրութեամբ կարգացին Դարվինի գրուածքները, աւելի լաւ ըմբռնեցին նրա մտքերը և... սկսեցին փոքր առ փոքր Դարվինի կողմն անցնել: Ել չէին լսում հայՀոյանքներ այն չափով ինչչպէս առաջ: Միւս կողմից ամենաելքելի գիտնականներն՝ ինչպէս Լեաելլ, Լեօբրօկը, Հերբերտ Սպենսէրը, միանալով Հեկելլի, Հեօքսլիի և Ազա Գրէլլի հետ արդէն բացարձակ յայտնել էին իրանց զարմանքը և հիացմունքը դէպի դարվինիզմը:

Այդպէս բոլորն էլ փոքր առ փոքր խո-
նարհուեցին Դարվինի հանճարի առաջ: Նոլն
իսկ հոգևորականութիւնը մի քանի ժա-
մանակից յետով փոխեց իր հայեացքը Դարվի-
նի վերայ: Այդ երեսում է նրանից, որ Դար-
վինի թաղման ժամանակ հոգևորականները
մեծ թւով և հանդիսով ճանապարհ գցեցին
Դարվինի դագաղը մինչև գերեզման:

Դարվինիզմի համեմատաբար հեշտ ըն-
դունուելը գիտնականների կողմից բացատրե-
րում է երկու պատճառներով: Առաջինը՝ ժա-
մանակը հասունացած էր այդ ուսմունքի հա-
մար: Ահա ինչպէս: Այս դարու սկզբում բը-
նագիտութիւնը ահագին առաջադիմութիւն
էր արել. կենդանաբանութիւնը, բուսաբա-
նութիւնը և միւս բիօլոգիական գիտութիւնները
հարստացել էին անթիւ փաստերով ու
դիտողութիւններով, որոնք աննկատելի կեր-
պով հող էին պատրաստում Դարվինի վարդա-
պետութեան համար: Դարվինիզմը մի տեսակ
հետևանք էր, տրամաբանական եզրակացու-
թիւն էր այդ փաստերի և դիտողութիւննե-
րի, ուստի չընդունել Դարվինի ուսմունքն
անկարելի էր նրանց համար, որոնք ընդու-
նում էին ընական գիտութիւնների հիմնա-
կան փաստերը:

Որ դարվինիզմի համար ժամանակը հա-
սունացած էր—այդ պարզ երևում է նրանից,
որ բացի Դարվինից ուրիշ շատ գիտնական-
ներ էլ զբաղուած էին կենդանիների և բոյ-
սերի ծագման ու զարգացման հարցով: Լա-
մարկը, Ֆօֆֆրուա Սենտ Իլերը, Կիւվիէն և
Ալֆրեդ Ուոլեսը սաստիկ հետաքրքրուում էին
նոյն հարցով: Մանաւանդ հետաքրքիր է այն
հանգամանքը, որ Ալֆրեդ Ուոլեսը՝ ճանա-
պարհորդելով Ամերիկայում՝ Դարվինից բոլո-
րովին անկախ արաւ նոյն գիւտը, որ և Դար-
վինը:

Այդպիսով այն ուսմունքը, որ մենք ա-
նուանում ենք դարվինիզմ, իսկապէս պատ-
կանում է ոչ միայն Դարվինին, այլ և Ալ-
ֆրեդ Ուոլեսին: Զանազանութիւնը նրանում
է միայն, որ Ալֆրեդ Ուոլեսը չը կարողացաւ
իր արած գիւտը ապացուցանել այնպիսի բազ-
մաթիւ և հիմնաւոր փաստերով ինչպէս Դար-
վինը:

Դարվինի վարդապետութեան հեշտ տա-
րածման երկրորդ պատճառը կայանում է նրա-
նում, որ Դարվինը իր ուսմունքը դրել էր
անսասան հիմունքների վերայ: Ահա ինչ է
ասում Գրանտ Ալենը այդ մասին:

«Նրա գիրքը (խօսքը «տեսակների ծագ-

ման» մասին է) ամենագիտնական, ամենապարզ, ամենատրամաբանական, ամենահիմնական գիրքն էր, որը երբ և իցէ տեսել էր աշխարհը: Քայլ առ քայլ փայլուն կերպով ապացուցանում էր Դարվինը իր թէորիաի ամեն մի կէտը առաջ, քան կանցնէր միւսներին»:

Հետաքրքիր է, որ «տեսակների ծագումը» գրուածքի ամբողջ տպագրութիւնը սպառուեց մի օրուայ մէջ, իսկ մի ամսից յետոյ լոյս տեսաւ երկրորդ տպագրութիւնը:

Ննորհիւ իր ուսմունքին Դարվինը շուտով ամենահոչակաւոր մարդը դարձաւ ամբողջ Եւրոպայում. անվերջանալի կերպով կրկնում էին «Դարվին», «Դարվինի ուսմունքը», «Դարվինի թէորիա», «Դարվինիզմ» խօսքերը: Նատերը յայտնում էին իրանց զարմանքը, որ իրանց գլուխը չի եկել մի այնպիսի պարզ, ինքն ըստինքեան հասկանալի միտք, որպիսին էր Դարվինի գիւտը: Դարվինի համեստ տունը Դօունում գիտնականների համար մի իսկական «Մեքքալ» դառաւ: «Մեր դարու ամենաերկելի մարդիկը պատիւ էին համարում իրանց համար այցելել անմահ

մտածողին» (мыслитель)—ասում է Գրանտ Ալենը:

Սակայն այդ չը տեսնուած պատիւն ու մեծարանքը չը փոխեցին Դարվինին, որը մընաց նոյն համեստ և աշխատասէր մարդը:

«Զարմանալի հասարակ և մեծահոգի՝ Զարլզ Դարվինը չէր զգում իր մեծութիւնը. և հասկանալի բան է, որ այդ համեստութիւնը աւելի ևս բարձրացնում էր նրան: Նրա բարոյական յատկութիւնները նոյնքան վսեմ ու զարմանալի էին, որքան մտաւորք: Նրա անկեղծութիւնը և խոհեմութիւնը, ոռոնք լաւ յայտնի են նրա գրքերի ընթերցողներին, միանում էին մասնաւոր կեանքում իսկական բարիութեան, բարեսրտութեան (ըմահոստ) և առատաձեռնութեան հետ, որոնց պատճառով նա նոյնքան սիրուած էր իր բարեկամներից, ինչքան յարգուած ամբողջ Եւրոպայում: Ծառաները՝ միանգամ մտնելով նրա տունը՝ ըստ մեծի մասին մնում էին ընդմիշտ»*):

Ինչ վերաբերում է երիտասարդ բնագէտներին, նրանք Դարվինի վերայ նայում էին ինչպէս իրանց հօր վերայ: Դարվինը ստա-

*) Գր. Ալլենъ—նոյն տեղը, էջ 82—83.

նում էր նրանցից բազմաթիւ նամակներ, որոնց մէջ նրանք տեղեկութիւններ էին յալտնում իրանց փորձերի կամ դժողովութիւնների մասին։ Դարվինը ուրախութեամբ պատասխանում էր, խորհուրդներ էր տալիս իբրև ընկեր, յալտնում էր իր ցաւը նրանց անազողութեան համար, կամ հիանում նրանց արած փորձերով, եթէ միայն դրանք իրօք լաւ էին լինում։

«Մարդու ծագումից» լետոյ մէկը միւսի ետեւից գուրս եկան Դարվինի «Զգայունութիւնների արտայալտութիւն», «Միջատակեր բոյսերը» և միւս նշանաւոր գրուածքները։

Սակայն քանի աւելի էր ծերանում Դարվինը, այնքան գժուարանում էր նրա համար աշխատանքը։ Միւս կողմից էլ հիւանդութիւնն էր փոքր առ փոքր սպառում նրա ոլժերը։ Մինչեռ ալգաէս թուլանում էր Դարվինը ֆիզիկապէս, նրա հանճարեղ գլխում ծագում էին հետազօտութիւնների նորանոր ծրագիրներ։

Դարվինի ամենաջերս ցանկութիւնն էր մի փոքր էլ ապրել, որպէս զի կարողանար վերջացնել ձեռնարկած փորձերը։ Բայց նախախնամութիւնը ուրիշ կերպ էր որոշել։ 1882 թուի ապրիլի 18-ին յանկարծ սաստ-

կացաւ նրա հիւանդութիւնը, իսկ 19-ին Զարլզ Դարվինը այլ ևս չը կար... Նրա մահուան լուրը մեծ ցաւ պատճառեց ոչ միայն Անգլիայում, այլ և ամեն տեղ, ուր ինտելլիգենտ մարդիկ կային։ Անգլիայի հասարակութիւնը վճռեց Դարվինին թաղել Վեստմինստերում, Նիւտոնի շիրիմի կողքին, ցոյց տալով դրանով, որ միւսոյն գգացմունքներն է տածում գէպի երկուսը։ Պէտք է ասել, որ բոլորովին իրաւացի էր այդ տեսակ հայեացքը Դարվինի և Նիւտոնի վերայ, որովհետեւ նրանց մէջ մեծ նմանութիւն կար։ Երկուսն էլ իրանց կեանքում ահագին յեղափոխութիւն կատարեցին—Դարվինը բիօլոգիայում, իսկ Նիւտոնը աստղաբաշխութեան մէջ։ Դարվինը գիտակցութիւն մտցրեց բիօլոգիական երեսլթների ուսումնասիրութեան մէջ, նոյնը կատարեց Նիւտոնը աստղաբաշխական գիտողութիւնների վերաբերմամբ։

Բացի գրանից երկուսի գլխաւոր նպատակն էր աւելի ուղիղ հայեացք տարածել գէպի բնութեան երեսլթները։ Բնութեան երեսլթներն ուսումնասիրելիս երբէք չը պէտք է մէջ բերել գերբնական ոյժը, այլ պէտք է աշխատել բացատրել նրանց միմիայն ընական պատճառներով—ահա այն միտքը,

որի ամենամեծ քարոզողները Դարվինն ու
Նիւտոնն էին:

Դարվինի դադարը մեծ հանդիսով բերուեցաւ Վեստմինստեր:

Ա.Հագին ժողովուրդ՝ բաղկացած գիտնականներից, բանաստեղծներից, աստիճանաւորներից, Հոգևորականներից, Փիլիսոփաներից ճանապարհ էր զցում ջերմեռանզութեամբ մինչև գերեզման այն մարդուն, որին մի փոքր առաջ պատրաստ էր քարհրծելու:

Այդպէս փոխւում է ժամանակը...

ՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Կենդանիների եւ բոյսերի դասակարգութիւնը: Տեսակ-
ների ծագումը: Տեսակների անփոփխականութեան թէորիան
—Լիննէ եւ Ժօրժ Կիւվիէն: Տեսակների փոփխականութեան
թէորիան —Բիւթֆոն, Ժօֆֆրուս Սենտ Իլէր, Էրազմ Դար-
վին եւ Լամարկ: Զարլզ Դարվինը վերցնականապէս ա-
պացուցեց տեսակների փոփխականութիւնը: Ամեն մի մեծ
գիւտ արդիւնք չէ միմիայն մի գիտնականի աշխատանք-
ների:

Ամեն մի գրադարանապետ իր գրադա-
րանը կառավարելու համար նախ և առաջ
նրա մէջ մի որոշ կարգ է մտցնում։ Նա բա-
ժանում է իր բոլոր գրքերը մի քանի մասե-
րի. պատմութեանը վերաբերող գրքերը ժո-
ղովում է մի տեղ, փիլիսոփայական գրուածք-
ները մի ուրիշ տեղ, բուն գիտնական հեղի-
նակութեաններն երրորդ տեղում... Այդ մա-
սերից ամեն մէկը գրադարանապետը ստորա-
4

բաժանում է աւելի փոքրիկ մասերի, օրինակ գիտնական գրուածքները ստորաբաժանում է բնագիտական, իրաւաբանական, լեզուագիտական, բժշկական և ուրիշ մասերի:

Այդպիսով գրքերը որոշ սիստեմով դասաւորում են: Դասակարգութիւնը (կլասսիֆիկացիա) ոչ միայն օգտաւէտ է, այլ և շատ անգամ ուղղակի անհրաժեշտ: Եթէ գրադարանի գրքերը վերոյիշեալ կերպով դասաւորած չը լինէին, այն ժամանակ մի որ և է գիրք գտնելու համար գրադարանապետը ստիպուած կը լինէր ամեն անգամ քարուքանդանել իր բոլոր գրքերը:

Ինչքան մեծ լինի գրքերի քանակութիւնը, այնքան աւելի անհրաժեշտ է դառնուած նրանց դասաւորութիւնը: Եւ ճշմարիտ, եթէ մենք ունենք, օրինակ, միայն 20 հատ զանագան մասնագիտութիւններին վերաբերող գըրքեր, այն ժամանակ նրանց դասաւորելու կարիք էլ չը կայ ամենևին: Եթէ գրքերի թիւը հասնում է մի քանի հարիւրի, այդ դէպքում՝ թէւ առանց դասաւորութեան էլ կարելի է օգտուել նրանցով, սակայն մեր գործն աւելի հեշտացած կը լինէր, եթէ նրանք դասաւորած լինէին: Խոկ եթէ մենք ունենք ոչ թէ հարիւրաւոր, այլ տասնեակ և հարիւր

հազարաւոր հատոքներ, այդ դէպքում նրանցով օգտուելը միայն այն ժամանակ հնարաւոր կը լինի, եթէ այդ գրքերը բաժանուած ու ստորաբաժանուած լինեն այնպէս, ինչպէս վերև ասուած է:

Դասակարգութիւնը աւելի ևս անհրաժեշտ է ընագէտի համար: Չէ որ բնութիւնը լցուած է անթիւ ու անհամար բոյսերով ու կենդանիներով: Հասկանալի բան է, որ նրանց ուսումնասիրելն անհնարին կը լինէր, եթէ նրանք որոշ սիստեմով բաժանուած ու ստորաբաժանուած չը լինէին գլադարանապետի գրքերի նման: Դրանով է բացատրուամ այն հանգամանքը, որ դեռ ամենահին ժամանակներում ուսումնականներն աշխատում էին կենդանիներին ու բոյսերին դասաւորել որոշ սիստեմով: Օրինակ այդպիսի մի փորձ արաւգեռ Արիստոտելը: Սակայն թէ Արիստոտելի և թէ առհասարակ հին ժամանակներում առաջարկուած բոլոր դասակարգութիւններն անկատար ու թերի էին:

Այժմ բնութեան մէջ գոյութիւն ունեցող բոլոր բոյսերը բաժանուամ են երկու մեծ մասերի: Առաջին մասը պարունակում է իր մէջ ամենասատոր և պարզ կազմութիւն ունեցող բոյսերին—սունկերին, բակտերիաներին,

մամուռին և ալն։ Դրանք անուանում են գաղտնամհւսինք (тайнообразчныя растенія)։ Աւելի բարձր կազմուածք ունեցող բոլսերը — ընկուզենին, կաղնին, վարդենին, խնձորենին և միւսները կազմում են բուսական աշխարհի երկրորդ մասը և կոչւում են յայտնամհւսինք (явнообразчныя)։

Թէ I և թէ II մասը ստորաբաժանուում է աւելի փոքրիկ մասերի. յայտնամուսինները ստորաբաժանուում են մի քանի աւելի փոքրիկ խմբերի, որոնք կոչւում են ընտանիքներ. օրինակ նշենիների ընտանիք, խաչածաղիկների ընտանիք, խնձորենիների ընտանիք և ալն։

Ամեն մի ընտանիք ստորաբաժանուում է ազգերի (родъ), իսկ ամեն մի ազգ տեսակների (видъ): Տանձենին, սերկեփլը, խնձորենին, ողնին — զանազան տեսակներ են միւնոյն ընտանիքի (խնձորենիների ընտանիք)։ Ծիրանին, դեղձենին, դամոնը, սալորը, կեռասը, նշենին — նոյնպէս տեսակներ՝ են, բայց պատկանում են ուրիշ ընտանիքին — նշենիների ընտանիքին և ալն։

Ինչ որ ասեցի բոլսերի մասին, կարելի է կրկնել նաև կենդանիների վերաբերմամբ։ Կենդանիներն էլ բաժանուում են մի քանի մեծ

դասակարգերի, որոնցից ամեն մէկը ստորաբաժանուում է աւելի փոքրիկ ճիւղերի։ Այստեղ նոյնպէս ստորաբաժանման ամենափոքրիկ մասերը կամ ճիւղերը կոչւում են տեսակներ։

Այդպիսով թէ բուսական և թէ կենդանական աշխարհները բաղկացած են որոշ խըմբերից՝ այն է տեսակներից։

Ի՞նչ կապ կամ յարաբերութիւն կալ այդ տեսակների մէջ։ Մեզ յայտնի է որ կենդանական աշխարհը բաղկացած է շան, կատուի, կաքաւի, նապաստակի և միւս տեսակներից։ Հարցը նրանում է, թէ արդեօք այդ տեսակները ծագել են ընդհանուր ծնողներից և յետոյ ժամանակի ընթացքում փոփոխուել, ստացել իրանց այժմեան կերպարանքը, թէ ընդհակառակը հէնց սկզբից նրանք ունեցել են տարբեր ծագում և հէնց սկզբումն էլ ունեցել են նապաստակի, կաքաւի, կատուի, շան կերպարանքը։

Եթէ առաջին ենթադրութիւնը ճիշտ լինի, այն ժամանակ կը նշանակի, որ տեսակները փոփոխական են։ Այդ հայեացքի հիման վերայ այժմեան տեսակներն էլ կարող են ժամանակի ընթացքում փոփոխուել՝ առաջացնելով նորանոր տեսակներ։ Օրինակ կատուի կամ

աղուէսի տեսակները՝ ըստ այդ ենթագրութեան՝ չեն մնալու անփոփոխ հազարաւոր տարիների ընթացքում, այլ աւելի հաւանական է, որ փոփոխուեն և նրանցից ծագեն կենդանիների նոր տեսակներ:

Իսկ եթէ ուզիղ լինի այն ենթագրութիւնը, որ այժմեան բոլոր տեսակները հէնց սկզբից ունենալով տարբեր ծագում առանց փոփոխութեան հասել են մինչեւ մեր ժամամակները, կը նշանակի, որ տեսակները անփոփոխական են:

Այս հարցին, ինչպէս լետոյ կը տեսնէ ընթերցողը, վիճակուած էր ահագին լեզափոխութիւն մտցնել մարդկային մտքի բազմաթիւ սփերաներում:

Ի՞նչպէս վճռուեց նա:

XVIII դարի սկզբում երեելի գիտնական Լիննէյն առաջարկեց իր հուշակաւոր դասակարգութիւնը բոլուրին: Անբաւական լինելով հին դասակարգութիւններով նա նորից բաժանեց ու ստորաբաժանեց բոլուրին՝ կազմելով նրանցից բազմաթիւ տեսակներ: Վերադառնալով մեր, վերև բերած, համեմատութեանը կը նրատենք, որ նոյն իսկ դրադարանի գրքերի

դասաւորութիւնը կարող է զանազան կերպ կատարուել. մի գրադարանապետ կարող է անաջող կերպով դասաւորել իր գրքերը, միւսը—աջող, և դրա հետեանքն այն կը լինի, որ վատ դասաւորած գրադարանում այս կամ այն գիրքը գտնելու համար անհամեմատ աւելի շատ ժամանակ կը կորչի, քան թէ այն գրադարանում, որի գրքերն աւելի լաւ են դասաւորած:

Եթէ բաւական դժուար է լաւ դասաւորել մի որևէ է գրադարանի գրքերը, ապա ի՞նչ քան դժուար պէտք է լինի կենդանիների և բոլուրի դասաւորութիւնը, որոնց թիւը անհամեմատ աւելի մեծ է քան թէ գրադարանի գրքերինը: Այդ դժուարութիւնով է բացատրում հին դասակարգութիւնների թերի լինելը, որ և ստիպեց Լիննէյին նորից դասաւորել բոլուրին:

Ուսումնասիրելով զանազան տեսակ բոլուր՝ Լիննէյը բնականաբար եկաւ այդ տեսակների ծագման հարցին:

Նրա կարծիքով՝ աշխարհիս ծագման սկզբ-բում ստեղծուել են կենդանիների ու բոլուրի բազմաթիւ տեսակներ: Ամեն մի տեսակը ստացել է Ստեղծողից իր որոշ լատկութիւնները, իր կերպարանքը, որը պահպանել է

մինչև մեր ժամանակները և պահպանելու է մինչև աշխարհիս վերջը։ Ըստ Լինելի՝ «չ մի նշանաւոր փոփոխութեան չի կարող ենթարկուել տեսակը (օրինակ ձին, կատուն...)» նոյն եսկ հազարաւոր տարիների ընթացքում։ Այժմ ուրեմն այնքան բուսական և կենդանական տեսակներ կան, ինչքան որ ստեղծուել են աշխարհիս ծագման սկզբում։ Այն ժամանակ ստեղծուել են կաքաւի, շան, գետնախնձորի, մանուշակի, ձիու... տեսակները և անփոփոխ հասել են մեր ժամանակներին։ Կաքաւը բազմացել է և կարող է բազմանալ՝ արտադրելով կաքաւների բազմաթիւ նոր սերունդներ, բայց փոփոխուել այնպէս, որ նրանից գոյանան նոր տեսակի թռչուններ կամ առհասարակ նոր տեսակի կենդանիներ—այդ անկարելի է Լինելի կարծիքով։

Ահա Լինելի հայեացքը վերաբերեալ տեսակների ծագմանը, որը կոչում է «տեսակների անփոփոխականութեան թէորիա»։ Այդ ուսմունքը շատ հետևողներ ունեցաւ, որոնցից ամենահռչակաւորը ֆօրժ Կիւվիէն էր, որը ճգնում էր փաստերով ապացուցանել տեսակների անփոփոխականութիւնը։ Ֆօրժ Կիւվիէն մեծ գիտնական էր և ունէր ահագին հեղինակութիւն, ուստի նրա պաշտպա-

նած «տեսակների անփոփոխականութեան» ուսմունքը գիտնականների շրջանում դարձաւ մի ակսիոմա, որի գեմ վիճելն անկարելի էր։ Լինելին և ֆօրժ Կիւվիէն հակառակ կարծիք յայտնելն աւելի ևս վրանգաւոր էր գառել այն պատճառով, որ իրանց թէորիային նրանք տուել էին կրօնական աստառ։ Դրանով է բացատրւում այն հանգամանքը, որ յայտնի վիւխովիայ Բիւֆֆօնը, ընդդէմ լինելով նրանց հայեացքներին, խօսում է տեսակների ծագման մասին ակնարկներով ու վերին աստիճան գգուշութեամբ։ Բայց և այնպէս Բիւֆֆօնը առաջինն եղաւ, որ փորձեց Կիւվիէի և Լինելի թէորիային հակառակ մտքեր տարածել։ Նա յայտնեց այն կարծիքը, թէ այժմեան կենդանիների ու բոլորի տեսակները կարող էին առաջանալ և զարգանալ միմիայն մի սկզբնական տիպարից։ Բիւֆֆօնի կարծիքով՝ տեսակները մշտական, անշարժ չեն, ինչպէս պնդում էին Կիւվիէն և Լինելը, այլ փոփոխական։ Ոչ միայն կենդանիները, այլ և մարդը նրանց հետ՝ ըստ Բիւֆֆօնի՝ կարող էին ունենալ մի ընդհանութիւնի կախահարք, մի ընդհանուր ծագում։ Սակայն, ինչպէս վերև նկատեցի, Բիւֆֆօնը յայտնում էր իր մտքերը մութը և անորոշ

կերպով, վախենալով, որ հակառակորդները
ըլ դասեն նրան անաստուածների շարքում:

Նրա մտքերին պաշտպան հանդիսացաւ
մի շարք անուանի գիտնականների. Իսիդօր
ծօֆֆրուա Սենտ Իլէրը, Լամարկը և Երազմ
Դարվինը, որը, ինչպէս կը լիշէ ընթերցողը,
հոչակաւոր Զարլզ Դարվինի պապն էր: Երազմ
Դարվինի մտքերի հետ մենք մասամբ ծանօթա-
ցանք վերև: Ընթերցողը գիտէ արդէն Երազմ
Դարվինի այն բանաստեղծութեան բովանդակու-
թիւնը, որի մէջ նա նկարագրում է օրգանական
աշխարհի ծագումը: Ըստ Երազմ Դարվինի երկ-
րիս վերայ առաջ ծագել են շատ մանր ու
պարզ էակներ, որոնք «սողում էին ցեխի մէջ
կամ լողում ջրերի փրփուրներում:»

Վերջին խօսքերով Երազմ Դարվինը կա-
մենում է ցուց տալ, որ սկզբնական ստոր է-
ակներն ապրում էին ջրերում և ոչ թէ ցա-
մաքի վերայ *): Ալդ մանր և ստոր սկզբնա-
կան էակներից լետակայ ժամանակներում գո-
յացան՝ բատ Երազմ Դարվինի՝ բոլոր կենդա-
նական ու բուսական տեսակները:

*) Աւելորդ չի լինի այստեղ նկատել, որ այդ
հայեացքն այժմ էլ ընդունուած է. այսինքն՝ այժմ
էլ գիտնականներն այն կարծիքի են, որ սկզբնական
ստոր էակներն ապրում էին ջրերում և ոչ թէ ցա-
մաքի վերայ:

Սակայն Երազմ Դարվինը իր ալդ մտքե-
րըն արտայալտում էր ոչ թէ գիտնականօրէն,
այլ իբրև բանաստեղծ, ալդ պատճառով նրա
ուսմունքը մեծ ազգեցութիւն չէր անում
գիտնականների վերայ:

Տեսակների ծագման հարցին աւելի գիտ-
նականօրէն էր վերաբերում Լամարկը, որն
իր նշանաւոր Philosophie Zoologique գրու-
ածքում որոշ կերպով անդում էր, թէ այժ-
մեան կենդանիների բոլոր տեսակները ծագել
ու զարգացել են մարդու հետ միասին մի
կամ մի քանի պարզ սկզբնական տեսակնե-
րից և սաստիկ փոփոխութելով հասել են իրանց
այժմեան դրութեանը:

Ալդ ժամանակները համարեա միևնուն
միտքը լայտնեց և հանձարեղ գերմանական
բանաստեղծ Գեօթէն, որը ոչ միայն երևե-
լի բանաստեղծ էր, այլ և երևելի բնագէտ:

Ալդ վիճակի տեսակների ծագման հարցը
վիճաբանութիւնների առարկայ էր դարձել. մի
խումբ լայտնի գիտնականների (Լամարկ, Ե-
րազմ Դարվին, Սենտ Իլէրը.) այն կարծիքի
էր, որ կենդանիների ու բոյսերի բազմաթիւ
տեսակները գոյացել ու զարգացել են մի ընդ-

Հանուր սկզբնական տեսակից, միւսներն ընդհակառակը պնդում էին, որ այժմեան բոլորի և կենդանիների տեսակները հենց սկզբից ունեցել են իրանց այժմեան կերպարանքը և առանց փոփոխութեան հասել են մեր ժամանակներին:

Այս վիճաբանութիւններին ուշի ուշով հետեւում էր Զարլզ Դարվինը, որը վազուց արդէն վերադարձել էր ճանապարհորդութիւնից և նոյնպէս զբաղուած էր տեսակների ծագման խնդրով: Թէ ճանապարհորդութեան ժամանակ և թէ նրանից յետոյ արած դիտողութիւնները համոզել էին Զ. Դարվինին, որ բոլորը և կենդանիներն ընդունակ են խորին կերպով փոփոխուելու և որ ուրեմն Լիննէի ու Ֆօրժ Կիւվիէի ուսմունքը հիմնովին սխալ է:

Այդ է պատճառը, որ Զարլզ Դարվինը առանց տատանման անցաւ Բիւֆֆօնի, Սենտ Իլէրի և Լամարկի կողմը: Սակայն վերջինների հետ համեմատած Դարվինը ունէր այն մեծ առաւելութիւնը, որ զինուած էր բազմաթիւ փաստերով, մինչդեռ Լամարկը և Սենտ Իլէրը՝ չունենալով փաստեր՝ աշխատում էին ձրօրու ասպացուցանել տեսակների փոփոխականութիւնը:

Անկարելի է մի ալսպիսի փոքրիկ դրքում առաջ բերել բոլոր այն փաստերը, որոնցով Զարլզ Դարվինը վերջնականապէս ապացուցեց տեսակների փոփոխականութիւնը. այնքան նրանք բազմաթիւ են: Այդ փաստերից ես առաջ կը բերեմ միայն մի քանիսները վերաբերեալ ընտանի կենդանիներին և մշակուած բոլուսերին:

Ում չէ լայտնի, որ մեծ տարբերութիւն կալ զանազան երկիրներում ապրող աղաւնիների մէջ. այդ վերջինները զանազանուած են իրարից գոյնով, մեծութեամբ, կտուցի ձեռվ, ընաւորութեամբ... Մանաւանդ մի քանի ցեղերն աչքի են ընկնում իրանց տարօրինակ առանձնայատկութիւններով: Եթէ ընթերցով տեսնի «անգլիական վրուածի», «տաճկաց աղաւնու», «կարճաերես տուրմանի»*) և վերջապէս վայրենի աղաւնու նկարները, որոնք զետեղուած են Դարվինի գրուածքներից մէկում, նա անշուշտ կը կարծի, թէ Գլուսանք բոլորովին տարբեր թուչուններ են, որոնց մէջ մօտիկ ազգակցական կատ ենթադրելն անհնարին է: Զը պէտք է կարծել, թէ նրանց մէջ միայն արտաքին տարբերութիւն

*) Աղաւնու զանազան ցեղեր՝ են:

կայ: Ո՞չ, նրանց ներքին կազմուածքն էլ սաստիկ տարբեր է:

Մի փոքր աւելի մօտիկ ծանօթանանք ալդ աղաւնիների հետ: Ընթերցողը անշուշտ տեսած կը լինի վայրենի աղաւնուն, որովհետեւ նա սաստիկ տարածուած թռչուն է: Այդ աղաւնին բաց մոխրագոյն է, ունի սպիտակ փոր և երկու սե գծեր թևերի վերայ: Բոլորովին ուրիշ պատկեր կը ներկայանալ մեզ, եթէ վայրենի աղաւնուց անցնենք «անգլիական փքուածին» (անգլիակի դուտիա): Այդ վերջինի կոկորդն այնքան մեծ է, որ գլուխը համարեա աննկատելի է դառնում, իսկ նրա ողների թիւը աւելի մեծ է համեմատած վայրենի աղաւնու ողների հետ:

«Ճաճկաց աղաւնու» (pigeon turc) կը տուցը համարեա երկու անգամ աւելի երկար է քան վայրենի աղաւնու կտուցը, իսկ աչքերի շուրջը գտնուում է կնճիռներով ծածկուած ահագին կաշի, որի նմանը չունի վայրենի աղաւնին:

Աղաւնիների գլխաւոր յատկանիշներից մէկն էլ այն է, որ նրանց պոչը բաղկացած է լինում միշտ տասներկու փետուրներից, այդպէս է կազմուած և վայրենի աղաւնու պոչը: Բացառութիւն է կազմում «դոդդոդան»

ցեղը. ալդ ցեղի աղաւնիների պոչը ունի մինչև քառասուներկու փետուրներ: «Դոդդոդանի» ողների թիւն էլ աւելի մեծ է՝ համեմատած վայրենի աղաւնու ողների հետ:

Ոչ սակաւ տարօրինակ է և «կարճաերես տուրմանը» (короткоилицый турманъ), որի գլուխը գնտակի ձև ունի, իսկ կտուցը զարմանալի փոքրիկ է, այնպէս որ նրա գլուխը նըման է «կեռասի, որի մէջ ցցել են գարու հատիկ» (կտուցը):

Այդպիսով՝ համեմատելով տաճկաց աղաւնուն, անգլիական փքուածին, դողլուղանին և կարճաերես տուրմանին վարենի աղաւնու հետ՝ մենք տեսնում ենք, որ նրանց մէջ ահագին տարբերութիւն կայ և այդ տարբերութիւնը չի սահմանափակուում միայն արտաքին տեսքով. մեծ զանազանութիւն կայ մինչև անգամ նրանց կմախքների մէջ. օրինակ անգլիական փքուածի և դողլուղանի ողների թիւն աւելի մեծ է քան վայրենի աղաւնու ողների թիւը:

Հարկաւոր է նկատել, որ ամենամեծ տարբերութիւնը կենդանիների մէջ կմախքների բարբերութիւնն է համարւում. եթէ երկու կենդանիներ իրանց արտաքին տեսքով նոյն իսկ սաստիկ նման լինեն իրար, բայց եթէ

Նրանց կմախքների մէջ նշանաւոր տարբերութիւն կայ, նրանք համարւում են իրարից տարբեր օրգանիզմներ:

Հենց ալդ տեսակէտից «կարճաերես տուրմանը», «անգլիական փքուածը», «դողդողանը», «տաճկաց աղաւնին» և վայրենի աղաւնին ամենեին չեն կարող համարուել՝ իբրև մի տեսակի պատկանող թռչուններ, այնքան մեծ է նրանց զանազանութիւնը:

Սակայն հարկաւոր է աւելացնել, որ՝ չը նայեած ալդ ահագին տարբերութեանը՝ նրանք բոլորն էլ ունեցել են մի ընդհանուր ծագում։ Այս, արդէն անվիճելի կերպով ապացուցուած է, որ անգլիական փքուածը, տաճկաց աղաւնին, դողդողանը եւ առհասարակ աղաւնիների բոլոր ցեղերը ծագել են վայրենի աղաւնուց։ Այս վերջինն է իրօք բոլոր աղաւնիների նախահայրը։ Կատ հին ժամանակներում երկրագնտի վերայ գոյութիւն ունէր միայն մի տեսակ աղաւնի, այն է վայրենի աղաւնին, որի սերունդները յետակալ ժամանակներում սաստիկ փոփոխուեցին և նրանցից գոյացան տաճկաց աղաւնին, դողդողանը, կարճաերես տուրմանը և բոլոր միւս աղաւնիները։

Ուրեմն պարզ է, որ գոնեա աղաւնինե-

րի մասին չէ կարելի ասել, որ նրանք իրանց գոլանալու սկզբից մինչև մեր ժամանակներըն անփոփոխ պահպանել են իրանց կերպարանքը։

Գալով ճագարներին՝ Դարվինը ցոյց է տալիս, որ բոլոր ընտանի ճագարների ցեղերը ծագել են մի ընդհանուր նախահայրից—վայրենի ճագարից։ Զը նախեած դրան՝ այժմ ահագին տարբերութիւն կալ ընտանի ճագարների և դրանց նախահայր—վայրենի ճագարի մէջ։ Օրինակ ընտանի ճագարի գանգը մէկ ու կէս անգամ աւելի երկար է քան նրա նախահօր գանգը։ Բայցի դրանից ընտանի ճագարի գանգի համարեա բոլոր ոսկորների թէ ձեր և թէ մեծութիւնը սաստիկ փոփոխուած են։

Նոյն բանը նկատուամ է, ինչպէս ցոյց տուեց Դարվինը, նաև շատ ուրիշ կենդանիների վերաբերմամբ։ Ուրեմն շնորհիւ Դարվինի՝ այժմ մեզ համար պարզ է, որ աղաւնիները, ճագարները և շատ ուրիշ կենդանիներ դարբերի ընթացքում խորին կերպով փոփոխուել են։

Ինչ վերաբերում է բոլսերին, յալտնուեց, որ նրանք նոյնպէս բացառութիւն չեն կազմում։ Դարվինը բազմաթիւ օրինակներով ապացուցեց, որ շատ բոլսեր նոյնպէս չունեն ալժմ

այն կերպարանքը, որ ունէին հարիւրաւոր տարիներ մեզնից առաջ:

Հիմայ մեզ մինչև անդամ տարօրինակ է թւում, որ այնպիսի երևելի գիտնականներ, ինչպէս Լիննէլը և Ֆօրժ Կիւվիէն, անդում էին, թէ կենդանիների և բոյսերի տեսակներն անընդունակ են փոփոխուելու: Ի՞նչպէս կարող էին նրանք ասել, թէ կենդանիները և բոյսերն իրանց ծագման օրից մինչև մեր ժամանակներն անփոփոխ պահպանել են իրանց կերպարանքը, երբ փաստերն ակներև կերպով ցոյց են տալիս դրա հակառակը:

Սակայն բանը նրանում է, որ այդ փաստերից շատերն անլայտ էին Լիննէլի և Փ. Կիւվիէի ժամանակները: Եթէ վերոցիշեալ փաստերը նրանց լայտնի լինէին, հազիւ թէ նըրանք պնդէին, թէ բոյսերի և կենդանիների տեսակներն անփոփոխ են:

Այդպէս ուրեմն Բիւֆֆօնի, Փ. Սենտ Իլէրի, Երազմ Դարվինի, Լամարկի և Վերջապէս Չարլզ Դարվինի ջանքերով կազմուեց մի լիակատար և գրաւիչ ուսմունք՝ վերաբերեալ կենդանիների և բոյսերի ծագմանը ու զար-

գացմանը: Ահա այդ ուսմունքի էական կետերը:

Օրգանական աշխարհի ծագման սկզբում կային միայն մի (կամ ամենաշատը՝ երկու—երեք) տեսակ էակներ, որոնք ունէին շատ ստորև պարզ կազմուածք: Զանազան պատճառների ազդեցութեան տակ այդ էակները սկսեցին փոփոխուել: Թէև կարձ ժամանակամիջոցում փոփոխութիւնը լինում էր չնչին և աննկատելի, բայց որովհետեւ նա անընդհատ կատարւում էր հազարաւոր տարիների ընթացքում, այդ պատճառով սկզբնական օրգանիզմներից ծագած սերունդները լետակալ ժամանակներում սկսեցին այնքան տարբերուել իրարից, որ էլ դժուար էր իմանալ, թէ նրանք ունեցել են մի ընդհանուր ծագում:

Այժմեան կենդանիների ու բոյսերի բազմաթիւ տեսակները հենց նոյն սկզբնական ստոր կազմուածք ունեցող նախահայրերի սերունդներն են: Համեմատութեան համար կարելի է մտաբերել, որ մարդիկ՝ անկասկած ունենալով մի ընդհանուր ծագում՝ ունէին սկըզբում միևնուն տիպարը: Բայց լետոյ՝ սփռուելով երկրագնտի զանազան կողմերը և ենթարկուելով բոլորպին տարբեր պարմանների, նըրանք սկսեցին փոփոխուել և տարբերուել:

Ալդպէս առաջացան բազմաթիւ, իրարից տարբերուղ, մարդկային ցեղեր:

Ո՞ նկատի ունենալով այն հանգամանքը,
ո՞ բոլուսերի և կենդանիների այժմեան տեսակ-
ներն անհամեմատ աւելի բարդ ու բարձր
կազմուածք ունեն քան նրանց նախահայրե-
րը, պէտք է ընդունենք, ո՞ օրդանիզմները
դարերի ընթացքում փոփոխուելով՝ զարգաց-
ման ստոր աստիճաններից ընթանում էին
դէպի աւելի բարձրները. նրանք միշտ և ան-
ընդհատ առաջադիմում էին, զարգանում
էին:

Ալդ առաջադիմութիւնը դեռ չէ վերջա-
ցած, մեր ժամանակի բոլուսերը և կենդանի-
ները շարունակում են անընդհատ փոփոխուել
և զարգանալ: Կանցնեն դարեր, փոքրիկ փո-
փոխութիւնները կը գումարուեն և այժմեան
տեսակներից կարտադրուեն կենդանիների և
բոլուսերի նոր տեսակներ, որոնք կը լինեն ա-
ւելի զարգացած, աւելի բարձր իրանց կազ-
մուածքով քան այժմեան օրդանիզմները:

Ալդ ուսմունքը կոչում է զարգացման
կամ առաջադիմութեան թէորիայ (теорія раз-
витія, теорія прогресса): Շատերն էլ անու-
անում են նրան էվոլյուցիոնական ուս-

մունկը*), իսկ ալդ ուսման ստեղծողներին—
Բիւֆֆօնին, Երազմ Դարվինին, Սենտ Իլե-
րին, Լամարկին և Զարլզ Դարվինին—էվոլյու-
ցիոնիստներ:

Լիննէլը և Ֆօրժ Կիւվիէն համարում
էին օրգանական բնութիւնն անփոփոխ, որոշ
տիպարներով ընդմիշտ սահմանափակուած,
անշարժ: Էվոլյուցիոնիստներն ընդհակա-
ռակը նոյն ընութեան մէջ գտնում են ան-
վերջանալի շարժում՝ եւ փոփոխութիւն,
անսահման առաջադիմութիւն՝ եւ զարգա-
ցում:

Համրկաւոր է արդեօք աւելացնել, ո՞ Շբ-
նորհիւ զարգացման թէորիալի՝ Լիննէլը և
Ֆօրժ Կիւվիէի թէորիան արդէն մոռացութեան
է տրուած. այժմ միակ ճշմարիտ ուսմունք
համարում է զարգացման ուսմունքը:

Շատերը զարգացման ուսմունքն անու-
անում են դարվինիզմ, սակայն, ինչպէս մի
փոքր ուշ կը տեսնի ընթերցողը, ալդ սխալ
է: Բուն դարվինիզմն իսկապէս կազմում է
զարգացման թէորիալի միայն մի մասը:

Ընդհանուր հայեացք ձգելով զարգացման

*) Évolution խօսքից, ո՞ նշանակում է շար-
ժում, զարգացում:

թէորիայի պատմութեան վերայ՝ մենք տեսնում
ենք, որ այդ ուսմունքն արդիւնք չէ մի գիտ-
նականի աշխատանքների, այլ ամբողջ մի
շարք երևելի մարդկանց ջանքերի։ Ամենից
առաջ ճշմարտութիւնը բացուեց Բիւֆօնի
աչքերին, որը սակայն դեռ չէր ըմբռնել բո-
լորովին պարզ կերպով մեծ ուսմունքի բոլոր
կէտերը։ Ֆօֆֆրուա Սենտ Իլէրը և Լամարկը
մի քանի քայլ առաջ ընթացան. նրանք ար-
դէն ճիշտ կերպով հասկացել էին զարգացման
մեծ օրէնքները։ Բայց ուրիշ բան է հասկա-
նալ, ըմբռնել մի որ և է ճշմարտութիւն
և ուրիշ բան է կարողանալ հիմնաւորապէս ա-
պացուցանել նրան։

Վերջապէս առաջ եկաւ Զարլզ Դարվինը,
որն անթիւ փաստերի ծանրութեան տակ ընդ-
միշտ խորտակեց Լիննէլի և Կիւվիէլի ուս-
մունքը։

Ինչ որ պատմեցի զարգացման թէորիայի
կազմուելու մասին ճիշտ է նաև համարեա
բոլոր մեծ գիւտերի վերաբերմամբ. ոչ մի մեծ
գիւտ չէ անւում լանկարծ, այլ երկար տա-
րիների ընթացքում նրա համար պատրաստ-
ում է հողը։ Դեռ գիւտն արուած չէ լինում,
երբ այս կամ այն ուսումնականը մութը և
անորոշ կերպով ակնարկում է նրա վերայ,

անգիտակցօրէն նախալատրաստելով գիտնա-
կաններին նոր ճշմարտութիւնը գտնելու և
ըմբռնելու համար։

Այդպիսով խկապէս սխալ է որ և է մեծ
գիւտի պատիւը ամբողջովին վերաբերել միմիայն
մի մարդուն։

III.

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է առաջադիմութեան պատմառը։ Եր. Պարպինի
եւ Լամարկի կարծիքը։ Անհաստական փոփոխականութիւնը։
Արուեստական ընտրութիւնը։ Ընտանի կենդանիների եւ բոյ-
սերի ցեղերը գրացել են շնորհիւ արուեստական ընտրու-
թեան։ Փառանգականութիւնը։ Ամփոփումը։

Մենք արդէն տեսանք, որ կենդանիների ու բոյսերի այժմեան բազմաթիւ տեսակները գոյացել են շատ ստոր սկզբնական էակներից։ Ծագելով վերջիններից՝ կենդանիներն ու բոյսերն անընդհատ փոփոխուել ու առաջադիմել են և հիմայ էլ առաջադիմում են։

Բնականաբար հարց է ծագում, թէ ինչ
է այդ տեսակ անընդհատ զարգացման պատ-
ճառը: Այն ինչ ոլժ է, որ առանց զարգարե-
լու մղում է բոյսերին և կենդանիներին դէ-
պի առաջադիմութիւն, դէպի զարգացում:

Հասկանալի է, որ դեպի առաջադիմու-

թիւն մղող ոլժը գործում է ոչ միայն մեր
ժամանակները. նա գործելիս է եղել հենց
այն օրից սկսած, երբ երկրագնտի վերայ ա-
ռաջին անգամ երևացել են կենդանի օրգա-
նիզմներ, որովհետև իրանց ծագման հենց
սկզբից բոյակը և կենդանիները սկսել են ա-
ռաջադիմել:

Տեսնենք թէ բնչպէս էին բացատրում
օրգանիզմների անընդհատ զարգացումը առա-
ջին էվոլյուցիոնիստները։ Ըստ Էլեազմ Դարվի-
նի և Լամարկի՝ թէ բոլոսերը և թէ կենդա-
նիներն՝ իրանց ծննդեան օրից սկսած՝ պարու-
նակում են իրանց մէջ մի առանձին ձգտում,
որը և ստիպում է նրանց կատարելագործուել
և զարգանալ:

Խօսելով այդ բացատրութեան մասին՝ Հերբերտ Սպենսերը իրաւացի կերպով նկատում է, որ «դա այն բացատրութիւններիցն է, որոնք ոչինչ չեն բացատրում»։ Իրաւ միթէ կարող է հարցը պարզել մի ինչ որ խորհըրդաւոր ձգտում, որին անկարելի է ուսումնասիրել, ուստի և անկարելի է նրա մասին որոշ գաղափար կազմել։ Մթիթէ կարող է հարցը պարզել մի ենթադրութիւն, որը ինքը մութն ու անհասկանալի է։

Այդպիսով Երազմ Գարվինը և Լամարկը

գտնելով այն մեծ իրողութիւնը, որ կենդա-
նիները և բոլսերն անընդհատ առաջադիմում
են, չը կարողացան գտնել նաև այդ առաջա-
դիմութեան բնական պատճառը:

Հարցը պարզեց Զարլզ Դարվինը, որի ա-
մենամեծ ծառայութիւնը կայանում է հենց
նրանում, որ նա գտաւ և նկարագրեց այն
երեկի գործօնը, որը մզել է և մզում է կեն-
դանի օրգանիզմներին դեպի անսահման ա-
ռաջադիմութիւն և զարգացում։ Զ. Դարվինը
դէն ձգեց իր նախորդների կիսագերբնական և
խորհրդաւոր՝ ներքին ձգտումի վերայ հիմնած
բացարութիւնը և ամենահասարակ ու բնա-
կան կերպով բացատրեց, թէ բնէ պատճառով
են առաջադիմում կենդանի արարածները։

Այդ բացատրութիւնն է, որ կոչում է
Դարվինի վարդապետութիւն։ Վերջինը յե-
նուած է մի քանի շարք փաստերի վերայ, ո-
րոնք կազմում են դարվինիզմի հիմքը, ուստի
անկարելի է ըմբռնել այդ վարդապետութիւ-
նըն առանց հիմնական փաստերի հետ ծանօ-
թանալու։

Տեսնենք ինչումն են կայանում այդ փաս-
տերը։

Ըսթերցողն անշուշտ նկատած կը լինի,
որ կենդանիների ձագերը յաճախ տարբերում
են իրանց ծնողներից։ Մի հաւից ստացած վա-
ռիկներն ըստ մեծի մասին չեն լինում բոլո-
րովին նման իրանց մօրը կամ հօրը. մի վա-
ռիկը տարբերում է իր ծնողներից վետուր-
ների գոյնով, միւսը կտուցի մեծութեամբ կամ
ձեռով, երրորդը ունենում է աւելի կոռուսէր
բնաւորութիւն քան նրա ծնողները... Համարեա
անկարելի է գտնել մի վառիկ, որը կատարե-
լավէս նման լինէր իր ծնողներից մէկին։
Միշտ լինում է տարբերութիւն վառիկների և
ծնողների մէջ, թէև շատ անգամ այդ տար-
բերութիւնը կարող է այնքան չնչին լինել,
որ կը մնայ աննկատելի։

Միևնույն բանը կը նկատենք, եթէ ու-
շագրութեամբ գիտենք մի որ և է կովի հօրթե-
րին կամ մի մատակի քուռակներին։ Այստեղ
նոյնպէս նոր սերունդների անհատները միշտ
քիչ թէ շատ զանազանում են իրանց ծնող-
ներից, միշտ քիչ թէ շատ փոփոխուած են
լինում։

Այդ երեսյթը կոչում է անհատական
փոփոխականութիւն (индивидуальная измен-
чивость) և նկատում է ոչ միայն ընտանի
կենդանիների շրջանում, այլ և վայրենիների

վերաբերմամբ. օրինակ աղուէսի ձագերը քեզ
թէ շատ տարբերւում են իրանց ծնողներից,
գալերի նոր սերունդներն էլ չեն լինում կա-
տարելապէս նման իրանց ծնողներին:

Սակայն հարկաւոր է աւելացնել, որ վալ-
րենի կենդանիների շրջանում անհատական
փոփոխականութիւնն աւելի թուլ կերպով է
արտայատւում՝ համեմատելով ընտանի կեն-
դանիների հետ։ Ուրիշ խօսքերով՝ ընտանի կեն-
դանիների ձագերը աւելի շատ են տարբեր-
ւում իրանց ծնողներից քան վալենի կենդա-
նիների ձագերը։

Այս բանում բացառութիւն չեն կազմում
և բոլոները. նրանք էլ ենթարկւում են ան-
հատական փոփոխականութեան օրէնքին։ Դրա-
նում համոզուելու համար բաւական է վեր-
ցնել միևնոյն բոլոսից, օրինակ, քսան սերմեր և
սերմել նրանց։ Եթէ համեմատենք այդ սեր-
մերից ստացած բոլոներին նրանց ծնողի հետ,
անշուշտ կը նկատենք նրանց մէջ փոքրիկ
տարբերութիւններ. օրինակ մէկի տերևները
կը լինեն մի փոքր աւելի մեծ կամ աւելի կա-
նաչ, միւսի ծաղիկների գոյնը կը լինի մի փոքր
աւելի փալուն, երբորդը կունենալ մի փոքր
աւելի մեծ սերմեր քան թէ այն բոլոր, որից
չափանիք չափանիք հետ համեմատած։

Այդպիսով անհատական փոփոխականու-
թիւնը ընութեան ընդհանուր օրէնք է, որին
ենթարկւում են երկրագնտի բոլոր կենդանի-
ներն ու բոլոսերը։

Նկատուած է, որ քանի աւելի փոփո-
խուեն մի որ և է օրգանիզմի կեանքի պայման-
ները, այնքան աւելի սաստկապէս է արտա-
յալտւում անհատական փոփոխականութիւնը
այդ օրգանիզմի սերունդների մէջ։ Օրինակ
եթէ վերցնենք մի զորդ վալենի ձագարներ,
որտանք նրանց աւելի շատ կերակուր քան նը-
րանք ստանում են բնութեան մէջ, զրկենք
նրանց ազատութիւնից, կողպելով վանդակի
մէջ—մի խօսքով՝ եթէ նկատելի կերպով փո-
խենք մեր ձագարների կեանքի պայմանները,
այն ժամանակ մենք կը նկատենք, որ մեր
ձագարներից առաջացած սերունդներն աւելի
սաստիկ են տարբերւում իրանց ծնողներից՝
վալենի ձագարների հետ համեմատած։

Անհատական փոփոխականութեան օրէն-
քով, ինչպէս և շատ ուրիշներով, մարդիկ ան-
գիտակցօրէն օգտուել են՝ սկսած ամենահին
ժամանակներից։ Ահա ինչպէս։
Քրիստոսի ծնունդից դեռ շատ դարեր ա-

ռաջ մարդուն աշողուել էր ընտանիացնել մի քանի տեսակ վայրենի կենդանիներ։ Վերջինների համար դա մի նոր աշխարհ մտնել էր. նրանց կեանքի պայմաններն ընտանիանալուց յետոյ փոխուել էին հիմնովին։ Կարող էին իրանք կենդանիները չը փոփոխուել այդ պայմաններում։ Յայտնի բան է ոչ։ Եւ իրօք առաջացան բազմաթիւ փոփոխութիւններ ընտանիացրած կենդանիների սերունդների մէջ։

Ուրիշ խօսքերով՝ անհատական փոփոխականութիւնը, որը գոյութիւն ունէր այդ կենդանիների շրջանում առաջ, սկսեց աւելի սաստկապէս արտայալութել նրանց կեանքի պայմանները փոխուելուց յետոյ (ընտանիանալուց յետոյ)։

Հաւանական է, որ սկզբում մարդիկ ուշադրութիւն չէին դարձնում այդ փոփոխութիւնների վերայ, բայց յետոյ նրանք սկսեցին օգտուել անդիտակցաբար կենդանիների անհատական փոփոխականութիւնով։ Երբ մի որ և է կենդանուց առաջանում էր սերունդ՝ բաղկացած իրարից փոքր ՚ի շատէ տարբերուող անհատներից, մարդիկ վերջիններից ընտրում էին միայն այնպիսիներին, որոնք ունէին որ և է (մարդու համար) օգտակար առանձնայտակութիւն։ Մի մատակից ստացած բոլոր

քուռակների վերայ միատեսակ ուշադրութիւն չէր դարձնում. նրանցից մարդ ընտրում էր ամենաուժեղներին կամ ամենագեղեցիկներին, դրանց առանձին խնամքով մեծացնում էր ու աշխատում, որ անսպատճառ այդ լաւերից ստանայ նոր քուռակներ։

Այդ բանը մարդ կատարում էր դարերի ընթացքում թողնելով ամեն մի սերունդից ամենալաւ անհատներին և նրանց գլխաւորապէս բազմացնելով։

Դեռ Երիկտոնը, որ ապրում էր մի քանի տասնեակ տարիներ Տրոյական պատերազմից առաջ, մեծ ուշադրութիւն էր դարձնում այդ տեսակ ընտրութեան վերայ. նա ունէր շատ մատակներ, «որոնք՝ շնորհիւ որձերի խելացի ընտրութեան, տալիս էին ձիաների ամենաընտիր տեսակն ամբողջ շրջակալքում»։

Ալեքսանդր Մակեդոնացին իր արշաւանքի ժամանակ հաւաքում էր ամենաընտիր կենդանիներին, որպէս զի նրանց ուղարկի Մակեդոնիա՝ այդտեղի կենդանիների տեսակները կատարելագործելու...

Վիրգիլիոսն իր կողմից խորհուրդ էր տալիս ընտրել միայն մեծ սերմերը և նրանց սերմել՝ բոյսերը կատարելագործելու համար։ Կենդանիների և բոյսերի ամենալաւ ան-

հատների ընտրութիւնը կոչւում է՝ արուեստական ընտրութիւն (искусственныи подборъ):

Սկսուելով ամենահին ժամանակներից և գործելով տասնեակ դարերի ընթացքում՝ արուեստական ընտրութիւնը մեծ փոփոխութիւն է առաջ բերել. ընտանի կենդանիները՝ շնորհիւ արուեստական ընտրութեանը՝ ոչ միայն կատարելադորձուել, առաջադիմել են*), այլ եւ նրանցից զոյացել են քոլորովին նոր ցեղեր:

Փոկ մեր ժամանակներում արտասահմանի անասնապահները և այգեգործները հրաշքներ են գործում օգտուելով արուեստական ընտրութեամբ. Համարեա ամիս չէ անցնում, որ երեան չը գան բոյսերի և կենդանիների նորանոր ցեղերը: «Արուեստական ընտրութեան օգնութեամբ, ասում է Խւվատը, երկրագործը կարող է ոչ միայն թեթև կերպով փոփոխել իր հօտը, այլ և վերաստեղծել նրան»:

Այժմ արուեստական ընտրութիւնն էլ անդիտակցաբար չէ կատարում առաջուայպէս. Հիմիկուան անասնապահն առաջ որոշում է այն տիպարը («իդէալը»), որը այժմ չունեն-

*.) Մարդու օգտի և զուարձութեան տեսակէտից՝ յայտնի բան է:

նրա կենդանիները, բայց որը ցանկալի է որ ունենալին, յետոյ աշխատում է այնպիսի ուղղութիւն տալ արուեստական ընտրութեանը, որ իր կենդանիները փոփոխուելով՝ ստանան հենց նոյն տիպարը:

Ունենալով հասարակ ձիաներ և մտքում գնելով արտադրել սաստիկ արագ վազող ձիաներ, անգլիացիք՝ արուեստական ընտրութեան շնորհիւ հասել են ալդ նպատակին. այժմ նրանք ունեն այնպիսի արագավազ ձիաներ (անգլիական սկակօնայի), որոնց նմանը չը կալ ամբողջ աշխարհում:

Մի քանի ուրիշ անասնապահներ՝ ունենալով սկզբումը նոյն հասարակ տեսակի ձիաները, մտադիր եղան նրանցից ստեղծել ոչ թէ արագ վազող, այլ ամենաուժեղ և ամենամեծ ձիաների տիպարը: Այդպիսի նպատակ գնելով՝ նրանք սկսեցին իրանց հասարակ ձիաների սերունդներից ընտրել միմիայն ամենաուժեղներին և նրանց միայն բազմացնել: Երկար տարիների ընթացքում և բազմաթիւ սերունդների վերաբերմամբ գործելով ալդպէս, նրանք վերջապէս իրագործեցին իրանց միտքը՝ արտադրելով ձիաների նոր տիպար: Վերջին տիպարի ձիաները (լոմօնայի) պար:

զարմացնում են մարդուն իրանց սարսափելի
ուժով և աշագին հասակով:

Ուրեմն՝ նայած թէ ինչ ուղղութիւն կը
տանք արուեստական ընտրութեանը, մենք կա-
րող ենք միևնոյն սկզբնական տեսակից
արտադրել այս կամ այն տիպարը:

Դրանով է բացատրում, որ միևնոյն
վայրենի ազաւնուց ստացուել են այնքան ի-
րարից տարբերուող ցեղեր՝ ինչպէս «անգլիա-
կան փռուածը», «տաճկաց աղաւնին», «փոք-
րաերես տուրմանը», և միւսները։ Աղաւնի-
ներ պահողներից մի քանիսներն ընտրելիս են
եղել իրանց աղաւնիների սերունդներից մի-
միայն ամենափոքրիկ գլուխ ունեցողներին և
դրանցից գոյացել է այժմեան փոքրաերես
տուրմանը։ Միւսներն ընդհակառակն ընտրե-
լիս են եղել ամենաերկար կտուց ունեցողնե-
րին և դրանցից առաջացել է տաճկաց աղաւ-
նին և այլն։

Իսկ ինչ վերաբերում է բոլորին՝ նրանք
նոյնպէս սաստիկ առաջադիմել են շնորհիւ
արուեստական ընտրութեանը, ինչպէս պատ-
մում են նրանք, որոնք համեմատել են այժ-
մեան բոլորն աւելի հին ժամանակների

բոլորի հետ (աւելի ճիշտ է ասել՝ նրանց նը-
կարների հետ):

Սյուպէս ուրեմն արուեստական ընտրու-
թիւնը մեծ դեր է կատարել ընտանի կենդա-
նիների և բոլորի այժմեան բազմաթիւ ցե-
ղերի գոյանալում։

Նոյնպէս պարզ է, որ արուեստական
ընտրութիւնն ոչինչ չէր կարող անել, եթէ
չը լինէր անհատական փոփոխականութիւնը։
Եթէ, օրինակ, մի մատակից ծնուած բոլոր
քուռակները լինէին բոլորովին նման իրանց
մօրը, ինչ ընտրութիւն կարելի էր անել այդ
դէպքում։ Եթէ նոր սերունդների անհատնե-
րի ու նրանց ծնողների մէջ գոնեա փոքրիկ
տարբերութիւն չը լինէր, այն ժամանակ կեն-
դանիների և բոլորի տեսակներն ընդմիշտ կը
մնալին միևնոյնը։

Սակայն պէտք է աւելացնեմ, որ բացի
անհատական փոփոխականութիւնից և արուես-
տական ընտրութիւնից՝ մի ուրիշ սկզբունք
էլ է մեծ դեր կատարում ընտանի կենդանի-
ների և բոլորի ցեղերի գոյանալում։ Սյու-
պէս ժառանգականութիւնն է, որն ար-
ատայտուում է նրանով, որ նոր սերունդների

անհատները ձգտում են իրանց մէջ պահպանել՝ իրանց ծնողների մարմնի և բնաւորութեան՝ զլիսաւոր գծերը։ Ժառանգականութիւնըն այնքան տարածուած և յայտնի սկզբունք է, որ աւելորդ է նրա մասին երկար խօսելը։ Այստեղ ես կը նկատեմ միայն, որ առանց ժառանգականութեան՝ արուեստական ընտրութիւնը և փոփոխականութիւնը չէին կարող առաջացնել օրգանիզմների ոչ մի նոր ցեղ։

Բերեմ մի օրինակ. ենթադրենք, որ մի անասնապահ ստացել է իր կովից մի քանի հորթեր, որոնցից երկուսն աւելի մեծ և աւելի լաւ են քան միւսները։ Յետոյ ենթադրենք, որ նա լաւերին պահում է, իսկ մնացածներին ոչնչացնում է։ Լաւերին մեծացնելուց յետոյ՝ նա ձգտում է դրանցից ստանալ նոր սերունդ։ Եթէ չը լինէր ժառանգականութիւնը, այն ժամանակ լաւ անհատներից ստացած սերունդները չէին կարողանալ պահպանել իրանց ծնողների լաւ յատկութիւնները։

Այդպիսով օրգանիզմներն առանց ժառանգականութեան միմիայն շարունակ կը փոփոխուէին. նոր սերունդները չէին ունենալ նմանութիւն հների հետ։ Վերցնենք անդիմական արագավագ ձիաներին. Եթէ ժառանգականու-

թիւն չը լինէր, այն ժամանակ այդ ձիաներից ստացած անհատները կարող էին նման լինել ոչ թէ իրանց արագավագ ծնողներին, այլ մի որևէ անպէտք ցեղի ձիաներին։

Ուրեմն ընտանի կենդանիների և բոլերին մէջ նոր ցեղերի գոյանալու լիակատար պատկերը սա է։

Անհատական փոփոխականութեան օրէնքի հիման վերայ՝ նոր սերունդի անհատները մի փոքր զանազանութ են իրանց ծնողներից։ Օգտուելով դրանով՝ անասնապահն ընտրումէ այդ անհատներից ամենալաւերին, նրանց մեծացնում է ու յետոյ բազմացնում։ Իսկ նրանցից առաջացած նոր սերունդները՝ ժառանգականութեան ոկրունքին համաձայն՝ պահպանում են իրանց ծնողների լաւ յատկութիւնները։

Ժառանգականութիւնը և փոփոխականութիւնն իրար հակառակ սկզբունքներ են, առաջինը ձգտում է պահպանել ծնողների տիպարը, երկրորդը՝ հեռացնել նոր սերունդները պարը. ժիապարից։ Ժառանգականութիւնը պահպանողական սկզբունք է, իսկ փոփոխականութեան շնորհիւ գոյանում է առաջադիմութիւն։ Այդ երկու սկզբունքները՝ գործելով թիւն։ Այդ երկու սկզբունքները՝ գործելով միասին ամեն մի օրգանիզմի մէջ, զսպում են միասին ամեն մի օրգանիզմի մէջ, զսպում են

իրար, որովհետև, եթէ լինէր միայն ժառանգականութիւնն առանց փոփոխականութեան, այն ժամանակ ընտանի կենդանիները և բոլորը կը մնալին ընդմիշտ անշարժ, սահմանափակուած միևնույն տիպարով, իսկ եթէ լինէր միայն փոփոխականութիւնը—օրգանիզմները միայն անընդհատ կը փոփոխուէին, առանց արտադրելու հաստատ ցեղեր:

IV.

ԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Մայթուսի թէորիան, Գոյութեան կոիւ. Բնական ընտրութիւն:

Պարզ է ուրեմն, որ եթէ ընտանի կենդանիները և բոլորն անընդհատ կատարելագործուելիս են եղել, եթէ նրանցից գոյացել են բազմաթիւ նոր և աւելի ընտեր ցեղեր, այդ կատարուել է շնորհիւ արուեստական ընտրութեան: Ամեն մի սերունդից ընտրելով ամենալաւ անհատներին և նրանց միայն բազմացնելով, մարդ պատճառ է դառել իր կենդանիների և բոլորի անդադար զարգանալուն:

Սակայն մեզ լայտնի է, որ անընդհատ զարգացումն օրէնք է ոչ միայն ընտանի կենդանիների և բոլորի համար, այլ և տոհագանիների կը լինէր ենթագրեած ամառական մասունքների համար և ամառական մասունքների համար:

բողջ ընութեան մէջ միակ առաջադիմական գործօնն արուեստական ընտրութիւնն է: Մարդկիկ աշխատում են կատարելագործել միմիայն ընտանի կենդանիներին ու բոյսերին, իսկ մնացած օրգանիզմների զարգացման մասին նրանք չեն էլ մտածում: Ում դարդ է կտրել գնալ վայրենի կենդանիների կամ բոյսերի մէջ արուեստական ընտրութիւնով պարապել՝ նրանց կատարելագործելու նպատակով: Միւս կողմէց հասկանալի է, որ այդ տեսակ ընտրութիւնը վայրենի կենդանիների և բոյսերի շըշանում ուղղակի անիրագործելի է:

Ապա ինչպէս է կատարւում վայրենի կենդանիների ու բոլոսերի զարգացումը:—Ահա այն հարցը, որ ամենից շատ էր զբաղեցնում Զ. Դարվինին:

Մի հանգամանք օգնեց Զ. Դարվինին
լոյս ձգել հետաքրքրող հարցի վերաբ: Պա-
տահմամբ նրա ձեռքն ընկաւ հռչակառը
թովմաս Մայլթուսի քաղաքատնտեսական
գրուածքը, որի նիւթն էր ազգաբնակու-
թեան աճումը: Մայլթուսի գիրքը մեծ ազդե-
ցութիւն ունեցաւ Դարվինի աշխարհականցո-
ղութեան վերաբ:

Հաստ Մայլթուսի՝ մարդկային ցեղը ձգտում
է վերին աստիճան արագ կերպով բազմանա-

լու: Մինչդեռ մարդկանց բազմանալը կատարվում է չափազանց արագ կերպով, ապրուստի միջոցները շատանում են սաստիկ գանգաղ կերպով: Այնպէս որ կեանքը պահպանելու միջոցները չեն կարողանում բաւարարութիւն տալ նոր առաջացած մարդկային բազմաթիւ սերունդներին: Դրա հետևանքն այն է լինում, որ առաջ եկած սերունդների մի մասը՝ սնունդ չը լինելու պատճառով՝ ստիպուած է լինում անհետանալ, ոչնչանալ....

Դարվինը, ընդունելով Մայմուսի թէորիան, ընդհանրացրեց նրան, ցոյց տալով, որ աճման նոյն օրէնքին ենթարկվում են, բացի մարդկանցից, նաև բոլոր կենդանի արարածները:

Մարդկանց նման կենդանիներն ու
բոյսերը ծգողում են չափազանց արագ կեր-
պով քազմնալու: «Մի բրածուկի (տրեսկա)
ձկնկիթը, ասում է Գրանտ Ալեքս, երբեմն
պարունակում է մինչև տասը միլիոն ձու:
Եթէ նրանց ամեն մէկից դուրս գար ձուկն
ու զարգանար, այն ժամանակ ծովը կը դառ-
նար բրածկների կոլտ»:

Նոյն բանը նկատում է նաև ըովուների վերաբերմամբ. Գրանք նոյնպէս տալիս են ահա-գին քանակութեամբ սելմերու սաղմեր, որոնցից

միմիայն փոքրիկ մասն է կարողանում հասնել լիակատար զարգացմանը, իսկ մեծագոյն մասն ոչնչանում է սնունդի և տեղի պակասութեան պատճառով*):

Այդպիսով կենդանիների ու բոյսերի անթիւ սերունդներից միայն մի մասն է կարողանում պահպանել իր գոյութիւնը, մնացածները մեռնում ու անհետանում են երկրագնտի երեսից:

Մեծ միամտութիւն կը լինէր կարծել, թէ այդ վերջինները կամովին կամ հեշտութեամբ են զիջանում կեանքի ասպարեզն իրանց բաղդաւոր ընկերակիցներին: Այստեղ կամովին զիջանելու մասին խօսք էլ չէ կա-

*) Մայլթուսի ուսմունքն այժմ ընդունում է ոչ անպայման: Դիտնականներից ոմանք առարկում են սուելով, որ մարդկանց կեանքն ապահովացնող միջոցները նոյնպէս կարող են արագ կերպով շատանալ՝ չնորհիւ արուեստական միջոցների: Այդ առարկութիւնն իրաւացի է միայն մարդկանց վերաբերմամբ, իսկ ընդհանրապէս բոլոր կենդանիների և բոյսերի վերաբերմամբ նա չի կարող տեղի ունենալ, որովհետեւ վերջինների շրջանում չեն կարող գործադրուել արուեստական միջոցներ: Այնպէս որ Մայլթուսի թէորիան բոլորովին ճիշտ է կենդանիների և բոյսերի վերաբերմամբ:

րող լինել: Ամեն մի էակ՝ լինի նա կենդանի կամ բոյս՝ լոյս աշխարհ տեսնելով, ամեն շանք գործ է դնում իր գոյութիւնը պահպանելու համար: Բայց որովհետեւ ապրել ցանկացողներ անթիւ կան, իսկ սնունդ ու տեղ քիչ է, ուստի և առաջ է գալիս նրանց մէջ սարսափելի կոիւ—կոիւ անհատական գոյութիւնը պահպանելու համար: Ամեն մի անհատ աշխատում է վնասել, սպանել, ուտել իր ախոյաններին, որպէս զի ինքը կարողանալ պահպանել իր կեանքը:

Այդ բանն է, որ կոչում է գոյութեան կոիւ (նօրինա չափանիկ) և որն իշխում է ամբողջ բնութեան մէջ: Այդպիսով գոյութեան կոիւը մի անխուսափելի հետեանք է կենդանիների ու բոյսերի չափագանց սաստիկ բազմանալու:

Մանաւանդ սռսկալի է լինում կեանքի կոիւը միենոյն տեսակին պատկանող անհատ նիրի մէջ. առիւծները կուռում են իրար հետ նիրի մէջ. առիւծները կուռում են իրար հետ նոյնպի համար, խոտակերների մէջ առաջանունդի համար, խոտակերների մէջ առաջանունդ է ընդհարում խոտառեգերի պատճանում է ընդհարում խոտառեգերի պատճանում է հեռով: Այդ մասին Գրանտ Ալենը ասում է հեռով:

«Հացթուխը կեանքի կուռում չէ վախենում մսավաճառից, այլ նրա տունը երբեմն

քանդում է միւս հայթուխի մրցումը... Ար-
հեստաւորին զինուորը չէ սպանում, այլ միւս
արհեստաւորները, որոնք առաջարկում են ի-
րանց ծառայութիւններն աւելի փոքրիկ գնով
և ձգտում են բռնել ամեն մի ազատ տեղ:
Այդ սկզբունքի հիման վերալ խոտակերների
ամենամեծ թշնամիները գիշատիչները չեն,
այլ միւս խոտակերները»:

Որ կենդանիները կարող են կռուել իրար
հետ սնունդի համար—այդ հասկանալի է: Բայց
ինչպէս հասկանալ կեանքի կռիւը բոյսերի
վերաբերմամբ: Ի՞նչպէս կարող են մրցել, կռ-
ռուել իրար հետ բոյսերը, որոնք շարժուել
էլ չեն կարող իրանց տեղից: Ինչքան էլ որ
տարօրինակ թուայ, սակայն իրողութիւնն այն
է, որ կեանքի կռիւը գոյութիւն ունի նաև
բոյսերի շրջանում: Եւ այդ բանում հեշտ կը
համոզուեինք, եթէ վերցնէինք մի կտոր հող,
սերմէինք միենոյն տեղում զանազան բոյսերի
սերմեր մեծ քանակութեամբ ու յետոյ սկսէ-
ինք դիտել: Սկզբումը, երբ երեսում են փոք-
րիկ բոյսերը, նրանք ունենում են մօտաւորա-
պէս միենոյն տեսքը, բայց յետոյ բանը փոխ-
ուում է: Ուժեղ, շուտ զարգացող բոյսերը,
կարճ ժամանակից յետոյ սաստիկ բարձրանա-
լով տարածում են իրանց ճիւղերն ու տերե-

ները, ինչքան որ կարող են. իսկ նրանց հա-
րեան աւելի քնքոյշ բոյսիկները, զրկուելով
արեգակի ճառագալիթներից, էլ չեն կարողա-
նում կարգին զարգանալ, որովհետեւ բոյսերի
զարգացման համար լոյսն անհրաժեշտ է:

Այդ դեռ բաւական չէ. բոյսերի մրցումը
կատարում է ոչ միայն հողի երեսին, այլ և
հողի մէջ, արմատների միջոցով. ամուր, շուտ
զարգացող արմատները կարճ ժամանակից լե-
տոյ սաստիկ տարածուելով հողի մէջ՝ կլանում
են հողի մէջ գտնուող ջուրը և սննդական
նիւթերը, թողնելով առանց սնունդի աւելի
քնքոյշ և նուազ արմատներ ունեցող բոյսե-
րին:

Այդպիսով գոյութեան կռիւը էութեամբ
սոյնն է թէ մարդկանց, թէ կենդանինե-
նոյնն ամեն ամեն ամուսնում: Ամեն տեղ ան-
ուի և թէ բոյսերի շրջանում: Ամեն տեղ ան-
հատները ձգտում են ինչքան կարելի է աւե-
լի շատ սնունդ խլել իրանց ընկերներից կամ
աւելի մեծ տարածութիւններ բռնել:

Յաճախ կեանքի կռիւը արտայալտւում է
վերին աստիճան բարդ կերպով և ունենում
է զարմանալի հետեանքներ: Ահա ինչ է
պատմում այդ մասին Դարվինը: Յենուելով իր
փորձերի վերալ Դարվինը պիտում է նախ,
բայց առույթ (Բլեւեր) բոյսի բեղմնաւորու-
որ առույթ (Բլեւեր)

թեան, ուստի և բազմանալու, համար անհը-
րաժեշտ են իշամեղուներ (шмелյ): Կը նշա-
նակի, որ եթէ մի որևէ երկրում չը լինեն
իշամեղուներ, այնտեղ առուղյան անկարող կը
լինի բազմանալ: Միւս կողմից ամեն երկրում
իշամեղուների քանակութիւնը կախուած է լի-
նում գաշտամկների քանակութիւնից, որոնք
ոչնչացնում են իշամեղուների ահագին քա-
նակութիւն: Սակայն գաշտամկներն էլ իրանց
թշնամիներն ունեն. խօսքս կատուների մա-
սին է, որոնք սիրում են կերակրուել գաշ-
տամկներով: Այդ է պատճառը, որ գիւղերի
մօտ, ուր շատ կատուներ են լինում, գաշ-
տամկներ քիչ կան, իսկ գաշտամկների քիչու-
թիւնն օգնում է իշամեղուների սաստիկ բազ-
մանալուն, ուստի և առուղյան առատ բեղմնա-
ւորութեանը:

Այստեղից Թարվինը դուրս է բերում այն
եզրակացութիւնը, որ առուլութի քանակու-
թիւնը մի որևէ երկրում կախուած է լինում
յաճախ կատուների քանակութիւնից, որով-
հետեւ եթէ մի տեղ շատ կատուներ կան, դը-
րանք ուտելով գաշտամկներին քիչացնում են
վերջինների քանակութիւնը։ Այս գործով կա-
տունները մեծ ծառայութիւն են մատուցում
իշամեղուներին, կոտորելով՝ դրանց թշնամինե-

ըին—դաշտամկներին։ Դրա հետևանքն այն է լինում, որ իշամեղուներն արագ կերպով բազմանում են և, նպաստելով առուղյութիւններութեանը, օգնում են այդ բոլոսի սաստիկ բազմանալուն։

Այժմ տեսնենք թէ ինչ հետևանք է ունենում կեանքի կրիւը:

Ըստերցողն անկասկած կը լիշէ, որ սոր
առաջացած սերունդների անհատները մեծ
կամ փոքր չափով տարբերում են իրանց ծը-
նողներից. անհնարին է գտնել մի սերունդ,
որի անհատները կատարելապէս նման լինեին
իրար և իրանց ծնողներին:

Ի նկատի ունենալով այդ՝ դժուար չի
լինիլ իմասնալ, թէ Բնձ հետևանք է ունե-
նում կեանքի կոիւը։ ԶԵ որ նա կատարում
է բազմաթիւ զանազան անհատների մէջ, ո-
րոնց թւում կան և՛ ուժեղները, և՛ նուագ-
ները, և՛ ճարպիկներն ու խորածանկները, և՛
միամիտները, խելօքները ու լիմաները։

Գայլերի ըոլոր ձագերը չեն ունենում
միևնույն ոյժը, ճարպիկութիւնը կամ միևնույն
խելքը, ուստի և կեանքի կոփւը նրանց բո-
լորի համար միևնույն հետեւանքը չէ ունե-

Նում: Կեանքի կրուսմ միայն նրանք են յաղթող հանդիսանում, որոնք իրանց ընկերներից աւելի ուժեղ կամ աւելի ճարպիկ են, կամ առհասարակ՝ որոնք որեւէ առաւելութիւն ունեն իրանց ընկերների հետ համեմատած:

Երբ «մի որեւէ կտոր հողի վերայ, ասում է Գրանտ Ալլենը, երեան են գալիս հազարաւոր բոլորիներ, որոնցից միայն մի քանիսը կարող են ապրել (սնունդի և տեղի քչութեան պատճառով), նրանց մէջ սկսում է կոփւ, որից յետոյ կենդանի են մնում միմեալն ամենառժեղները...»

Սա մի իսկական ընտրութիւնն է ամենառժեղ, ամենախելօք, ամենակատարեալ անհատների և բոլորովին նման է ընտանի կենդանիների ու բոլորի ընտրութեանը: Զանազանութիւնը միայն նրանում է, որ վայրենի կենդանիներից և բոլորից ամենալաւ անհատների ընտրութիւնը կատարում է ոչ թէ մարդը, այլ ինքը բնութիւնը՝ կեանքի կռուի միջոցով: Ուստի և այդ վերջին տեսակ ընտրութիւնը կոչում է ընական ընտրութիւն (естественный подбор):

Ենորհիւ բնական ընտրութեան՝ կենդանիների և բոլորի սերունդների բազմաթիւ

անհատներից ոչնչանում են ամենաթողերը կամ ամենաանընդունակները, իսկ ուժեղները կամ ընդունակները պահպանում են իրանց գոյութիւնը և, հասնելով լիակատար զարգացմանը, տալիս են նոր սերունդներ, որոնք ժառանգում են իրանց ընտիր ծնողների օգտականութիւնները:

Եթէ ՚ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ բնական ընտրութիւնը ներգործել է կենդանիների և բոլորի վերայ բազմաթիւ գարերի ընթացքում՝ ընտրելով նրանցից ամենաընդունակներին կամ ամենաուժեղներին և ոչնչացնելով տկար անհատներին, այն ժամանակ կը գանք այն եզրակացութեան, որ բնական ընտրութիւնն ահագին ազդեցութիւն է ունեցել կենդանի արարածների զարգացման վերայ: Բնական ընտրութիւնն է այն հսկայական ոյժը, որը միեւ է եւ մղում է կենդանիներին ու բոյսերին դէպի անընդհատ առաջադիմութիւն եւ զարգացում:

Աւելրդ չի լինիւ նկատել, որ լինում են և մի քանի բացառիկ գէպքեր, երբ բնական ընտրութիւնն ոչ միայն չէ մղում օրգանիզմներին գէպի առաջադիմութիւն, այլ ընդհակառակը ստիպում է նրանց յետագիմել. այդ կառակը ստիպում է նրանց յետագիմել. այդ լինում է այն ժամանակ, երբ յետագիմելն աւ 7

ւելի օգտաւէտ է օրգանիզմի համար: Բերեմ
մի օրինակ. ընթերցողն անշուշտ գիտէ, որ
մարդու և մի քանի կենդանիների մար-
սողական խողովակում յաճախ ապրում են զա-
նազան պարագիտային որդներ: Ահա այդ
պարագիտների վերաբերմամբ յախոնի է, որ
նրանք ժամանակի ընթացքում սաստիկ յե-
տագիմել են. նրանց նախահայրերը պարագիտ-
ներ չեն եղել և ունեցել են անհամեմատ ա-
ւելի բարձր կազմուածք քան այժմեան նրանց
սերունդները: Այս յետագիմութիւնը կատա-
րուել է հետեւեալ կերպ. երբ վերոյիշեալ որդ-
ների սերունդները, փոխելով իրանց կեանքի
ձեր և պարագիտներ դառնալով, սկսել են ապ-
րել մարդու կամ ուրիշ կենդանիների մարսո-
ղական խողովակում, այն ժամանակից սկսած
մի քանի օրգաններ նրանց համար դառել են
բոլորվին աւելորդ և նոյն իսկ վնասակար:
Վերցնենք, օրինակ, աչքը. ստամոքսում ապ-
րող մի որևէ պարագիտի. համար աչքերն ոչ
միայն աւելորդ են, այլ և նոյն իսկ վնասա-
կար, որովհետեւ այդ պարագաներում աչքերը
յաճախ պատճառ կարող էին դառնալ գանա-
զան հիւանդութիւնների: Այդ է պատճառը,
որ պարագիտները ժամանակի ընթացքում
կորցրել են իրանց աչքերը, շարժուելու օր-

գանները, իսկ մի քանիսները զրկուել են նոյն
խոկ մարսողական խողովակից: Ուրեմն այս
գէպքում ընական ընտրութիւնը մղել է որդ-
ներին գէպի յետագիմութիւն, որովհետեւ այդ
է աւելի օգտաւէտ եղել:

Բայց առհասարակ այսպիսի գէպքերը,
ինչպէս վերև նկատեցի, բացառութիւն են
կազմում: Իսկ ընդհանուր օրէնքը նա է, որ
օրգանիզմների համար անհամեմատ աւելի օգ-
տաւէտ է առաջագիմութիւնը քան յետագի-
մութիւնը. առաջագիմող, զարգացող օրգա-
նիզմները գոյութեան կուռում միշտ յաղթում
են իրանց այն ընկերներին, որոնք կամ յե-
տագիմում են կամ ընդունակ չեն առաջագի-
մելու:

Այդպիսով թէև մինչև Դարվինի երեան
գալն էլ գիտէին, որ բոյսերը և կենդանինե-
րը՝ սկսած ամենահին ժամանակներից՝ առա-
ջագիմելիս են եղել, բայց թէ ինչ է այդ ա-
ռաջագիմութեան պատճառը—այդ չը գիտէին:
Դարվինն ապացուցեց, որ այդ զարգացման
կամ առաջագիմութեան պատճառը մի տեսակ
ընտրութիւն է, որը սաստիկ նման է արու-
եստական ընտրութեանը և որին նա անուա-
նեց ընական ընտրութիւն: Ահա այս բացատ-
րութիւնն է, որ կոչում է դարվինիզմ՝ կամ

Դարվինի վարդապետութիւն ՚ի պատիւ Զարլզ
Դարվինի:

Դարվինի տուած բացատրութիւնն այնքան պարզ ու ակներև էր, որ շատերը մնացել էին զարմացած, թէ այդ թնչպէս է պատահել, որ ոչ ոքի գլխում չի ծագել մի այդպիսի վերին աստիճանի հասարակ միտք: Իրաւ, եթէ ճիշտ է, որ կենդանիներն ու բոյսերը բազմանում են այնքան արագ կերպով, որ եղած սնունդը չէ կարող բաւականացնել բոլորին — այն ժամանակ պարզ է, որ նրանց մէջ պէտք է սկսուի կեանքի կույ: Խսկ երբ կեանքի կույ է սկսում այնպիսի անհատների մէջ, որոնց ոլժերն անհաւասար են — հասկանալի է, որ յաղթութիւնը կը մնալ ուժեղների կողմը, իսկ նուազները ստիպուած կը լինեն անհետանալ: Սրանից էլ պարզ թնչ կառող է լինել:

ԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Նոր, կատարելագործուած տեսակների ծափումը Հին տեսակների ոչնչանալը: Օրգանիզմների յարմարացումը շըրջապատող պայմաններին: Միմիտիզմ:

Երբ՝ շնորհիւ Զարլզ Դարվինի՝ յայտնի եղաւ բնական ընտրութեան գոյութիւնը բնութեան մէջ, այն ժամանակ յանկարծ բացատրուեցան բազմաթիւ երևոյթներ, որոնք մինչև այդ ժամանակներն անբացարելի էին չեւ այդ ժամանակներն անբացարելի լուհամարտում: Այդ երեսոյթները յանկարծ լուսբանուեցին, պարզուեցին շնորհիւ Դարվինի մեծ գիւտի:

Յայտնի էր, որ բնութեան մէջ յաճախ ծագել են և ծագում են նոր, կատարելագործագել են և ծագում են նոր, կատարելագործագործուած տեսակներ, իսկ հներից շատերը ժամանակի ընթացքում անհետացել են և շամանակի մէջ այժմ էլ անհետանալ, ոչնչա-

նալ՝ տալով իրանց տեղն աւելի նոր և աւելի կատարելագործուած տեսակներին։ Բայց միւնոյն ժամանակն ոչ ոք չէր իմանում, թէ այդ բնչպէս է կատարւում հին տեսակների ոչնչանալը կամ նորերի ծագումը։

Մի նշանաւոր երեսոյթ էլ կալ, որը նոյնպէս անբացատրելի էր համարւում մինչև բընական ընտրութեան գիւտը, այդ երեսոյթը—կենդանիների ու բոյսերի յարմարացումն է վշջապատող պայմաններին։ Թէ այս երեսոյթը և թէ վերոյիշեալները զարմանալի հեշտութեամբ բացատրուեցան դարվինիզմի օգնութեամբ։ Ծանօթանանք այդ բացատրութիւնների հեա։

Նախ տեսնենք, թէ բնչպէս են առաջանում նոր տեսակները բոյսերի և կենդանիների շրջանում՝ ըստ Զ. Դարվինի։ Խնդիրը կը պարզուի մի քանի օրինակներից։

Ում չէ յայտնի, որ միջատների և միւս մանր կենդանիների ամենամեծ թշնամիները թուչուններն են. օր չի անցնում, որ հազարաւոր միջատներ չը սպանուեն ու կերակուր չը դառնան թուչունների համար։ Վայ միջատների այն տեսակին, որն անկարող կը լինի հնարներ գործ գնել ինքնապաշտպանութեան համար։ Կարճ ժամանակից յետոյ այդ տեսա-

կը բոլոր անհատներն իսպառ կը ոչնչանան շնորհիւ թուչունների։

Հիմայ երեակալենք մեզ մի որեւէ տեսակ միջատների, որոնք նոյնպէս ստիպուած են միջոցներ հնարել իրանց գոյութիւնը պահպանելու համար։ Պայմանաւորուենք այդ տեսակները «մայր տեսակ»։ Ենթադրենք, սական անուանել «մայր տեսակ»։ Ենթադրենք, որ մայր տեսակի մի գոյգ միջատներից առառ մայր տեսակի մի գոյգ միջատներից կան և մի քանի անշացած սերունդների մէջ կան և մի քանի անշատներ, որոնք ընդունակ են մի փոքր աւեհատները անել քան նոյն մայր տեսակի միւս անհատները։

Ո՞ր անհատներն աւելի հաւանականապէս կը կալ ողանան պահպանել իրանց գոյութիւնը։ Կարծեմ դժուար չէ պատասխանել այդ նր։ Կարծեմ դժուար չէ պատասխանել այդ հարցին։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այն անհատները, որոնք ընդունակ են մի փոքր աւելի արագ կերպով շարժուել, աւելի կը կարողանան փախչել իրանց թշնամիներից, ուստի և աւելի հեշտութեամբ կը փըրկուեն վերջիններից քան նրանց այն ընկերները, որոնք չունեն այդ օգտաւէտ առանձնայատկութիւնը։

Ուեեմն միեւնոյն տեսակի սերունդներից ընտրութիւնը կը ջոկի աւելի արագ ընական ընտրութիւնը կը ջոկի աւելի արագ վազող անհատներին, իսկ մնացածները մնծ

Թուով կ'ոչնչանան կերակուր դառնալով ի-
րանց թշնամիների համար:

Կենդանի մնալով, արագ շարժուող մի-
ջատները նոր սերուղներ կարտագրեն, որոնց
մէջ կը լինեն և արագ և ոչ արագ շար-
ժուողներ: Դրանցից էլ բնական ընտրութիւ-
նը կը ջոկի ամենաարագ վագողներին, միւս-
ները կանհետանան չը կարողանալով սերուղներ
արտագրել:

Այդպիսի պրօցեսը բնութեան մէջ կա-
տարւում է դարերի ընթացքում և բազմա-
թիւ սերուղների մէջ: Պարզ է, որ այս գէպ-
քում բնական ընտրութեան հետևանքն այն
կը լինի, որ վերջ ՚ի վերջոյ կառաջանան սաս-
տիկ արագավազ միջատներ: Բայց որովհետեւ
արագ վազելու համար անհրաժեշտ է ունե-
նալ աւելի մեծ և ուժեղ մկանունքներ, ա-
ւելի ամուր ոտներ կամ համեմատաբար աւե-
լի փոքրիկ ու թեթև մարմին, ուստի և նոր
առաջացած արագավազ միջատները կունենան
բաւական խոշոր տարբերութիւն, համեմա-
տելով մայր տեսակի հետ: Այդ ժամանակից
սկսած՝ զիտնականները նրանց բաժանում են՝
նոր՝ տեսակ համարելով արագավազ ու մեծ
ոտներ ունեցող անհատներին:

Յաճախ միւնոյն տեսակից գոյանում են

երկու-երեք նոր տեսակներ: Այդ երեսոյթը
լուսաբանելու համար նորից դառնանք մեր
օրինակին: Ենթագրենք, որ մայր տեսակի սե-
րուղների մէջ կան ոչ միայն արագ շարժու-
ող անհատներ, այլ և այնպիսիները, որոնք
ունեն այն առանձնայատկութիւնը, որ նրան-
ցից անախորժ հոտ է գալիս: Եթէ այդ հոտը
գուրեկան չէ և թուզունների համար, վեր-
ջինները չեն մօտենալ հոտ ունեցող անհատ-
ներին, որոնք ազատ կապրեն ու կը բազմա-
նան*):

Այդպիսով այս գէպքում երկու առանձ-
նայատկութիւններն էլ—արագ շարժուելը և
վատ հոտ ունենալը—լինելով օգտաւէտ կեան-
քի կուտում, բնական ընտրութիւնը նոր ա-
ռաջացող սերուղներից անդադար կը ջոկի՝ մի
կողմից արագ վազող անհատներին, միւս կող-
մից անախորժ հոտ ունեցողներին: Այդ պատ-
ճառով էլ միւնոյն մայր տեսակից կառաջա-
նան երկու տարբեր տեսակներ:

*) Ուղիղ այդ կերպ են առաջացել հարաւային
Ամերիկայում ապրող թիթեռներից մի քանի տե-
սակները, որոնք՝ ունենալով շատ վատ հոտ՝ ազատ
մնում իրանց թշնամիների յարձակումներից: Այդ
թիթեռները պատկանում են Heliconidae ընտանի-
քին:

Մի օրինակ էլ բերեմ բոլսերի կեանքից.
Թռչունները պատուհաս են ոչ միայն
միջատների, այլ և բոլսերի համար, որոնց
սերմերից շատ շատերը զոհ են գնում թրո-
չունների ստամոքսին։ Ենթադրենք, որ մի բոլ-
սից առաջացած սերմերի մէջ պատահմամբ
կան և մի քանի աւելի հաստ թաղանթ ու-
նեցողներ։ Ի՞նչ կը լինի դրա հետևանքը։
Թռչունները կուլ տալով և՛ բարակ և՛ հաստ
թաղանթ ունեցող սերմերին, նրանց ստա-
մոքսը կը կարողանայ մարսել միմիայն առա-
ջիններին, այսինքն քնքոյշ թաղանթ ունե-
ցողներին, իսկ միւսները՝ ունենալով ամուր և
հաստ թաղանթ, անվնաս կերպով կանցնեն
թռչունների մարսողական խողովակի միջով և
ընկնելով հողի մէջ կը զարգանան և կը տան
նոր սերունդներ։ Վերջինների սերմերից բնա-
կան ընտրութիւնը նորից կընտրի ամենաա-
մուր և կոպիտ թաղանթ ունեցողներին, իսկ
քնքոյշ թաղանթաւորները կանհետանան՝ զոհ
գառնալով թռչուններին։

Գործելով այդ ուղղութեամբ դարերի ըն-
թացքում, բնական ընտրութիւնը վերջ ՚ի վեր-
ջոյ կառաջացնի բոլսերի մի նոր տեսակ՝ աւե-
լի կոպիտ և ամուր սերմերով։

Ես առաջ բերալ բոլսերի և կենդանինե-

րի կեանքից միայն մի քանի դէպքեր, այդ
տեսակ դէպքեր բիւրաւոր կան բնութեան
մէջ և ամեն տեղ բնական ընտրութիւնը պահ-
պանում և հովանաւորում է միայն այն ան-
հատներին, որոնք ունեն որևէ օգտաւէտ
առանձնայատկութիւն։

Բնական ընտրութիւնը՝ բացի նոր ու կա-
տարելագործուած տեսակներ առաջացնելուց,
մի հետեանք էլ է ունենում։ շնորհիւ նրան
հանգչում անհետանում են հին տեսակներից
շատերը և այդ հասկանալի է։ Խան, երբ
շնորհիւ բնական ընտրութեան ծագում են
նոր տեսակներ, հներն անկարող են լինում
մրցել նրանց հետ, որովհետեւ նրանք չեն լի-
նում նորերի նման գեղեցիկ կերպով յարմա-
րեցրած շըշապատող պայմաններին։

Դրանով է բացատրւում այն հանգաման-
քը, որ կենդանիների ու բոլսերի տեսակ-
ների թիւը դարերի ընթացքում շատ էլ չէ
մեծանում։ թէւ մի կողմից առաջանում են
շատ նոր տեսակներ, միւս կողմից մեծ թուով
հանգչում ու անհետանում են հին տեսակ-
ները։

Վաղուց ՚ի վէր մարդկանց զարմացնում
էր այն հանգամանքը, որ կենդանիների ու
բոլութիւն կազմուածքն ըստ մեծի մասին լի-
նում է յարմարեցրած շրջապատող պայմաննե-
րին: Ուշադրութիւն դարձրէք ձկների վերայ:
Ի՞նչ հիանալի կերպով յարմարեցրած է նրանց
մարմինը շրջապատող միջավայրում—ջրում—
լողալու համար: Կարծես մէկն երկար ժամա-
նակ մտածել ու խորհել է ձկներին ամենա-
յարմար մարմնի ձև տալու համար:

Այժմ, թողնելով ձկներին, անցնենք հիւ-
սիսում ապրող կենդանիներին: Ի՞նչ մեծ տար-
բերութիւն դրանց և հարաւում ապրող կեն-
դանիների մէջ. հիւսիսային կենդանիների
մարմինը ծածկուած է խիտ ու երկար մա-
զերով, որոնք ծառալում են իբրև տաք
մուշտակ, պաշտպանելով կենդանիներին հիւ-
սային սարսափելի ցրտերից: Միւս կող-
մից աւելի մեզմ կամ տաք կլիմաների կեն-
դանիներն ըստ մեծի մասին չեն ունենում
այդպիսի հաստ բուրդ, որովհետև այդ դէպ-
րում կարիք չը կայ տաք հագնուելու:

Աւելի ևս տարօրինակ է այն հանգաման-
քը, որ կենդանիների գոյնը յաճան յարմա-
րեցրած է լինում շրջապատող միջավայրին:
Դիտեցէք բուսականութիւնից զուրկ քարափ-

ներում ապրող կենդանիներին և դուք կը հա-
մոզուէք, որ նրանց մարմնի գոյնն այնքան
նման է շրջապատող քարերի ու հողի գոյնին,
որ շատ անգամ կարելի է այդ կենդանիների
մօտով անցնել՝ առանց նրանց նկատելու: Հիւ-
սիսային երկիրներում, ուր տարուայ մեծ մա-
սը գետինը ծածկուած է լինում ձիւնով, կեն-
դանիներն ունեն սպիտակ կամ առհասարակ
բաց գոյն, որը նմանեցնում է նրանց մարմինը
շրջապատող ձիւնին:

Ի՞նչպէս բացատրել այս և սրանց նման
բազմաթիւ երկոյթները:

Մինչև Թարվինի վարդապետութեան լոյս
տեսնալը գիտնականները կամ խուսափում էին
պատասխանել այդ հարցին կամ թէ պատաս-
խանում էին ընդհանուր և մութ խօսքերով:
Ասում էին, օրինակ, թէ գա նախախնամու-
թեան իմաստուն կարդադրութիւնն է, որպէս
զի զանազան տեղ ապրող կենդանիների մար-
մինը յարմարեցրած լինի շրջապատող միջա-
վայրին: Դա նախախնամութեան կարդադրու-
թեամբ է, որ մոխրագոյն քարերի վերայ ապ-
թեամբ է, որ մոխրագոյն քարերի վերայ ապ-
թեամբ է, որ մոխրագոյն քարերը նոյնպէս մոխ-
րող միջատներն ու սողունները նոյնպէս մոխ-
րագոյն են լինում. իսկ հիւսիսային կենդա-
նիները հագել են իրանց տաք մուշտակները
նոյնպէս շնորհիւ նախախնամութեան, որպէս

զի չը կոտորուեն մահաբեր ցըրտերից:

Ընթերցողն անշուշտ կը համաձայնուի, որ դա այն բացատրութիւնների թուին է պատկանում, որոնք «ոչինչ չեն բացատրում», ինչպէս ասում է Ներբերտ Սպենսերը: Ուստի մենք էլ կը թողնենք այդ հայեացքը և կանցնենք այն բացատրութեանը, որ տալիս է Դարվինի վարդապետութիւնը վերոիշեալ տարօրինակ երեսոյթներին:

Սկսենք անապատային միջատներից: Նըրանց մարմնի գոյնը լինում է գեղնաւոն կամ մոխրագոյն, ասել է թէ բոլորովին նման շրջապատող աւագին: Հստ Դարվինի՝ առաջ անապատներում, ինչպէս և ուրիշ տեղերում, ապրելիս են եղել ոչ միայն մոխրագոյն, այլ և կանաչ, կարմիր, սև միջատներ, իսկ նրանց կողքին ապրելիս են եղել նրանց անհաշտ թշնամիները—թուչուններն ու մողեսները:

Ո՞ր միջատներն այս պայմանում աւելի շուտ գոհ կը դառնալին թուչուններին ու մողեսներին: Անկասկած նրանք, որոնց նկատելն աւագի վերալ, աւելի հեշտ էր. այսինքն կարմիրները, գեղինները, սերը: Յայտնի բան է, որ մոխրագոյններից էլ կը գոհուէին, բայց միւս կողմից էլ ակներև է, որ մոխրագոյններից շատ շատերն էլ կը փրկուէին՝ աննկա-

տի լինելով իրանց թշնամիների համար. մինչդեռ կանաչ, կարմիր, սև միջատները կը կոտորուէին ահագին թուով:

«Այդպիսով, ասում է Գրանտ Ալենը, կարճ ժամանակից լետոյ անապատում կը մընան միայն ամենամոխրագոյն կամ գեղնաւոն միջատները:

Վերջիններից էլ նրանք, որոնց գոյնն աւելի է զանազանութեամ շրջապատող աւագից, ուրիշներից աւելի շուտ կը նկատուեն թըռչունների կողմից. իսկ նրանք, որոնք իրանց գոյնով ամենից շատ են նմանւում շրջապատող մոխրագոյն միջավայրին, աւելի հաւանականութիւն ունեն կենդանի մնալու և նորանոր սերունդներ տալու: Այդպէս դարերի ընթացքում անապատների բոլոր միջատները կը ստանան աւագի գոյն, որովհետեւ այդ գոյնից բոլոր հեռացողներին անդադար կը ոչընչացնեն նրանց աչքաբաց թշնամիները...»

«Միւս կողմից անապատի թուչուններն ու մողեսներն էլ սկզբում կունենալին սև, կապուտ, կանաչ, սպիտակ գոյներ՝ միւս տեղերի թուչունների ու մողեսների նման: Բայց այդ փալուն գոյներն օգնում էին միջատներին՝ նկատել իրանց թշնամիներին ու փախչել նրանցից... Այդ պատճառով այն թըռ-

չուններն ու մողէսները, որոնց գոյնը պատահմամբ մի փոքր աւելի դեղնաւոն կամ մոխրագոյն էր, աւելի հեշտութեամբ էին կարսղանում գաղտագոյի մօտենալ միջատներին և աւելի մեծ յաջողութեամբ էին բռնում բգեցներին...»

«Այդպիսով փոքր առ փոքր՝ շնորհիւ այն հանգամանքին, որ ամենափայլուն անհատ-ներն անդադար կոտորւում էին, որովհետև չէին կարողանում մըցել դեղնաւոնների կամ մոխրագոյների հետ*)—շնորհիւ այդ հանգա-մանքի անապատի բոլոր թռչուններն ու մո-ղեսներն էլ ստացան նոյն գոյնը, որ և մի-ջատները...»*)

*) Այսինքն՝ որովհետեւ փայլուն թռչուններն ու մողէսները չեն կարողանում մոխրագոյնների նըման հեշտութեամբ անունդ ճարել, ուստի և մեռնում էին մեծ քանակութեամբ:

*) Այսաեղ Գրանտ Ալլենը մի փոքր չափազանց-
նում է. անապատներում, բացի մոխրագոյններից;
Փոքր թուռով լինում են նաև փայլուն գոյն ունեցող
թոշուններ։ Այդ բացատրութեամ է նրանով, որ փայ-
լուն գոյն ունեցողները միենայն ժամանակ ունե-
նում են որևէ օգտաւէտ առանձնայատկութիւն,
որի չնորհիւ նրանք կարողանում են սնունդ ճարել՝
չը նայած իրանց փայլուն գոյնին։


Ուրիշ խօսքերով՝ անազատի կենդանին
ներն աւագի գոյն ստացան այն պատճառով,
որ աւագի գոյն ունենալին օգտաւէտ լինելով,
բնական ընտրութիւնն երկար տարիների ըն-
թացքում ջոկում ու պահպանում էր միայն
նրանց, որոնք ունեին ալի օգտաւէտ առանձ-
նայտակութիւնը, իսկ միւսները (փայլունները)
անհետանում էին, որովհետև չէին կարող
մրցել աւագի գոյն ունեցողների հետ:

Նոյն տեսակէտից հիւսխալին երկիրներում, ուր գետինն ունի սպիտակ գոյն, որով հետեւ համարեա միշտ ծածկուած է լինում ձիւնով, կենդանիների համար աւելի օգտական է սպիտակ գոյն ունենալ: Այդ է պատճառը, որ նոյն երկիրներում բնական ընտրութիւնը ջոկել ու պահպանել է ոչ թէ մոխրագոյններին, այլ սպիտակ գոյն ունեցող անհատներին:

Բաւական է ուշադրութեամբ դիտել ըլլ-
նութիւնը և բիւրաւոր նոյնանման փաստել
կարելի է գտնել: Կանաչ տերևների ու խո-
տերի վերայ ապրող միջատները յաճախ ունե-
նում են բոլորովին կանաչ գոյն: Դժուար է
երեակայել, թէ քանի քանի անհատներ են
փրկւում թռչուններից հենց միայն այն պատ-

ճառով, որ ունեն շրջապատող միջավայրի գոյնը: Ի՞նչ կը լինէր ընդհակառակը կանաչ միջատների գրութիւնը, եթէ նրանց վիճակուած լինէր ապրել ոչ թէ կանաչ բուսերի վերայ, ուր նրանք աննկատելի են, այլ աւազոտ անապատներում: Պատասխանը կարծեմ ակներև է:

տերևի տեղ: Ահա մի պատկեր, որը ներկացացնում է այդ թիթեռին նստած ծառի ճիւղին:



Այդպիսով անհերքելի իրողութիւն է, որ կենդանիներից ոմանք՝ շնորհիւ ընական ընտրութեան՝ ստացել են շրջապատող միջավայրի գոյնը: Այս երեսով թիւն գիտնականները տուել են միսիտիզմ (նմանողութիւն) անունը: Աժմ յայտնի են միմիտիզմի բազմաթիւ օրինակներ, որոնցից շատերը վերին աստիճան զարմանալի են: Կան միջատներ, որոնք զարմանալի նման են շրջապատող զանազան առարկաներին:

Օրինակ, Սումատրա կղզու վերայ ապրում է մի տեսակ թիթեռ՝ կալիման անունով, որը թէ մարմնի ձևով և թէ գոյնով այն աստիճան նման է ծառի տերևին, որ յաճախ նոյն իսկ մարդը սխալում է, ընդունելով նրան

Ընթերցողը գուցել ըստ հաւատայ, որ դա թիթեռ է և ոչ տերև, սակայն եթէ ուշադրութեամբ զննէ այդ կարծեցեալ տերևին, անշուշտ կը նկատէ թիթեռի ոտները, կնճիւնշուշտ կը նկատէ թիթեռի ոտները, կնճիւնշուշտ... Թուչելու ժամանակ էլ այդ տեսակի թիթեռները կենդանի էակների տպաւորութիւն չեն անում, այլ կարծես չոր տերևներ լինեն, որոնց քամին բարձրացրել ու պտտեցնում է օգում:


Մի քանի տեսակ միջատներ սաստիկ նըման են ծառերի բներին կամ ճիւղերին: Ահա

ինչ է ասում պլոֆեսօր Բօբբեցկին Phasmidae ընտանիքին պատկանող միջատների մասին. «Նրանք իրանց երկար ու բարակ՝ փայտիկի նման՝ մարմնով այն աստիճան նման են բոյսերի բներին ու ճիւղերին, որոնց վերայ ապրում են, որ գժուարութեամբ կարող են ջոկուել վերջիններից»:

Հասկանալի բան է, որ միմիտիզմն այս դէպքում ահագին ծառայութիւն է անում վերոլիշեալ միջատներին, սխալեցնելով դրանց թշնամիններին—թռչուններին, որոնք յաճախ նրանց մօտով թռչում են՝ առանց նրանց նրկատելու:



I



II

Աւելի ևս զարմանալի է միմիտիզմը հետեւալ դէպքերում: Նայեցէք այս երկու միջատներին, որոնցից մէկը (I) ներկայացնում է իշամեղուին, իսկ միւսը (II), թէև արտաքինով սաստիկ նման առաջինին, բայց իսկապէս պատ-

կանում է միջատների բոլորովին տարբեր խըմքին. նա թիթեռ է...

Ի՞նչպէս բացատրել այս երկութիւնը: Ի՞նչ է պատճառը, որ այդ թիթեռը՝ համարեա բոլորովին կորցնելով թիթեռներին յատուկ տեսքը՝ ստացել է իշամեղուի կերպարանք: Առաջ քը՝ ստացել է իշամեղուի կերպարանք: Առաջ այսպիսի երկութիւններն անբացատրելի էին համարւում, իսկ հիմայ հեշտ բացատրւում են բնական ընտրութեամբ: Ահա ինչպէս: Իշամեղուն, ինչպէս յալտնի է, ունի մի խալթոց, որի օգնութեամբ նա սաստիկ պատժում է իրան մօտեցող ամեն մի թշնամուն: Այդ պատճառով էլ միջատների սովորական թշնամինները ծանօթ լինելով իշամեղուի խալթոցի հետ՝ փորձ էլ չեն անում նրան մօտենալ: Այնպէս որ իշամեղուները համարեա ազատ են թշնամինների յարձակումներից:

Հասկանալի բան է, որ իշամեղուների մի տեղում ապրող ուրիշ միջատների համետ մարմար սաստիկ օգտաւէտ կը լինէր գոնեա արտաքուստ նմանուել իշամեղուին, որով նրանք յաճախ սխալեցրած կը լինէին իրանց թշնամիններին ու ազատուած նրանցից: Եւ եթէ միներին ու ազատուած նրանցից: Եւ եթէ թիթեռների մի որևէ տեսակում առաջացած թիթեռների մի որևէ տեսակում առաջացած անհատներից մի քանիսը պատահամբ մի անհատներից մի անհանիսը պատահամբ մի փոքր նման լինէին իշամեղուին, դրանք աւելի

Հեշտութեամբ կը խուսափէին թշնամիներից,
առաջ կը գար բնական ընտրութիւնը, որը կը
պահպանէր ու աւելի կը բազմացնէր իշամե-
ղութիւնի կերպարանք ունեցող թիթեռներին։ Ու-
ղիղ արդարէս են առաջացել այն թիթեռները,
որոնք արտաքուստ սաստիկ նման են իշամե-
ղութիւն։ Նոյն կերպ է բացատրում և հետեւեալ
դէպքը։ Մի քանի տեսակ թիթեռների թըր-
թուռներն այն աստիճան նմանութեմ են օձե-
րին, որ թուռները նկատելով նրանց մեծ
սարսափով փախչում են։

Թող չը կարծէ ընթերցողը, թէ վերոլի-
շեալ երեսլիթներում որևէ գեր է կատարում
գիտակցութիւնը։ Ամենեին։ Կանաչ տերևնե-
րի ու խոտերի վերայ առաջանում են կանաչ
միջատներ ոչ այն պատճառով, որ միջատները
գիտեն, որ կանաչ գոյնը նրանց կը փրկէ թըր-
նամիներից։ Անապատների կենդանիները մոխ-
րագոյն են գառել առանց նրանց իմանալու
և նրանցից անկախ պատճառով։ Նոյնպէս և
վերոլիշեալ թիթեռը ստացել է իշամեղութիւնի կերպարանք ոչ այն պատճառով, որ զգում
էր ալդ կերպարանափոխութեան օգտաւէտու-
թիւնը։

Ալստեղ միակ գործող ոլժը բնական ընտ-

բութիւնն է, որը մեկնայաբար ջոկում է օգ-
տաւէտ առանձնալատկութիւն ունեցող ան-
հատներին, իսկ միւսներին լանձնում մա-
հուան։...

Համեմատ աւելի թոյլ ազգեցութիւն կենդանիների վերայ:

Սեռային ընտրութիւնը հետեւանք է այն մրցումի, որ տեղի է ունենում մի սեռի պատկանող անհատների մէջ «սիրային պերիոդում»։ Հանրածանօթ իրողութիւն է, որ յաճախ զանազան կենդանիների որձերի մէջ կոիւ է ծագում էգերի պատճառով և յաղթող հանդիսանում են միմիայն ամենաուժեղ կամ ամենամարդիկ որձերը, որոնք տէր են դառնում էգերին։ Մինչդեռ յաղթուած աւելի թոյլ որձերը ստիպուած են լինում փախչել՝ զրկուելով ամուսիններից։

Դրա հետեւանքն այն է լինում, որ, մինչդեռ թոյլ որձերը յաճախ անկարող են լինում նոր սերունդներ առաջացնել, աւելի ուժեղ որձերն ընդհակառակն ըստ մեծի մասին առաջ են բերում բազմաթիւ սերունդներ։ Մատադ սերնդի որձերը՝ ծագելով ուժեղ որձերից, ժառանգում են գրանց ընտիր յատկութիւնները։ Եթե այդ նոր սերունդների որձերը մեծանում են, նրանց մէջ նոյնպէս սկսում է կոիւ, թոյլերն էլի ստիպուած են լինում փախչել, իսկ ուժեղները՝ տիրելով էգերին, տալիս են նոր սերունդներ, որոնց մէջ որձերն աւելի ևս ընտիր են լինում քան առաջ։

VI.

ՍԵՐԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ործերի եւ էգերի թիւք: Բազմակնութիւն: Ործերի մրցումը կաթնասունների շրջանում: Նոյնը թոշունների շրջանում: Սեռային ընտրութիւնը կատարելագործում է զլիստրապէս մի սեռի անհատներին (ործերին):

Ուշադրութեամբ դիտելով բնութեան երեսովները՝ Դարվինն եկաւ այն եղրակացութեան, որ բնութեան մէջ, բացի բնական ընտառեսակ ընտրութիւնից, գոյութիւն ունի նաև մի երկրորդ ուսյին ընտրութիւն: Մինչդեռ բնական անուանեց սերութիւնը տարածում է իր ազգեցութիւնն ամբողջ բնութեան վերայ և վերջինում առաջանում է ահագին փոփոխութիւններ, սեռաւելի ընտրութիւնն ընդհակառակը գործում է սահմանափակ շրջանում և ունի ան-

Ալդպիսով շնորհիւ այն հանգամնանքի, որ
ամեն սերունդի որձերից ջոկում՝ են ամե-
նաընտիրները, ործերն անդադար կատարե-
լազործում են: Դրանով է բացատրում, որ
կենդանիների բազմաթիւ տեսակներում որձե-
րըն անհամեմատ աւելի մեծ, աւելի ուժեղ են
լինում քան էգերը: Ալդպիսով սեռային ընտ-
րութիւնն ըստ մեծի մասին՝ անփոփոխ թող-
նելով էգերին, կատարելազործում է միայն ա-
րական սեռի անհատներին:

Սակայն ինչ է պատճառը, որ մրցումն
ըստ մեծի մասին ծագում է որձերի մէջ: Ին-
չու էգերը նոյնպէս չեն կուռում ամուսին ընտ-
րելու համար: Բանը նրանում է, որ կենդա-
նիների համարեա ամեն մի տեսակում որձե-
րի թիւը միշտ աւելի մեծ է լինում քան է-
գերինը: Օրինակ, Անգլիայում տասը տարուայ
ընթացքում կատարած դիտողութիւնները ցոյց
տուին, որ շների մի ցեղում ծնուած 100
հատ էգերին գալիս էին 110 հատ ծնուած
որձեր: Նոյնպէս ապացուցուած է, որ աղաւ-
նիների, կաքաւների և առհասարակ շատ ու-
րիշ թուչունների շրջանում որձեր ծնուած են
անհամեմատ աւելի շատ քան էգեր: Նոյն օ-
րէնքը նկատում է և մարդկանց շրջանում.
Վիճակագրական հետազոտութիւնները ցոյց են

տալիս, որ մարդկանց գանազան ցեղերում 100
իզական անհատներին գալիս են 104-ից մին-
չե 115 տղաներ:

Եթէ միւս կողմից մտաբերենք, որ կեն-
դանիների շատ տեսակներում գոյութիւն ու-
նի բազմակնութեան (ալոլիզամիա) սովորու-
թիւնը, այս ժամանակ որձերի մրցումն աւելի
ևս հասկանալի կը դառնայ մեզ համար:

Իրաւ, առանց այն էլ սակաւաթիւ էգե-
րը բաժանւում են որձերի մէջ անհաւասար
կերպով. յաճախ ամեն մի որձը չէ բաւակա-
նանում մի էգով, այլ կազմում է հարեմներ՝
բաղկացած 10, 20 կամ էլ աւելի էգերից:
Շնորհիւ այս հանգամանքի որձերից շատերը
զլկուում են ամուսիններից: Յալտնի բան է,
որ զրկուողները հեշտութեամբ չեն հաշտուում
իրանց զրութեան հետ, նրանք մի քանի ան-
գամ կուներ են սարքում իրանց հակառա-
կորդների հետ՝ ցանկանալով խլել նրանցից
էգերին և միայն այն ժամանակ են թողնում
կոուի դաշտը, երբ համոզւում են, որ հակա-
ռակորդներն անհամեմատ աւելի զօրեղ են
քան իրանք: Ահա մի ալդպիսի կոուի նկարա-
գրութիւն, որ վելցրած է Բրեմի յալտնի գը-
րուածքից և վերաբերում է ազնիւ եղջնորու-
ներին:

«...Հէնց որ էգերի մօտ գտնուող որձ եղ չերուն նկատում է մի ուրիշին, նա խանդո-
տութիւնից ալրուելով իսկոյն պատրաստում
է հանդիպել նրան: Սկսում է մենամարտու-
թիւն, որը յաճախ վերջանում է մէկի կամ
նոյն իսկ երկու հակառակորդների մահով:
Եղիւրները ցածր պահած, կատաղաբար յար-
ձակում են նրանք մէկը միւսի վերայ և զար-
մանալի ճարպկութեամբ աշխատում են հեր-
թով կամ հարուածել հակառակորդներին, կամ
պաշտպանուել նրանից: Հեռո՛ւ, հեռո՛ւ ան-
տառում լսում են եղիւրների հարուածի
ձայները... Յայտնի են դէպքեր, երբ մենա-
մարտութեան ժամանակ եղիւրուների եղիւր-
ներն այնպէս ամուր կերպով խճառել են ի-
րար մէջ, որ այդ պատահմունքի հետևանքն
եղել է երկուսի մահը... Յաճախ մի քանի
ժամուայ ընթացքում մենամարտութեան հե-
տևանքը մնում է անորոշ: Յաղթուածը թող-
երբ բոլորովին ուժասպառ է լինում...» (ՀԱՅՆ
ԺԿՎԹՒԽԵ)

Համարեա նոյն կերպ է կատարում որ-
ձերի մբցումը միւս կաթնասուների շրջանում:

Թուչունների մօտ էգերը նոյնպէս յա-
ճախ պատճառ են դառնում որձերի կոփւնե-
րին: Սակայն պէտք է աւելացնել, որ թուչուն-
ների շրջանում որձերի մբցումը միշտ չէ ար-
տայալաւում այդպէս կոպիտ կերպով: Մի քա-
նի տեսակներում որձերն աշխատում են էգե-
րին ձեռք բերել ոչ կոպիտ ոլժի օգնութեամբ,
այլ աւելի նուրբ միջոցներով:

Վերջիններից ամենազլխաւորներն երգն
ու սիրային ցոյցերն են: Գիտնականների
կարծիքով, թուչունների երգն երկու նպատակ
ունի. նախ նա ծառալում է լոկ զուարձու-
թեան համար և այդ բանում մեզ համոզում
են շատ գիտողութիւններ, որոնք ցոյց են տա-
լիս, որ թուչունները սաստիկ սիրում են եր-
գը և խորին ուշադրութեամբ լսում են լս-
երգերը:

Թուչունների երգի երկրորդ նպատակն է
գրաւել, զմայել էգերին: Այդ պարզ երևում
է նրանից, որ թուչունները սիրում են ամե-
նից շատ երգել «սիրային պերիոդի» ժամանակ,
նից շատ երգել «սիրային պերիոդի» ժամանակ,
նից նրանցից կազմուում են զոյգեր: Երգիչնե-
րը համարեա բացառապէս լինում են որձերը,
ըստ համարեա բացառապէս լինում են որձերը,
որովհետեւ նրանք են ստիպուած մըցելու է-
գերի համար:

Ամեն մի որձ իր երգերով աշխատում է

Գրաւել էգերի ուշադրութիւնը: Ինչպէս կաթ-նասունների մօտ այն որձերն են յաղթում, որոնք ամենից ուժեղ են, այնպէս թռչունների մօտ յաղթութիւնը յաճախ տանում են ամենալաւ երգիչները: Բեխշտեյնը, որը երկար ժամանակ ուսումնասիրել է թռչունների սովորութիւնները, պատմում է, որ դեղձանիկի էգը միշտ ընտրում է այն որձին, որն ամենից լաւ է երգում:

Ուդ է պատճառը, որ, մինչդեռ կաթ-նասունների շրջանում սեռային ընտրութիւնը ջոկում է ամենաուժեղ որձերին՝ թռչունների մօտ յաճախ ջոկում են ամենալաւ երգիչները: Ենորհիւ սեռային ընտրութեան՝ թռչունների որձերից շատերը կատարելագործուել են երգի մէջ:

«Սիրային պերիոդում» թռչունների որշերն ոչ միայն երգում են, այլ և յաճախ շարժումներ են անում է-գերին դուր գալու համար: Սիրային ցոյցերն անելու ժամանակ որձերը չեն մոռանում ցոյց տալ էգերին և իրանց գեղեցկութիւնը:

Ամենքը գիտեն, որ կան շատ թռչուններ զարդարուած գոյնզգոյն հիանալի փերուած են լինում որձերը, մինչդեռ էգերն

ընդհակառակն ունենում են շատ հասարակ փետուրներ: Բազմաթիւ գիտողութիւնները ցոյց են տալիս, որ թռչունների զարդարանքը կապ ունի սիրոյ զգացմունքի հետ: Ահա մի քանի փաստեր:

Պոլիպլեկտրօն թռչունի որձն ունի հիանալի փետուրներ: Եթե նա սկսում է սիրային ցոյցեր անել, ամենից առաջ նա բաց է անում իր սքանչելի թևերը էգի առաջ: Գիտնականների պատմելով՝ պոլիպլեկտրօնը կատարում է այդ գործողութիւնն առանձին աշխատանքով, նա իր փետուրներն այնպէս է դասաւորում, որ էգի առաջ երեան գալ նըրանց բոլոր գեղեցկութիւնը:

Աղաւնու կրծքի փետուրները, ինչպէս յալտնի է, բաւական գեղեցիկ են և «ամենքը, յալտնի բան է, տեսած կը լինեն, թէ որձն յալտնի բան է, տեսած կը լինեն, թէ որձն ինչպէս է փքում իր կուրծքը սիրային ցոյցեր անելու ժամանակ, որպէս զի երեալ այդ փետուրների բոլոր գեղեցկութիւնը»—ասում է Գարվինը:

Մի ուրիշ տեսակ աղաւնի ունի շատ գեղեցիկ թևեր և գրա համեմատ էգի առաջ նա զեցիկ թևեր և գրա համեմատ էգի առաջ նա չէ փքում իր կուրծքը (որը գեղեցիկ չէ), այլ չովհարի նման բաց է անում իր շքեղ թերը:

Յենուելով այդ աեսակ բազմաթիւ փաստերի վերայ՝ Դարվինը ասում է, «ամեն տեսակ զարդարանք, թէ մշտական և թէ ժամանակաւոր, ցոյց է տրում որձերի կողմից կոկետաբար և, ինչպէս երևում է, նա (զարդարանքը) ծառալում է նրա համար, որ գոգոէ, զայլեցնէ կամ հիացնէ էգերին» (Որոշոյ-քույրութեամբ):

Այն հանգամանքը, որ որձերն աշխատում են «կոկետաբար» ցոյց տալ իրանց փետուրներն էգերին, որոնք իրանց կողմից խորին ուշադրութեամբ դիտում են որձերի շքեղ զարդարանքը, այդ հանգամանքը ցոյց է տալիս, որ թոշուններն ընդունակ են զնահատել զարդարանքի գեղեցկութիւնը, նրանք, կը նշանակի, ունեն ճաշակ, էստետիկական զգացմունք:

Սույ առթիւ Դարվինը ասում է. «առհասարակ կարծեմ թոշուններն ամենաէստետիկական կենդանիներն են (բացի լալտնի բան է մարդուց) և նրանց ճաշակը՝ վերաբերեալ գեղեցկութեանը, շատ մօտիկ է մերին: Դրան ապացուց է այն հրճուանքը, որ մեզ պատճառում է թոշունների երգը և այն հանգամանքը, որ մեր՝ թէ լուսաւորուած և թէ

վայրենի՝ կանալքը զարդարում են իրանց գըլուխը թոշունների փետուրներով....»

Սիրելով գեղեցկութիւնը, թոշունների էգերն երկար տարիներ ընտրելիս են եղել իրանց համար՝ իբրև ամուսիններ՝ շքեղ զարդարուած որձերին կամ լաւ երգիչներին: Այդպիսով գլխաւորապէս գեղեցիկ որձերին կամ լաւ երգիչներին է վիճակուած եղել հեշտութեամբ կին գտնել իրանց համար և առաջացնել նոր սերունդներ:

Հասկանալի բան է, որ այս պայմաններում պէտք է առաջանալին որձեր աւելի ու աւելի շքեղ զարդարուած (կամ աւելի լաւ երգող որձեր). մինչդեռ էգերը, որոնցից չէին ընտրուած ամենաէղեցիկները, պէտք է մնալին աւելի անփոփոխ, միակերպ, չը զարդարուած:

Հորդաբար գոյացել են կեղեսի վերևի շերտերը: Այդպիսով քանի աւելի խոր է գոտնում մի որեւէ շերտ, այնքան նա աւելի հին է եւ ընդհակառակը. կեղեսի վերևի շերտերը կազմուել են նոր ժամանակներում:

Նշանաւոր է այն հանգամանքը, որ կեղեսի բոլոր շերտերում պահպանուել են կենդանիների և բոյսերի քարացած դիակները կամ, ինչպէս ասում են երկրաբանները՝ հանածոները (ԱԿՐՈՊԱԵՄՅԱ): Փորելով զանազան շերտեր, գիտնականները հանուել են արգէն մեծ քանակութեամբ ալդ հանածոներից: Հասկանալի է, որ բոլոր շերտերի հանածոները չեն կարող միաժամանակ գոյանալ. Հին (ստոր) շերտերում գտնուող հանածոները գոյացել են շատ հին ժամանակներում ապրող կենդանիներից և բոյսերից, միջին շերտերում պահպանուել են լետակալ ժամանակների օրգանիզմները, իսկ նորագոյն կենդանիների և բոյսերի քարացած դիակները գտնւում են երկրագնատի կեղեսի վերևի (նորագոյն) շերտերում:

Լետագրքիրն այն է, որ երկրագնատի կեղեսի ամենատարին շերտերում բոլորովին չը կան բարձր կազմուածք ունեցող օրգանիզմների հանածոները. ալդտեղ պատահում են

VII.

ՆՈՐ ՓԱՍՏԵՐ ՅՈԳՈՒՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԹԵՌԻԱՅԻ

Երկրաբանական փաստեր: Անատոմիական փաստեր: Անալիտք, օրգաններ:

«Տեսակների ծագումը» գրուածքի վերջում Զ. Դարվինը նորից վերադառնում է Զարգացման թէորիաին: Նա կարծես վախենում է, որ ընթերցողը դեռ տատանուելիս լինի ՚ի դիմաց երկու հակառակ թէորիաների: Այդպատճառով նա նորից առաջ է բերում բազմաթիւ փաստեր տեսակների փոփոխականութիւնն ապացուցանելու համար:

Ամենից առաջ Դարվինն ընթերցողի ուշադրութիւնը դարձնում է երկրաբանական (գէօլոգիական) փաստերի վերայ: Յայտնի է, որ երկրագնտի կեղեսը չէ կազմուել միաժամանակ. նրա ստորին շերտերն կազմուել են բիորատոր տարիներ մեզնից առաջ, լետոյ յա-

միմիայն ամենաստոր և ամենապարզ կենդանիների ու բոլորի հանածոները, մի փոքր աւելի վերև տարածուած են աւելի բարձր կազմուածք ունեցող օրգանիզմներ և առհասարակ քանի աւելի բարձրանանք՝ սկսած կեղեւի ներքին շերտերից՝ այնքան աւելի ու աւելի բարդ եւ ըարծր կազմուածք ունեցող օրգանիզմներին կը հանդիպենք:

Օրինակ, կեղեւի ստորին շերտերում ամենեին չըկան ողնաւոր կենդանիներ, նրանց տեղը բռնում են մանր ստոր օրգանիզմներ. Եթէ այդ հին շերտերից անցնենք աւելի բարձր դանուող շերտերին, նրանցում կը գտնենք, բացի ստոր օրգանիզմներից, նաև ողնաւոր կենդանիներից ամենաստոր կազմուածք ունեցողներին՝ այն է ձկներին. իսկ սողունները, թըռչունները և կաթնասունները՝ այսինքն բարձր ողնաւորները՝ բոլորին բացակալում են այդ շերտերում։ Եթէ այդ վերջիններից էլ աւելի բարձրանանք, կեղեւի շերտերում, բացի ձկներից, կը գտնենք նաև սողուններին ու թըռչուններին։ Վերջապէս եթէ հետազօտենք երկրագնտի ամենավերևսի շերտերը, դրանցում, բացի ձկներից, սողուններից և թոչուններից, կը գտնենք արդէն կաթնասուններին և մարդուն։

Այժմ տեսնենք, թէ ինչ են ցորց տալիս այդ փաստերը։ Մենք տեսանք, որ կեղեւի ամենաստոր շերտերում լինում են միմիայն ամենապարզ և ամենաստոր օրգանիզմներ, իսկ քիչ թէ շատ բարձր կազմուածք ունեցողները բոլորովին բացակալ են լինում։ Միւս կողմից մենք արդէն գիտենք, որ կեղեւի ամենաստոր շերտերը կազմուել են բիւրաւոր տարիներ մեզնից առաջ։ Այստեղից պարզ երևում է, որ ամենահին ժամանակներում երկրագնտի վերայ գոյութիւն են ունեցել միմիայն ամենաստոր արարածները։ Յետակալ ժամանակներում առաջ են եկել աւելի բարձր կազմուածք ունեցող կենդանիներ ու բոլոր, որոնց հետքերը մինչև այժմ մնացել են կեղեւի միջին շերտերում։ Վերջապէս ամենաբարձր կազմուածք ունեցող կենդանիներն ու բոլորն երեան են եկել միայն մօտիկ ժամանակներում։

Թող ընթերցողն ինքը դատէ, թէ այդ երկրաբանական փաստերը որ թէորիալին են աւելի համաձայն։ Զարգացման թէորիալի հակառակորդները պնդում էին, որ բոլոր օրգանիզմները, թէ ստոր և թէ բարձր կազմուածք ունեցողները, առաջացել են միաժամանակ և

անփոփոխ հասել մեր ժամանակներին: Մինչդեռ երկրաբանական փաստերը ցոյց են տալիս դրա հակառակը և բոլորովին համաձայն են զարգացման թէորիալի հետ: Չէ որ այդ վերջին ուսմունքի պաշտպանողներն էլ են ասում, որ հին ժամանակներում գոյութիւն են ունեցել միայն շատ ստոր օրգանիզմներ, որոնցից լեռտակայ ժամանակներում գոյացել են աւելի բարձր կազմուածք ունեցող տեսակներ:

Բացի երկրաբանական փաստերից կան էլլի շատ ուրիշները, որոնք բոլորովին անբացառի են «տեսակների անփոփոխականութեան» ուսմունքի տեսակէտից և միևնույն ժամանակ լով: Օրինակ, եթէ ընթերցողը տեսնի ու համատի մարդու, կովի, ձիու, շան, հաւի կը նութիւնից, որը նկատում է այդքան տարբեր կենդանիների կմախքների մէջ: Այդ կենդանիների կմախքները նման են իրար ոչ միմարեա ամեն մի ոսկորի կմախքի համանմանը կայ բոլոր միւս կմախքներում:

«Ի՞նչ կարող է լինել աւելի հետաքրքիր քան այն հանգամանքը, որ մարդու ձեռքը, որը նշանակուած է բռնելու համար, խլուրդի (քրոտ) թաթը, որը նշանակուած է փորելու համար, ձիու ոտը, ծովակովի թաթը և չվղչի (լեւայա մայա) թեր—բոլորն էլ կազմուած են միակերպ և պարունակում են միւնոյն ոսկորները միակերպ դասաւորած»—ասում է Դարվինը «Տեսակների ծագումը» գլուխուածքում:

Վերոյիշեալ կենդանիները սաստիկ նման են իրար ոչ միայն կմախքներով, այլ և մը կանունքներով, մարսողական կամ միւս ներքին օրգանների կազմուածքով: Նոյնը կարելի է ասել նրանց ուղեղի և առհասարակ բոլոր շզային սիստեմի մասին: Նմանութիւնն այն ջզային կատարեալ է, որ այդքան տարբեր կենդանիների մարմինների համանման մասերին տալիս են միևնույն անունները: Օրինակ, ով ուսումնասիրել է միայն մարդու կմախքը, նա արդէն գիտէ նաև կովի, կապիկի, շան, կատուի կմախքների կազմութիւնը, թէև այդ վերջիններին տեսած էլ չը լինի:

Աւելի ևս նմանութիւն կը գտնենք այդ կենդանիների մէջ, եթէ համեմատենք նըրանց սաղմերն իրար հետ:

«Կաթնասունների, թռչունների, մողեսների, օձերի սաղմերն ամենավաղ հասակում չափազանց նման են իրար՝ թէ ընդհանրապէս և թէ իրանց մասերի զարգացման ձևով։ Եւ նմանութիւնն այն աստիճան մեծ է, որ մենք յոժախ կարող ենք նրանց զանազանել միայն մեծութեամբ»—ասում է յալտնի գիտնական Փօն-Բէրը։ Նոյն հեղինակը պատմում է, որ իր մօտ գտնուող անօթին (որի մէջ կան երկու փոքրիկ սաղմեր) նա մոռացել է մակագեր (հաճութեամբ) կայցնել նրանց ծագման մասին և այժմ նրա համար անհնարին է ասել, թէ դրանք որ կենդանիների սաղմեր են։ Յետոյ Փօն-Բէրն աւելացնում է. «մողէսների և կաթնասունների ոտները, թռչունների ոտներն ու թերեր նոյնպէս և մարգու ձեռքերն ու ոտները—բոլորն էլ սկզբում ունենում են միւնոյն հիմնական ձևը»։

Ի՞նչպէս բացատրել այդ տարօրինակ երևոյթները։ Ի՞նչ է նշանակում, որ այդքան տարբեր կենդանիներն ունեն միակերպ կազմուած մարմին։ Ի՞նչ է նշանակում, որ նրանց սաղմերն այնքան նման են իրար, որ նրանց զանազանել անգամ իրարից դժուար է։ Եթէ միրաւի այդ կենդանիները ստեղծուել են առանձին առանձին և եթէ նրանց մէջ ոչինչ

- | | | |
|--|---|----|
| 24 Նոյնը ուսուցիչների համար . . . | 1 | 75 |
| 25 Սոկրատէս, թարգ. օր. Թ. Ստեփոյեան . . . | — | 10 |
| 26 Պատմութիւն Հայոց, Պալատանեանի . . . | 1 | 50 |
| 27 Ուզեցոյց գործնական շերամապահութեան,
Կ. Մելիք-Շահնազարեանցի . . . | — | 40 |
| 28 Ժամանակագրութ. Հայոց Յ. Դարդելի . . . | 1 | 25 |
| 29 Վարդ-Մէսլի, Սպիրի, թարգ. Ի. Յ. . . | — | 10 |
| 30 Նալ և Դամայեանցի, Ֆ. Շմիդտի . . . | — | 20 |
| 31 Աստուած գիտէ արգարն ու մեղաւորը
Կոմս Լ. Տօրտոյ, թարգ. Մ. Ա. . . | — | 7 |
| 32 Հաւատարիմ Սավիտրին, Վայլոնների . . . | — | 10 |
| 33 Լինհարդ և Գերարուդ, Պեստալոցցի . . . | — | 25 |
| 34 Յաւելուած ի գիրս պատմութեան Ասոդ-
կան Նորայր Բիւզանդացի . . . | — | 20 |
| 35 Նաւի փոքրաւորը, Մ. Ռոգենհայնի . . . | — | 15 |
| 36 Աւոնց Յովսէփ, Ե. Սպիրի թարգ. Ի. Յ. . . | — | 15 |
| 37 Մեծապատիւ Մուրացկ. Յ. Պարոննեանի . . . | — | 40 |
| 38 Աղգային ջոջեր, Յ. Պարոննեանի . . . | 1 | — |
| 39 Բը-ա-բա, Է. Օժէզկոյի . . . | — | 15 |
| 40 Շնիկ, Կուլիկովայի . . . | — | 5 |
| 41 Շնեղրինի երեք զրոյցներ . . . | — | 10 |
| 42 Տարասիկոնցի Տարտարէնը, Դօդէի . . . | — | 40 |
| 43 Օրէանի Կոյսը, Օստրոգորակու . . . | — | 25 |
| 44 Արարատսկու ինքնակենսագրութիւնը . . . | — | 75 |
| 45 Գաղափարական քանանայ, Պատապենկո . . . | — | 75 |
| 46 Ընտանիքի յոյսը, Աննեննկայա . . . | — | 10 |
| 47 Հոսոսսի ձեռատեարը, Յ. Պարոննեանի . . . | 1 | — |
| 48 Քիմիա Բոսկոյի, թարգ. Ա. Մելիք-Ալլահնի . . . | — | 40 |
| 49 Շնեղրինի երեք վետիկ, թ. Մ. Ղազարեանի . . . | — | 15 |
| 50 Սամայ ծուեր, Գարեղին սարկաւագ . . . | — | 50 |
| 51 Զաւակսքի բուրմունք, Ե. Լալայեանցի . . . | — | 25 |
| 52 Գատտիարակութիւն, Սպիհների . . . | 1 | — |
| 53 Մըռուան, Ի. Շմիդտ Ֆ. Ա. Քալանթար . . . | — | 20 |
| 54 Խան-Միրան, գրեց Սէլյան . . . | — | 20 |
| 55 Տարաս-Բուլբա, Ն. Պոգոյի . . . | — | 40 |
| 56 Փշանքներ, Գ. սարկ, Յովսեփեանի . . . | — | 50 |

57	Երկու քոյր, Պ.	Աղայեանցի	.	.	— 25
58	Դրախտի բնուանիք, գլեց Խըլմեան Հայրիկ				— 60
59	Սիրաք և Սամուէլ, գլեց Խըլմեան Հայրիկ				— 50
60	Փորձանքների բժշկաբան, Բրօքերի	.	.	— 20	
61	Մակրէթ, Նէրսպիրի թարգ. Ս. Մալիսասեան				— 50
62	Պատուօր Ս. Բալաղեանի և Ա. Քալանթարի				— 50
63	Խօկրա, բժ. Վ. Արծրունու	.	.	— 5	
64	Խարազի տղայ. Ս. Քամալեանի	.	.	— 40	
65	Հանրամատչելի բնախօսութիւն, Վ. Լուն-կեվիչ, թարգմ. Կ. Գիւլնարաբեանի	.	.	— 1	
66	Փարաւոնի աղջկլը, Երեսի թարգմ. Պ.	Շահբուդաղեանի	.	.	— 80
67	Խուն-խոր, Յ. Ղազարեանցի	.	.	— 60	
68	Ելուջա, վեպ, թարգմ. Տ. Փիրումեանի.	.	.	— 45	
69	Զորբորդ մող, Վան-Դիէլի	.	.	— 5	
70	Դրախտի բնուանիք, գլեց Խըլմեան Հայրիկ	.	.	— 50	
71	Սիրաք և Սամուէլ, գլեց Խըլմեան Հայրիկ	.	.	— 50	
72	Զրոյցներ հողի մասին, Ս. Բալաղեանի	.	.	— 15	
73	Աստղաբաշխութիւն, Ֆլամարիոնի	.	.	— 1	
74	Մանուկների հոգաստութիւնը, Ե. Ա. Պօ-	կրօփմկց, թարգ. բժ. Պ. Զաքարեան.	.	.	— 20
75	Մուկոչի համելը, Պ. Նեղմաննօվ.	.	.	— 15	
76	Երկու հեքեաթ, Կարմեն Սիլվայի.	.	.	— 10	
77	Կովկասի գերին, Լ. Տօլստօի թարգմ. Պ. Պ.	.	.	— 20	
78	Անձոռնի բաղիկը, Անդերսէն	.	.	— 5	
79	Վէպիկներ Շիրկանդաղէի.	.	.	— 40	
80	Դարվինիզմ, Ս. Բալաղեանի	.	.	— 40	

ԳԻՒՆ է 40 ԿՈՊ.

ազգակցական կապ չը կալ, ինչպէս ասում են զարգացման թէորիայի հակառակորդները, ապա թնչպէս բացատրել, որ նրանց ոտներն ու թաթերը «պարունակում են միւնոյն կորները միակերպ դասաւորած»:

Զարգացման թէորիայի հակառակորդներն անզոր են պատասխանելու այդ հարցերին, մինչդեռ դրանք զարմանալի հեշտութեամբ բացատրում են էվոլյուցիոնիստների կողմից: Վերջինների կարծիքով՝ կովը, կապիկը, շունը, ձին, մարդը, կատուն, թռչունները չեն ստեղծուել առանձին առանձին, այլ ծագել են մի ընդհանուր նախահայրից, ուրեմն նըրանք կապուած են մօտիկ ազգակցական կապերով: Իբրև մի ընդհանուր նախահայրից առաջացած կենդանիներ, նրանք՝ պարզ բան է, պէտք է ունենան իրանց կազմուածքում համանման գծեր, որոնց նրանք ստացել են ժառանգաբար իրանց նախահայրերից:

Կան շատ կենդանիներ, որոնց մարմինը, բացի անհրաժեշտ օրգաններից, պարունակում է նաև մի քանի բոլորովին անպէտք օրգան-

ներ: Ա.Հայ մի քանի օրինակներ: Խլուրդն ապ-
րում է գետնի մէջ՝ բոլորովին մութը բնե-
րում, ուր լայտնի բան է, աչքեր ունենալու
կարիք չը կալ. և եթէ դիտէք խլուրդին, կը
կարծէք, թէ նա աչքեր չունի. սակայն դա
սխալ է, որովհետեւ խլուրդն իսկապէս ունի
երկու շատ փոքրիկ աչքեր, որոնք բոլորովին
ծածկուած են բրդով, ուստի և ոչինչ օգուտ
չեն կարող տալ խլուրդին: Այդ վերջինն եթէ
նոյն իսկ ցանկանար օգտուել իր աչքերով,
անկարող կը լինէր իր նպատակին հասնել, ո-
րովհետեւ, ինչպէս ասեցի, նրա աչքերը բոլո-
րովին ծածկուած են լինում:

Ապտերիքս կոչուած թռչունն ունի այն-
պիսի չնչին թևեր, որ նրանց օգնութեամբ
բոլորովին անհնարին է թռչել. ապտերիքսը
երբէք չի էլ թռչում: Պարզ է, որ ապտերիք-
սի թևերն անպէտք են նրա համար: Թէ
այդպիսի օրինակներ շատ կան, բայց բաւա-
կանանք առաջ բերածներով և տեսնենք,
թէ նրանք ինչ են ցոյց տալիս:

Ի՞նչ է պատճառը, որ խլուրդն ունենում
է աչքեր, թէև երբէք չէ օգտում նրանցով
կամ ինչպէս բացատրել այն հանգամանքը,
որ ապտերիքսն օժառւած է լինում թևերով,
որոնցով օգտուել անկարող է: Այստեղ ընու-

թիւնը կարծես սխալուած լինի՝ տալով ալդ-
կենդանիներին բոլորովին անպէտքական օր-
գաններ:

Սակայն տեսէք ինչպէս հեշտութեամբ
բացատրւում են այդ տարօրինակ երևոյթնե-
րը զարդացման թէորիալի օգնութեամբ: Խը-
լուրդը, ըստ այդ փարզապետութեան՝ միւս
ողնաւորների հետ միասին ծագել է մի ընդ-
հանուր նախահայրից, որից և ստացել է ժա-
ռանգաբար՝ իր միւս ընկերակիցների նման՝ եր-
կու աչքեր: Առաջներում նա օգտուելիս է
եղել իր աչքերով, որովհետեւ միւս ողնաւոր-
ների նման ապրելիս է եղել լոյս աշխարհում
և ոչ գետնի մէջ: Բայց յետոյ նրա կեանքի
պայմանները փոխուել են և նա դարձել է
ստորերկրեալ կենդանի: Այդ ժամանակից
սկսած խլուրդը դադարել է գործ ածել իր
աչքերը, որոնք՝ շնորհիւ իրանց անգործու-
նէութեան, ստիպուած էին նուագել և փոք-
րանալ:

Դա մի ընդհանուր օրէնք է՝ որ ամեն
մի օրգան, երբ այլ եւս գործ չէ ածում, չէ
վարժում, կամաց կամաց նուազում է եւ
վերջապէս բոլորովին անհետանում:

Այժմ անցնենք ապտերիքսին: Ունենա-

լով բոլոր թռչունների հետ մի ընդհանուր ծագում՝ ապտերիքսն առաջներում ունեցել է մեծ թևեր, որոնց օգնութեամբ կարողանուած էր թռչել: Սակայն աւելի ուշ այդ թռչունի կեանքի պայմանները փոխուեցին. նա սկսեց աւելի ու աւելի քիչ թռչել, ուրեմն և աւելի սակաւ գործ ածել իր թևերը, որոնք վերև բերած օրէնքին համաձայն ստիպուեցան նուազել, փոքրանալ և ստացան իրանց այժմեան տեսքը:

Այդպիսով բոլոր «անպէտք» օրգաններն առաջներում պէտքական են եղել, յետոյ կեանքի պայմանները փոխուելով, գարձել են աւելորդ, մատնուել են անգործունէութեան, որ և քարքարել, նուազեցը է նրանց:

Ակնարկ ձգելով բնութեան մի շարք երկոյթների վերալ (երկրաբանական և անատոմիական փաստեր, անպէտք օրգաններ) մենք տեսանք, որ դրանք բոլորն էլ համաձայն են զարգացման թէորիալի ոգու հետ և հեշտ բացարւում են նրանով. մինչդեռ միևնույն երկոյթները բոլորովին անբացարելի են զարգացման թէորիալի հակառակորդների տեսակէտից: Պարզ է ուրեմն, որ մենք պէտք է ընդունենք և ղեկավարուենք զարգացման թէորիալով, որովհետեւ նա միակ ուսմունքն

է, որ համաձայն է բնութեան բազմատեսակ երեսովթների հետ, ուստի և ամենից մօտիկ է ճշմարտութեանը:

III

ԺԱՌԱԴՐԱՅ ՇԵՄՓՈՓՈՎ

շացել են շատ ստոր էակներից։ Բիւրաւոր տարիներ մեզնից առաջ, ասում են էվոլուցիոնիստները, երկրագնատի վերայ գոյութիւն են ունեցել երկու—երեք տեսակ վերին առածան ստոր կազմուածք ունեցող տրարածներ, որոնց սերունդներն անդադար առաջադիմելով և զարգանալով լետակայ ժամանակներում արտադրել են օրգանիզմների շատ տեսակներ, որոնք ունեն անհամեմատ աւելի բարձր կազմուածք քան նախնական էակները։

Այս վարդապետութիւնն ունէր մի շարք անուանի հակառակորդներ, որոնցից ամենագլուխները Լիննէն ու Փօրժ Կիւվիէն էին։ Պրանք ոչինչ առաջադիմութիւն չէին տեսնում բնութեան մէջ։ Նրանց կարծիքով աշխարհիս գոյանալուց լետոյ ստեղծուել են կատուի, աղուէսի, շան և միւս կենդանիների կամ բոլսերի տեսակները, որոնք անփոփոխաւուել են մինչև մեր ժամանակները։

Էվոլյուցիոնիստների ու հակաէվոլյուցիոնիստների մէջ ծագած վէճը դեռ շարունակում էր, երբ երեան եկաւ Զարլզ Պարվինը։ Նա միացաւ էվոլյուցիոնիստների հետ և բազմաթիւ փաստերով ապացուցեց զարգացման թէորիայի ճշտութիւնը։ Ահա այդ փաստերից մի քանիսները։

VIII.

ԱՆՓՈՓՈՒՄԸ ՎԵՐՋԱԲԱՆ

Այժմ ամփոփենք մեր ասածները Պարվինի գործունէութեան մասին։ Զարլզ Պարվինը կեանքում կատարեց շատ գործեր, որոնցից մանաւանդ երկուսն ունեցան ահազին հետեւանքներ։ Այդ գործերից մէկը զարգացնելն էր, միւսը «բնական ընտրութիւն» ասուած գիւտը։

Դեռ մինչև Զարլզ Պարվինի երեան գալ կալին զարգացման թէորիայի պաշտպաններ—Լամարկը, Սենտ Իլէրը, Գեօթէն, Երազմ Պարվինը, որոնք ճիշտ կերպով ըմբռնել ու կէտերը։ Դրանք պնդում էին, որ երկրագնատիս վերայ այժմ գոյութիւն ունեցող կենդանիների ու բոլսերի բազմաթիւ տեսակներն առա-

I. Եթէ ծանօթանանք ընտանի կենդանիների ու բոյսերի անցեալի հետ, մենք կը համոզուենք, որ նրանք ամենեին չեն մնում անփոփոխ, այլ միշտ փոփոխւում են ու արտադրում նորանոր ցեղեր: Օրինակ, վալրենի աղաւնին ժամանակի ընթացքում արտադրել է մի շարք իրարից սաստիկ տարբերուղ ցեղեր—«տաճկաց աղաւնին», «անգլիական փրքուածը», «կարճաերես տուրման» և այլն:

Այս երկութները հակառակ են Լիննէլի և Կիւվիէլի հալեացքներին և միևնուն ժամանակ բոլորովին համաձայն զարգացման թէորիայի հետ:

II. Կիւվիէն և Լիննէլը պնդում էին, որ այժմեան բոլոր օրգանիզմները, թէ բարձր ցել են միաժամանակ. մինչդեռ երկրաբանուամենից առաջ գոյութիւն են ունեցել միայն ստոր կազմուածք ունեցող էակներ, յետոյ յարդաբար առաջացել են աւելի ու աւելի բեմն երկրաբանական փաստերը, համաձայն հակառակ են Կիւվիէլի և Լիննէլի հալեացք-

III. Եթէ համեմատենք զանազան կենդանիների կմախքները, կը նկատենք, որ նըրանց մէջ մեծ նմանութիւն կալ. նոյնը նկատում է նաև կենդանիների ջղային սիստեմի, մարսողական խողովակի և միւս օրգանների վերաբերմամբ: Մի խօսքով յաճախ շատ տարբեր կենդանիներ ունենում են միակերպ կազմուած մարմիններ և այդ պարզ ապացուց է, որ այդ կենդանիներն ունեցել են մի ընդհանուր նախահայր, որից և ժառանգել են կազմուածքի համանման գծեր: Այդպիսով անատոմիական փաստերն էլ մի կողմից ապացուցանում են զարգացման թէորիայի ճշտութիւնը, միւս կողմից—հերքում հակառակ ուսմունքը:

Անցնենք Զ. Դարվինի միւս մեծ գործին, այն է՝ բնական ընտրութեանը կամ բուն դարվինիզմին: Դարվինին աշխատեց գտնել այն մեծ իրողութիւնը, որ բնութեան մէջ գոյութիւն ունի մի տեսակ ընտրութիւն ամենակատարեալ անհատների: Ինչպէս մարդն անդադար ընտրելով իր կենդանիներից և բոյսերից ամենալաւ անհատներին և նրանց միայն բազմացնելով, պատճառ է դառել ընտանի կենդանիների ու բոյսերի անընդհատ առա-

ջադիմութեանը, այնպէս էլ բնութիւնը՝ սկսած ամենահին ժամանակներից ընտրելիս է եղել և շարունակում է ընտրել գոյութիւն ունեցող օրգանիզմներից ամենակատարեալ անհատներին ոչչացնելով միւնոյն ժամանակ թուլերին:

Ուրեմն բնական ընտրութիւնն է այն գործօնը, որը ստիպել է և ստիպում է օրգանիզմներին անդադար առաջադիմել ու զարդարեալ: Բնական ընտրութիւնն օրգանիզմների անդադար զարգացման ու առաջադիմութեան պատճառն է:

Սակայն պէտք է լաւ լիշել այն հանգամանքը, որ բնութիւնն ընտրութիւնն է անում բոլորովին անգիտակցաբար, մեքենալաբար. բնական ընտրութիւնն ուղղակի հետեանք է գոյութեան կոռուի, իսկ այդ վերջինը հետեանք է օրգանիզմների սաստիկ բազմանալու: Թէ կենդանիները և թէ բոլուրը բազմանում են վերին աստիճան արագ կերպով, այնպէս որ գոյութիւն ունեցող սնունդն ու տեղը չեն կարողանում բաւականութիւն տալ առաջացած բոլոր սերունդներին: Ապրել ցանկացողներ միշտ անչափ շատ են լինում; իսկ սը-նունդ ու տեղ քիչ: Այստեղից առաջանում է գոյութեան կոիւր. ամեն մի անհատ աշ-

խատում է ուրիշների տեղը բռնել, ուրիշն սնունդը խլել կամ ընկերներին խորտակել երգոյութիւնն ապահովելու համար: Այդ կոիւր համաշխարհային է, սոսկալի է. ով ուժեղ է, ով խելօք է, ով ճարպիկ է—նա է յաղթող հանդիսանում: Միայն ընտիր անհատներն են կենդանի մնում, հիմնելով իրանց բաղդաւորութիւնն իրանց անթիւ ընկերակիցների դիակների վերայ:

Այս ընդհանուր, համաշխարհային կոիւր միշտ սարսափեցընել է շատ բարեսիրտ մարդկանց և այդ սարսափը բոլորովին բնական է. սակայն չը պէտք է մոռանալ, որ այդ ահռութեան կոիւր սնունդի նաև մի վերին աստիճան լաւ յատկութիւն: Չէ որ շնորհիւ այդ ընդհանուր մրցման ու կոռուին է առաջ գալիս բընութեան մէջ առաջադիմութիւնը և զարգացումը: Շնորհիւ գոյութեան կոռուին առաջ է գալիս բնական ընտրութիւնը, որի ագգեցութեան տակ գոյանում են աւելի ընտիր տեսակներ:

«Այդպիսով, ասում է Զարլզ Դարվինը, մշտնջենաւոր կոռուից, սովից և կոտորումից ուղղակի առաջանում է ամենաերևելի երկոյթը, այն է՝ ամենակատարեալ արարածների ծագումը...» (Տեսակների ծագումը):

Սեռային ընտրութիւնը ծառայում է երբե լրացումն բնական ընտրութեան։ Կենդանիների բազմաթիւ տեսակներում էգերը, համեմատած որձերի հետ, սակաւաթիւ լինելով, որձերը ստիպուած են լինում մրցել իրար հետ էգերի պատճառով։ Մրցումն երբեմն կատարում է կոռուի ձեռվ և այդ գեղքում միայն ամենաուժեղներն են կարողանում իրանց համար էգեր գտնել։ Երբեմն էլ որձերը մրցում են իրար հետ երգով և զարգարանքներով, իսկ լաղթողները լինում են ամենագեղցիկները կամ ամենալաւ երգիչները։ Այդ պատճառով էլ սեռային ընտրութիւնը ջոկում է երբեմն ամենաուժեղ, երբեմն էլ ամենագեղցիկ որձերին։ Եւ որովհետև գլխաւորապէս դրանք են կարողանում սերունդներ առաջացնել, ուստի որձերը ժամանակի ընտում են, մինչդեռ էգերը մնում են անփոփոխ։

Նոյն իսկ մարդը, որը կենդանի արարածների մէջ ամենահրաշալին, ամենակատարեալն է, արդիւնք է ընութեան մէջ գոյութիւն ունեցող ընդհանուր առաջադիմութեան։ Ինչ-

քան էլ որ մարդը մեզ հրաշալի թուայ՝ միւս կենդանիների հետ համեմատած, այնուամենալիւ նա բացառութիւն չէ կազմում ընդհանուր օրէնքից։ Իր մարմնի կազմուածքով, մտաւոր ընդունակութիւններով և ծագումով մարդը սերտ կերպով կապուած է միւս կենդանիների հետ, ուստի զրանց հետ միասին ենթարկում է ընդհանուր բնական օրէնքներին։ Այստեղից հասկանալի է, թէ ինչու դարվինիզմը քանի գնում այնքան աւելի է լայնացնում իր ուսումնասիրութեան շրջանը։ Այժմ դարվինիզմը չէ բաւականանում կենդանիների ու բոյսերի կեանքին վերաբերող երեսովների մեկնութեամբ, այլ սկսել է բացարութիւններ տալ նաև մարդկալին կեանքի բարդ երեսովներին։ Այժմ դարվինիզմի հետ ծանօթանալու հարկ են համարում ոչ միայն բնագէտները, այլ և հոգեբանները, իրաւաբանները, փիլիսոփանները։

Այս առթիւ Գրանտ Ալենը հետևեալ խօսքերն է ասում։

«Իսկական դարվինիզմի ազդեցութիւնն օրէցօր տարածում է աւելի լայն և աւելի խոր կերպով։ Մի խումբ գիտնականներ զեխոր կերպով։ Մի խումբ գիտնականներ զեխոր կավարում են նրանով (դարվինիզմով) իրանց ֆիզիոգիական, անատոմիական և սաղմագի-

տական հետազօտութիւնները կատարելու ժամանակ: Միւսներն աշխատում են յարմարեցնել նրան հոգեբանութեանը՝ ուսումնասիրելով կենդանիների խելքն ու ընազդումը և նրա (դարվինիզմի) օգնութեամբ վճռելով մարդկային ոգուն ու զգացմունքներին վերաբերեալ ամենադժուար հարցերը: Մի փիլիսոփայ յարմարեցնում է դարվինիզմը բարոյագիտութեան հարցերին, միւսը սոցիոլոգիայի և քաղաքատնտեսութեան հարցերին: Մի տեղ յարմարեցնում են նրա սկզբունքներն էստետիկային, միւս տեղ տրամաբաննութեանը... Աեզուագիտութիւնը նոր լրաց է ստանում մեծ դարվինեան լապտերից: Մանկավարժութեան վերայ սկսում է աւելի ու աւելի ազդել Դարվինի տուած զարկը: Մեր բոլոր մտքերը յեղափոխուած են (շնորհիւ դարվինիզմի): Նոյն մտքերը հեղեղեցին ողջ աշխարհը, իրանց հսկայական թարմ ոլժով կենդանութիւն տալով չոր ու ցամաք գիտութիւններին, գեղարուեստին և փիլիսոփայութեանը...»

ՎԵՐՁ



2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0069959

5677



ETOS

